

«Մէկը քոյորին էւ քոյորը մէկուն»

41 ԵՐԶԱՆ **101** ՄԱՍՆԱՃԻՂ **11** ՄԻԱԴՈՐ

9 ԵՐԶԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ (80 ՄԱՍՆԱՃԻՂ-ՄԻԱԴՈՐ)

32 ՄԵԿՈՒՄԻ (ՄԱՍՆԱՃԻՂ-ՄԻԱԴՈՐ)

26 ԵՐԿԻՐ

435 ԹԻՒ **ՄԱՐԶԻԿ**
հսլս

50 ՏԱՐԻՆԵՐ, ՈՐՈՆՔ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՀԱՐՍՏԱՑՈՒՑԻՆ
ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 100 ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՄԲ



ԱՄԱՆՈՐԵԱՆ ԿԱԽԱՐԴԱՆՔ՝ ԱՐՑԱԽՑԻ ԵՐԵԽԱՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Յովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի «Արցախ հիմնադրամ»-ին, կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Արցախի մասնաճիւղի վարչութեան, Ուրբաթ, 27 Դեկտեմբեր 2024-ին տեղի ունեցաւ տօնական օր՝ անսահման ուրախութեամբ, զուարճանքներով եւ կախարդական մթնոլորտով:

Տօնական օրուան իրենց մասնակցութիւնը բերին մասնաճիւղին սկանաւորական կազմը եւ գայլիկներ՝ Երեւանէն, Արմաւիրէն, Մասիսէն ու Արովեանէն: Մասնակիցները իրենց հետ բերած էին մէկական արցախցի երեխայ:

Երեխաներուն ընկերացան պատասխանատուներ՝ Արովեանէն, Մասիսէն եւ Արմաւիրէն: Սկաւորակներ



պատրաստեցին Ամանորի նուէրները, իսկ ծնողական խորհուրդը պատրաստեց ուտելիքները:

Երեխաները Երեւան հասնելով հաւաքուեցան Երեւանի երգի պետական թատրոն եւ միասին դիտեցին «Ամանորեայ կողոպուտը» երաժշտական ներկայացումը:

Ներկայացումի աւարտէն ետք, բոլորը ուղղուեցան մայրաքաղաքի հրապարակ, ուր համտեսեցին ծնողական խորհուրդին համեղ ուտելիքները եւ սպասեցին Կաղանդ պապուկին ժամանումը՝ Ամանորի նուէրներով:


Բացի նուէրներէն, տօնական օրուան մասնակիցները ստացան «Երեւան փարք»-ի տոմսեր՝ Ամանորեան կախարդանքը մեծ վայելքով շարունակելու համար:

ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ԱՌՑԱՆՑ ԱՌԱՋԻՆ ԺՈՂՈՎԸ

Շաբաթ, 14 Դեկտեմբեր 2024-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կազմակերպութեամբ տեղի ունեցաւ միութեան Շրջանային եւ Սեկուսի շրջաններու խմբապետական առաջին առցանց ժողովը՝ ներկայութեամբ 23 շրջաններէ 29 խմբապետներու եւ Կեդրոնական Վարչութեան 10 անդամներու:

Ժողովին ընթացքին Կեդրոնական Վարչութեան սկաւորական կորիզի անդամները խմբապետներուն զեկուցեցին միութեան սկաւորական մարզի անցնող մէկ տարուան աշխատանքները՝ խմբապետական Թ. համագումար եւ անկէ բխած աշխատանքային խմբակներու գործունէութիւն, Եւրոպայի ցամաքամասի բանակում, գործուղումներ դէպի Պուլկարիա եւ Գահիրէ:

Խմբապետներուն փոխանցուեցան նաեւ յառաջիկային տեղի ունենալիք ծրագիրներ: Խմբապետները, իրենց կարգին, կատարեցին շինիչ առաջարկներ:



Ժողովը, որ եռամսեայ հերթականութեամբ պիտի կրկնուի, աւարտեցաւ Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբայր Յակոբ Խաչերեանի խօսքով՝ ուղղուած խմբապետներուն:

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

«Մէկը բոլորին եւ բոլորը մէկուն»

2

1974-2024. 50-ԱՄԵԱԿ ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԿԱՌՈՅՑԻ ՍՏԵՂԾՄԱՆ

Հ.Մ.Ը.Մ. ե՞րբ եւ ի՞նչպէս վերածուեցաւ

4

համազարդութային կառոյցի

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական

Վարչութեան մը ստեղծման

առաջարկը... 1971-ին

5

15 Գեկտեմբեր, 1974

(տասնամեակ)

7

50 տարիներ, որոնք միութիւնը

հարստացուցին

համա-Հ.Մ.Ը.Մ.ական

100 նախաձեռնութեամբ

8

ՊԱՏՊԱՄՆԵՐ

Կառչած պիտի մնանք

մեր արմատներուն

12

Իր առաքելութեան եւ կոչումին

գիտակից միութիւն մը միայն

կրնայ այսքան բարիք տալ իր

ժողովուրդին

14

Դուք սովորական սկաուտներ

չէք, դուք «Նահատակ ցեղի

կամաւոր բանակ»ին

զինուորներն էք

15

Օգտուինք անցեալի

փորձառութիւններէն,

խանդավառութեամբ

ուղղուինք դէպի ապագայ

16



Սա առաքելութիւն է,

որ չունի աւարտ

17

Ո՞վ ենք մենք, իբրեւ Հ.Մ.Ը.Մ.

եւ հայութիւն, ո՞ր կ'երթանք

եւ ինչո՞ւ կ'երթանք

18

Պիտի բարձրանանք ու

բարձրացնենք յանուն

հայութեան առաւել լաւ ու

յաղթական գալիքի

21

Ամփոփուիլ եւ

ինքնաքննութիւն ընել

30

ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ

Միջ-դիւանական 11-րդ

խորհրդաժողովը

22

Նախորդ խորհրդաժողովները

25

Հաղորդագրութիւն

27

Բացումը՝ Եռաբլուրէն

28

Փակումը՝ Ծիծեռնակաբերդէն

31

Հանդիպումներ Հ.Մ.Ը.Մ.ի

Արցախի եւ Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՄԿ-ի

վարչութիւններուն հետ

32



ԱՆԳՐԱԳԱՐՉ

Հանդիպում-ընդունելութիւն

հայրենի լրատուամիջոցներու

ներկայացուցիչներու

44

Հ.Մ.Ը.Մ.ին եւ ՀԱՄԿ-ին

յաճախ տրուող հարցեր

44

Քարոզչական առցանց

Բ. համագումարը

47

Օգտակար եւ եզակի

հրատարակութիւն մը

50

ՄԱՄՆԱՃԻՂԷ ՄԱՄՆԱՃԻՂ 52

ՄԵՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ 86



35-ԱՄԵԱԿ Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՄԿ-Ի

35-ամեակի ճաշկերոյթը

33

«Արժանեաց» շքանշանակիր

եղբ. Օշին Փիրումեան

35

35-ամեակի խոստման

եւ երդման արարողութիւնը

40



Marzig sports magazine is published

by Homenetmen Central Committee

Sevan Building, Rue 77, Sector 4,

Bourj Hammoud, Beiruth, Lebanon.

Tel: 961 1 248043, 961 1 260117

E-mail: marzig@Homenetmen.org

Homenetmen.org

«ՄԷԿԸ ԲՈԼՈՐԻՆ ԵՒ ԲՈԼՈՐԸ ՄԷԿՈՒՆ»

(Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԿԱՌՈՅՑԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՅԻՄՆԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

Անկասկած, լուսամիտ մարդիկ էին Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային կառույցը ստեղծողները: Լաւ ծանօթ էին ազգային մեր իրավիճակին, մտայնութեան եւ գործելակերպին:

Գիտէին, որ մեր ցիր ու ցան վիճակը գոյութիւն ունի հակառակ մեր կամքին եւ դեռ պիտի շարունակէ գոյութիւն ունենալ... դարձեալ հակառակ մեր կամքին:

Գիտէին նաեւ, որ ցիր ու ցան վիճակը վտանգ է մեր գոյութեան եւ կազմակերպ կեանքին: Յիր ու ցան վիճակը ժամանակի ընթացքին մարդոց մօտ կը յառաջացնէ հատուածական մտայնութիւն, «ինքն իր իղով քապկուելու» ինքնաբաւութիւն եւ սեփական միջոցներով միայն տեղական կարիքները գոհացնելու տրամադրութիւն:

Երբ չկայ ընդհանրական նպատակ, կայ ինքնանպատակ կեանք: Կան տեղայնական մտահոգութիւններ, անտեղի մրցակցութիւններ եւ հարցեր, որոնք կը մաշեցնեն մեծամասնութեան առօրեան, կը խլեն ահագին ճիգ ու ժամանակ... վասն ոչինչի: Ինքնանպատակ ըլլալ կը նշանակէ մեկուսանալ, լճանալ եւ անխուսափելի կործանումի ճամբան բռնել: Աւելի պատկերաւոր, կը նշանակէ վերածուիլ աւազի հատիկներու, որոնք առանց *նպատակ* ու *արժէք* ունեցող շաղախի, չեն կրնար որեւէ բան ոտքի պահել, ո՛ր մնաց... կերտել:

Անպայման հեռատեսներ էին Հ.Մ.Ը.Մ.ի Անդրանիկ Ընդհանուր Ժողովը եւ առաջին Կեդրոնական Վարչութեան ընտրութիւնը կազմակերպողները, որովհետեւ անոնք կ'անդրադառնային,- եւ ճիշդ կերպով,- որ միայն ընդհանրական նպատակներու հետապնդումով եւ հաւաքական ճիգերու ներդրումով իմաստ կ'ունենան հայութեան ցիր ու ցան հատուածները: Հայութեան սպառնացող մարտահրաւերներուն ընդդէմ, բոլորը կոչուած են զիրար լրացնելու, իրարու աջակցելու, իրարու գորացնելու եւ իրենց ծրագիրներն ու գործունէութիւնը իրարու հետ համակարգելու՝ յանուն ընդհանուրի շահին, հաւաքական նպատակին:

1974-ին միութեան համագաղութային կառոյցին ստեղծումը եւ 15 տարի վերջ՝ Հայաստանի Հ.Մ.Ը.Մ.ին միացումով համահայկական կառոյցի վերածումը ծառա-



յեց ա՛յս նպատակին, համագաղութային մտայնութեան եւ գործի տարածման, «Մէկը բոլորին եւ բոլորը մէկուն» գործելակերպի որդեգրման, ի շահ միջ-գաղութային յարաբերութիւններու սերտացման, ամրապնդման ու զարգացման:

Թէեւ պէտք է խոստովանիլ, որ այս գործելակերպը բոլորովին նորութիւն մը չէր Հ.Մ.Ը.Մ.ին համար: Նորութիւնը անոր *կանոնագրային* հիմք եւ *կառուցային* ձեւ ստանալն էր: Արդարեւ, ո՞վ կրնայ ժխտել 1920-ա-

կան եւ 1930-ական տարիներու Ս. Չատուրեան միջ-մասնաճիւղային խաղերուն ազդեցութիւնը՝ Սուրիոյ եւ Լիբանանի հայութեան կեանքին: Ո՞վ կրնայ ուրանալ 1937-էն սկսեալ համախմբողի դերը Սուրիոյ, Լիբանանի եւ Պաղեստինի Շրջանային Վարչութեան, որ ժամանակի ընթացքին կազմակերպական իր հովանիին տակ առաւ նաեւ Յորդանանի շրջանը եւ 1960-ին դարձաւ Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութիւն, շատ աւելի լայնածիր առաքելութեամբ:

Հ.Մ.Ը.Մ.ը սակայն միայն Միջին Արեւելքի համար ստեղծուած միութիւն չէր: Իր հիմնադրութեամբ իսկ ան Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն էր: Յիր ու ցան մասնաճիւղեր ունէր քիչ մը ամէն տեղ՝ Ամերիկաներէն մինչեւ Եւրոպա եւ հեռաւոր Աւստրալիա: Հետեւաբար, 1974-ի պատմական քայլը, իբրեւ պահանջ եւ պարտաւորութիւն, Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհասփիւռ մասնաճիւղերը նախ իրարու կապեց եւ ապա՝ մէկ ու միեւնոյն կեդրոնին միացուց, այդպէսով միութեան բոլոր ուժերը, բոլոր միջոցները, ամբողջ եռանդն ու փորձառութիւնը ուղղելով մէկ նպատակի, ինչ որ յատուկ *իմաստ* եւ *նշանակութիւն* տուաւ մասնաճիւղերու գոյութեան, հեռացուց զանոնք ինքնանպատակ գործունէութենէ, ստեղծեց ներքին միութիւն եւ միասնականութիւն, համախմբուածութիւն եւ գորութիւն: Չօրութիւն ո՛չ միայն միութեան այս կամ այն շրջանին, այլ մանաւանդ՝ անհատ միութենականին, որ ապրեցաւ արդար հպարտութիւնը պատկանելու հազարաւոր անդամներ հաշուող այս մեծ միութեան:

Ժամանակն է, եթէ ուշ չէ, գնահատելու համագաղութային կառոյցին միութեան թէ հայութեան ունեցած անփոխարինելի բարիքը:



Համագաղութային-համահայկական կառոյցը ջնջեց միութեան աշխարհասփիւռ միաւորներուն միջեւ գոյութիւն ունեցող տարբերութիւնները եւ բոլորին պարզ դարձուց, որ Հ.Մ.Ը.Մ.ի մէջ չկան առաջնակարգ ու երկրորդական շրջաններ, մեծ ու փոքր մասնաճիւղեր. առաջնութեան եւ մեծութեան ցուցանիշը, բոլորին համար, Հ.Մ.Ը.Մ.ի նպատակին իրագործման մասնակցութեան չափն է, ընդհանրական գործին կատարուած ներդրումն է:

Հ.Մ.Ը.Մ. անցնող 50 տարիներուն իրականացուց համագաղութային-համահայկական բնոյթի 100 նախաձեռնութիւն: Շրջաններ, մասնաճիւղեր, հայութեան ցիր ու ցան հատուածներ 100 անգամ դուրս եկան իրենց տեղա-

կան-տեղայնական պայմաններէն եւ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշին տակ, իրենց գործունէութեան կարկինը լայն բանալով, կարողացան նոյն աչքերով ու նոյն հեռանկարներով տեսնել անցեալը, ներկան ու վաղուան գալիքը:

Եւ դեռ, Կեդրոնական Վարչութիւնը կապ ու կամուրջ ունենալով, Հ.Մ.Ը.Մ.ի շրջաններ, մասնաճիւղեր 100 անգամ կապուեցան իրարու, միասնաբար՝ հայութեան եւ հայրենիքին: Համագաղութային ձեռնարկներով անոնք եկան քով-քովի, ապրեցան գաղափարական նոյն ոգիով, ազգային նոյն խանդավառութեամբ եւ, իբրեւ մէկ մեծ ընտանիք, միութեան տուին տարբեր որակ ու մակարդակ՝

Համագաղութային նկարագիր ու հմայք:

Համահայկական ուժ եւ հեղինակութիւն:

Հ.Մ.Ը.Մ. 41 ՇՐՋԱՆԻ ՄԷՋ, 101 ՄԱՍՆԱՃԻԻՂԵՐ ԵՒ 11 ՄԻԱՌՈՐՆԵՐ

Հայաստան: «Գ. Յակոբեան» (Երեւան-Կեդրոն), «Շ. Քրիսեան» (Երեւան-Մալաթիա), «Տ. Խոյեան» (Երեւան- Զէյթուն), «Վ. Չերազ» (Կիւմրի), Արովեան, «Ա. Մարտիրոսեան» (Հրազդան), «Վարդան Տ.» (Երեւան-Էրեբունի), «Վ. Բախշեան» (Արմաւիր), «Վ. Ռոստոմեան» (Էջմիածին), «Յ. Առուստամեան» (Չարենցաւան), Մարտունի (Զօրաքար), «Վ. Չերազ» (Երեւան-Կոմիտաս), «Ա. Չոհրապեան» (Վետի), Մարտունի (Ծովինար), «Յ. Հինդլեան» (Երեւան-Մասիս): **Արցախ:** Ստեփանակերտ: **Վրաստան:** Ախալքալաք, Ախալցխա, Թիֆլիս: **Ռուսիա:** Մոսկուա: **Լիբանան:** Պէյրոս, Չահլէ, Թրիփոլի, Պ. Համուտ, Այնճար, Ճիւնի, Անթիլիաս, Ժըտէյտէ, Պաուշրիէ, Ռատուա: **Սուրիա:** Հալէպ, Դամասկոս, Լաթաքիա, Գամիշլի, Քեսասյ, Տէրիք (միաւոր): **Յորդանան:** Ամման: **Պաղեստին:** Երուսաղէմ, Հայֆա, Եաֆա: **Եգիպտոս:** Գահիրէ, Աղեքսանդրիա: **Իրաք:** Պաղտատ: **Քուէթ:** Քուէթ: **Կիպրոս:** Նիկոսիա: **Յունաստան:** Աթէնք, Գոթինիա, Սելանիկ: **Անգլիա:** Լոնտոն: **Աւստրիա:** Վիեննա: **Ֆրանսա:** Փարիզ, Վալանս, Մարսէյ: **Հոլանտա:** Ալմելօ, Ալքմար (միաւոր), Առնհեմ: **Կերմանիա:** Միւնիխ: **Շուէտ:** Վեսթերոս, Սոտերթելիա, Սթոքհոլմ, Օրէպրու: **Պուլկարիա:** Սոֆիա, Ռուսէ (միաւոր), Փրովսիվ, Վառնա, Շումէն (միաւոր): **Գանատա:** Մոնթրէալ, Համիլթըն (միաւոր), Թորոնթօ, Քէմպրիճ, Մէք Գաքրինգ, Լաւալ, Վանքուվըր (միաւոր), Օթաւա (միաւոր), **Արեւմտեան Մ. Նահանգներ:** Լոս Անճելըս, Սան Ֆրանսիսքօ, «Սասուն» (Ֆրեզնօ), Մոնթբէյլլօ, «Ազատամարտ» (Փասատինա), «Արարատ» (Կլենտէյլ), Օրէնճ Քաունթի, «Մասիս» (Սան Ֆեռնանտօ), «Մեան» (Սան Տիէկօ), «Արազ» (Ինըլնտ Էմփայր), «Անի» (Սանթա Գլարա), «Շանթ» (Քրեմլինսկ Լոյսիտ), «Սիփան» (Պըրպէնք), «Արցախ» (Լաւ Վեկաս), Ֆինիքս, «Կարս» (Ուոլնաթ Քրիք) «Չաւախք» (Նորթ Հոլիվուտ), «Լոռի» (Սաքրամենթօ-միաւոր), «Կիլիկիա» (Սանթա Գլարիթա-միաւոր), **Արեւելեան Մ. Նահանգներ:** Ուաշինկթըն, Պոսթըն, Նիւ Եորք, Նիւ Ճրքի, Շիքսկօ, Ֆիլատելֆիա, Տիքոնոյթ, Փրովիտընս, Ֆլորիտա, Ալպընի, Շարլոթ (միաւոր), Մերիմաք Հոլիտ (միաւոր): **Հարաւային Ամերիկա:** Պուերտօ Ալթա, Գորտոպա, Մոնթեվիտէօ: **Աւստրալիա:** «Անդրանիկ» (Սիտնի), «Արաքս» (Մելբուռն), «Նաւասարդ» (Սիտնի), «Կամք» (Սիտնի), «Արարատ» (Սիտնի):

Հ.Մ.Ը.Մ. ԵՐԲ ԵՒ ԻՆՉՊԷՍ ՎԵՐԱԾՈՒԵՑԱԲ ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԿԱՌՈՅՑԻ 9 ՀՐԶԱՆՈՎ, 23 ՄԱՍՆԱՃԻԴՂՈՎ, 7106 ԱՆԴԱՄՈՎ

Իր հիմնադրույթեան սկզբնական տարիներուն, Հ.Մ.Ը.Մ. ունեցած է յաջորդական չորս Կեդրոնական Վարչութիւններ, իւրաքանչիւրը պաշտօնավարութեան կարճ ժամանակով: Այսպէս.-

Ա. Կեդրոնական Վարչութիւն՝ 16 Նոյեմբեր 1918 - 9 Մայիս 1920

Բ. Կեդրոնական Վարչութիւն՝ 9 Մայիս 1920 - 20 Մարտ 1921

Գ. Կեդրոնական Վարչութիւն՝ 20 Մարտ 1921 - 27 Նոյեմբեր 1921

Դ. Կեդրոնական Վարչութիւն՝ 27 Նոյեմբեր 1921 - 16 Սեպտեմբեր 1922, մինչեւ միութեան լուծարումը Պոլսոյ մէջ:

Պոլիսէն ետք, Փարիզի մէջ 1931-ին ընտրուած Կեդրոնական Վարչութիւնը ունեցած է կարճատեւ գործունէութիւն:

1937-ին, Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբիոյ եւ Լիբանանի Շրջանային Վարչութիւնը կը դիմէ միութեան բոլոր շրջաններուն՝ Կեդրոնական Վարչութեան մը կազմութեան համար հաւանութիւն ստանալու,

սակայն դրական որեւէ պատասխան չի ստանար:

1948-ին, Յունաստանի շրջանէն Սուրբիոյ եւ Լիբանանի Շրջանային 10-րդ Պատգամաւորական Ժողովին եկած առաջարկ մը փափաք կը յայտնէ, որ Սուրբիոյ, Լիբանանի, Պաղեստինի եւ Յորդանանի Շրջանային Վարչութիւնը նախաձեռնէ համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ընդհանուր Ժողովի մը գումարման, ստեղծելու համար Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութիւն մը: Առաջարկը նպատակը ընդունելութիւն չգտնելով կը մնայ առկախ:

23 տարի ետք, 9 եւ 10 Յունուար 1971-ին, Հ.Մ.Ը.Մ-ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան (նախկին՝ Սուրբիոյ, Լիբանանի, Պաղեստինի եւ Յորդանանի Վարչութեան) 19-րդ Պատգամաւորական Ժողովին նոյն առաջարկը կը ներկայացուի Հ.Մ.Ը.Մ-ի Մոնթրէալի մասնաճիւղի ներկայացուցիչներ՝ եղբայրներ Վարուժան Սերոբեանի եւ Սար-

գիս Յովսէփեանի կողմէ: Առաջարկը սակայն որոշումի կարգ չ'անցնիր:

Ի վերջոյ, 20-րդ Պատգամաւորական Ժողովի երկրորդ նստաշրջանին, 10 եւ 11 Մարտ 1973-ին, առաջարկը որոշումի ուժ կը ստանայ եւ անոր ձեւ ու մարմին տալու պարտականութիւնը կը վստահուի «Հ.Մ.Ը.Մ-ը համագաղութային կազմակերպութեան վերածելու կոչուած մարմին» անունով եռանդամ յանձնախումբի մը, որուն մաս կը կազմեն եղբայրներ Վարդգէս Տէր Կարապետեան (ատենապետ), Հրանդ Մուրատեան (ատենադպիր) եւ Նշան Թիւսիւզեան (գանձապահ):

Եռանդամ յանձնախումբը կը գործէ մէկուկէս տարի եւ կը գումարէ 35 նիստեր: Յանձնախումբին անդամները միութեան անդրանիկ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը պատրաստելու եւ շրջաններու հետ ուղղակի կապեր հաստատելու համար կը ձեռնարկեն այցելութիւններու շարքի մը՝ Գանատա, Մ-



Մերձաւոր Արեւելքի 20-րդ Պատգամաւորական Ժողովի Ա. նստաշրջան, 10-11 Փետրուար 1973:



Մերձաւոր Արեւելքի 20-րդ Պատգամաւորական Ժողովի Բ. նստաշրջան, 10-11 Մարտ 1973:

Նահանգներ, Ֆրանսա եւ այլուր: Մարմինը կը վայելէ Հ.Յ.Դ. գերագոյն մարմինին քաջակերանքն ու աջակցութիւնը: Մարմինին աշխատանքներուն կ'օժանդակեն յատկապէս լիազօրուած եղբայրներ Յովհաննէս Շահինեան, տոքթ. Բարգէն Փափագեան, Անդրանիկ Ուրֆալեան, Բիւզանդ Թորիկեան, Վարդգէս Ալահայտոյեան եւ Յակոբ Համամճեան: Փարիզ հաստատուած Սուրէն Մուրատեան եւս աշխատանքներ կը տանի այս ուղղութեամբ:

Այցելութիւններէ եւ նախապատրաստական երկար աշխատանքներէ ետք, եռանդամ մարմինին հրաւերով, 13-15 Դեկտեմբեր 1974-ին, Պէյրութի մէջ կը գումարուի Հ.Մ.Ը.Մ.ի Ա. Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը, մասնակցութեամբ 9 շրջաններէ 23 լիազօր պատգամաւորներու (ներառեալ «Հ.Մ.Ը.Մ.ի Ա. Ընդհանուր Ժողովի Կազմակերպիչ Մարմինի» ներկայացուցիչը): Ժողովին դէտի հանգամանքով կը մասնակցին Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան անդամները, կազմակերպիչ եռանդամ մարմինի մնացեալ երկու անդամը, Թեհրանի Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպութեան ներկայացուցիչը, Շրջանային Սկաուտ-Խորհուրդի երկու անդամ, «Ազգակ» օրաթերթի եւ Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչները՝

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՄԸ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՌԱՋԱՐԿԸ... 1971-ԻՆ

Երբ նկատի ունենանք, թէ ինչ պայմաններու մէջ կը գործեն մեր մասնաճիւղերը, կրնամ անվարան ըսել, որ անգնահատելի գործ կը կատարեն վարչութիւնները: Բայց, իմ կարծիքով, պէտք չէ գոհանանք ձեռք բերուած արդիւնքներով: Պէտք է հիմնական փոփոխութիւններ մտցնել Հ.Մ.Ը.Մ.ի վարչական մեքենային մէջ, որպէսզի աւելի լաւ արդիւնքներ ձեռք բերելու հնարաւորութիւն ձեռք բերուի:

...Այսօր, Հ.Մ.Ը.Մ.ը գաղթաշխարհի մէջ լայն տարածում ունեցող կազմակերպութիւն մը դարձած է: Հեռաւոր Աւստրալիայէն մինչեւ Ամերիկա, ամէն տեղ, հայ երիտասարդին աչքերը յառած են Հ.Մ.Ը.Մ.ին: Ամէն տեղ նոր մասնաճիւղեր կազմուելու վրայ են: Որպէսզի այս ճիգերը արդիւնաւորուին եւ դառնան մնայուն, անհրաժեշտ է ստեղծել վարչական ուժեղ մեքենայ, որուն թելերը հասնին ամէն կողմ: Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան մը ստեղծումով միայն կարելի է այդ վարչական ուժեղ մեքենան ունենալ եւ անոր միջոցով համադրել բոլոր գաղութներու մէջ գործող Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերը:

Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութիւնը, որուն մէկ մասնաճիւղը ըլլալու պատիւը ունինք եւ որուն օժանդակութեան կը դիմէ ամէն նորակազմ վարչութիւն, թէւ մեծապէս գնահատելի գործ կը կատարէ, բայց անհրաժեշտ եղող լայն լիազօրութիւնները չունի ամէն բան տնօրինելու եւ իր հրահանգները բոլորին պարտադրելու: Այդ լիազօրութիւնը ունեցող մարմին մըն է, որ մենք կ'ուզենք:

Ուզենք կամ չուզենք, Հ.Մ.Ը.Մ.ը դարձած է համազգային բնոյթ ունեցող կազմակերպութիւն եւ այդ կը պարտադրէ մեզի կազմակերպուիլ ըստ նոր պահանջներուն:

(Չրոյց եղբ. Վարուժան Սերոբեանի հետ, Վ.Ս., «Ազգակ», 18 Յունւար 1971)

Հ. Մ. Ը. Մ.
Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ
ԳԵՐՈՒՅՑ
18 - 15 Դեկտեմբեր 1974

ԽՐԱՄԱՍԻՆ ԶԱՆՆԱԿ ԳԻՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

12000 ԼՊՐԱՄԱՆ

1.- Յովհաննես Եսայիան / Երջանային Վարդութիւն
2.- Յովակ Յիւլիան
3.- Տօքթ. Յարութիւն Գազանթան
4.- Վարդան Եամլան

600 ԾՈՌՈՒՄ

5.- Տօքթ. Տիգրան Զաֆանան
6.- Պարգև Միսիրան
7.- Սուրեն Նազարան

1000 ԳԱՄԱՏԱ - ՄԻՇԻՆԸՍԻՆ ՄԱՅՐԻՒՄ

8.- Մարտի Գարան
9.- Գեորգ Անական

2000 ԳԱԼԻՏՈՐԻՒՄ

10.- Մհեր Երեզրզուման

600 ԱՄՐԱՆ

11.- Գեորգ Տազանան
12.- Անտի Գարիանան
13.- Լուսին Սիրանան

400 ՅՈՐԴԱՆԱՆ

14.- Յարութիւն Գեհենիւան
15.- Գեորգ Քիլիթան
16.- Արո Ներիթան

ԱԳՆԵՍԱՆՈՒՄ

17.- Վահան Գաուրման

800 ԳԱԶԻՐԷ

18.- Թորոս Խաչատրանան
19.- Տօքթ. Սուրեն Գայրաման

- 2 -

8000 ՅՈՂՈՎԱԾԻՆ

20.- Լուսին Գարան
21.- Տիգրան Սրազան / Սիմոն Սրազան
22.- Արո Միսանան

Հ.Մ.Ը.Մ.-ի Ա. Ընդհանուր Ժողովի Ազգակերպիչ Մարմին

28.- Վարդան Տէր Արապանան

ԽՐԱՄԱՍԻՆ ԶԱՆՆԱԿ

ԵՐԱՄԱՍԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

1.- Տօքթ. Միսաք Արզումանան
2.- Արո Գարոսան
3.- Բիւզանդ Յորիկան

4.- Յովհաննես Տէր Յարութիւնան
5.- Վարդան Ալահալոյան Վ. Ալահալոյան
6.- Յակոբ Համաման

ԱՎԱՐԱՆՈՐԳԻՉ ՄԱՐԿԻՆ

7.- Հրանդ Մուրաթանան
8.- Նշան Յիւսիպան

ԹՅՈՐՄԱՆ - ՄՐԱՐԱՏ

9.- Ռուբեն Վիրման

ԵՐԱՄԱՍԻՆ ԻՍՎԱՌՏԱՆԻ ԽՈՐՀՈՐԴ

10.- Միհրան Երմշիրան / Երջանային Արշակունի /
11.- Յասմիկ Մուրաթան / Երջանային Արշակունի /

ԱՄՐԱՆ

12.- Տիգրան Ոսկունի

ՀՐԱՆԻՐՅԱԼՆԵՐ

18.- Նղուարդ Բառոյան
14.- Նազարէթ Գարազանան

Հ.Մ.Ը.Մ.ի Ա. Ընդհանուր Ժողովի մասնակիցներու ցանկը՝ իւրաքանչիւրին ստորագրութեամբ: (նկարը եղբ. տղքթ. Պայրամեանի արխիւէն: Թուղթին մայր օրինակը կը մնայ եղբ. Պայրամեանի մօտ):

ընդամենը 37 ժողովական: Լիազօր պատգամաւորներով կը ներկայանան հետեւեալ շրջանները.- Լիբանան, Սուրիա, Գանատա-Արեւելեան Մ. Նահանգներ, Գալիֆօրնիա, Ամման, Յորդանան, Աղեքսանդրիա, Գահիրէ, Յունաստան: Անոնք կը ներկայացնեն 23 մասնաճիւղեր.- Պէյրութ, Պուրճ Համուտ, Անթիլիաս, Այնճար, Զահլէ, Ճիւնի, Ժրտէյտէ, Թրիփոլի, Հալէպ, Ամման, Երուսաղէմ, Մոնթրէալ, Թորոնթօ, Համիլթըն, Ուաշինկթըն, Պոսթըն, Լոս Անճելըս, Սան Ֆրանսիսքօ, Ֆրեզնօ, Մոնթեպելլօ, Ուրուկուէյ, Սիանի եւ Մելպուռն:

Միութիւնը համագործակցի կառուցով օժտել է ետք (23 մասնաճիւղ՝ 7106 անդամ), Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը կը քուէարկէ Հ.Մ.Ը.Մ.-ի նոր շրջանի Մրազիր-Կանոնագիրը եւ անդրանիկ Կեդրոնական Վարչութեան իննանդամ կազմը կ'ընտրէ հետեւեալ եղբայրներէն.- Լիբանանէն Վարդգէս Տէր Կարապետեան (ատենապետ),

Վարդգէս Ալահալոյան (փոխ ատենապետ), Տիգրան Ոսկունի, Բիւզանդ Թորիկեան (ատենապարհներ), Նշան Թիւսիւպեան (գանձապահ), Յովհաննէս Պայթարեան (հաշուապահ), Մոնթրէալէն Դանիէլ Դանիէլեան, Լոս Անճելըսէն Արմէն Տէյրմէնճեան եւ Պուէնոս Այրէսէն Պարգեւ Պարսամեան (խորհրդականներ):

Քարթը այն պանդոկին, ուր իջեւանած են Հ.Մ.Ը.Մ.ի Անդրանիկ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին մասնակիցները: (Քարթը եղբ. տղքթ. Պայրամեանի արխիւէն: Քարթին մայր օրինակը կը մնայ եղբ. Պայրամեանի մօտ):

Անդրանիկ Կեդրոնական Վարչութեան գլխաւոր ճիւղը կ'ըլլայ շրջաններու հետ կապերու ամրապնդում, արխիւներու կեդրոնացում եւ թանգարանի կազմութիւն: Կազմը կը գործէ մինչեւ Ապրիլ 1979 եւ կը յաջողի Քալամոսի մէջ, Յունաստան, 1-13 Օգոստոս 1978-ին իրականացնել համա-Հ.Մ.Ը.Մ.ական առաջին բանակումը:

THE BUSINESS - MEN'S HOTEL Phones : 290775, 237300


230965
SEMIRAMIS

best price - better comfort

BEIRUT - LEBANON

Minet-el-Hosn

Cable : SAMIRHOTEL



PALANDJIAN BROS. & Co.

Entrance :
Next to Alcazar Hotel between St. George & Phoenicia Hotels

15 ԳԵԿՏԵՄԲԵՐ, 1974 (ՏԱՄՆԱՄԵԱԿ)

Կան թուականներ, որոնք պէտք է առնուին շրջանակի մէջ եւ չմոռցուին:

Կան թուականներ, որոք անկիւնադարձային են, խորհրդանիշ են, երկար երկունքի խտացում:

Կան թուականներ, պարզ ու մեկին, որոնք պատմական են:

15 Դեկտեմբեր 1974, Պէյրուի:

Պէյրուի Հ.Մ.Ը.Մ-ի ակումբի սրահ, յաւելեալ ճշգրտութեան համար:

Հ.Մ.Ը.Մ-ի գանազան մասնաճիւղերէն 23 ներկայացուցիչներ, ա՛յլ թուականին, ա՛յլ տեղ, ա՛յս մեծ միութիւնը բարձրացուցին իր արժանի առաքելութեան, ընտրելով Կեդրոնական Վարչութիւն եւ վաւերացնելով ընդհանուր Ծրագիր-Կանոնագիր:

Այլ բացատրութեամբ, Հ.Մ.Ը.Մ. 15 Դեկտեմբեր 1974-ին ծիածանացաւ աշխարհի երկնակամարին վրայ, դառնալով համազգութեային:

Անշուշտ մեր փափաքը այդ չէր:

Մեր աշխարհը մեր աշխարհն էր, ոչ թէ աշխարհը:

Սակայն այս աշխարհի վրայ կարենալ պարելու ու այս աշխարհի վրայ իր սեփական աշխարհը ունենալու համար անհրաժեշտ էր Կեդրոն ունենալ, Կեդրոնանալ:

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը այդ փափաքի, այդ պահանջի երթին՝ քար դրաւ քարի վրայ:

Իր ծնունդով այս միութիւնը արդէն Ընդհանուր էր. այս թուականին դարձաւ համընդհանուր:

15 Դեկտեմբեր 1974:

Ո՞վ չի գիտեր, որ երբ Կեդրոնը ուժով է, ուժով է ամբողջը:

Ո՞վ չի գիտեր, որ երբ Կեդրոն կայ, ուրեմն կայ եւ թաւալք, ինչպէս տիեզերական օրինակ եւ օրէնք:



Հ.Մ.Ը.Մ-ի Անդրանիկ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի մասնակիցներ: (գունաւոր նկարը եղբ. Պայրամեանի արխիւէն):

Ո՞վ չի գիտեր, որ Կեդրոնը, Կեդրոնականը, Կեդրոնանալը կենսականէն աւելի բան են: Ատով կ'ամբողջանայ լինելութիւնը, որուն կը ձգտին բոլոր շարժումները. ակերը՝ առուններուն, առունները՝ գետերուն եւ գետերը՝ ծովուն:

Միութեան մը համար աւելի մեծ իրազործում կարելի՞ է երեւակայել, մանաւանդ մեր ժողովուրդի դժխեմ ճակատագրին ենթարկուած հաւաքականութեան մը համար, քան ա՛յս:

Հիմա աշխարհով մէկ ցրուած երիտասարդութիւնը (ճակատագրականօրէն ու հազար անգամ դժբախտաբար) կ'ենթարկուի մէկ եւ միեւնոյն ԿԱՄՔԻՆ (անչեղօրէն եւ հազար անգամ բարեբախտաբար):

Հիմա այս միութիւնը, որպէս կառոյց եւ առաքելութիւն, համապատասխան իր անուան եւ կոչումին, դէմ է տեղայնական հասկացողութիւններու եւ մտայնութեանց, ինչպէս եւ մանաւանդ գործեղակերպի: Միութիւնը ինք՝ ինքնանպատակ չէ, այլ կը ձգտի նպատակի մը, որ յայտարարուածն է, եւ մանաւանդ՝ հետապնդուածը.:

Հաւատարմութիւն Աստուծո՛յ, Հայրենիքի՛, Մարդո՛ւ: 1974-1984:

Տասը տարուան մէջ ի՛նչ ըրաւ Կեդրոնականը.:

Հրատարակեց «Մարզիկ», կազմակերպեց սկստական համազգութեային բանակում (Յունաստանի մէջ, Ֆրանսայի մէջ), պասքեթպոլի մրցաշարք (Գանատայի մէջ), կազմակերպեց Ընդհանուր Ժողովներ (Կիպրոսի մէջ, Յունաստանի մէջ), Շրջանային Ժողովներու ներկայացուցիչներ ղրկեց (Ամերիկաներ, Աւստրալիա, Եւրոպա, Մերձաւոր Արեւելք), ստացաւ հազարաւոր նամակ, պատասխանեց հազարաւոր անգամ...:

Կեդրոնականը՝ աշխարհը աշխարհին կապեց:

Յամենայնդէպս,

Առայժմ կարեւորը Կեդրոնական Վարչութեան ըրածն ու ընելիքն ալ չէ, որքան եղած ըլլալու իրողութիւնը:

Վերջին հաշուով, Հ.Մ.Ը.Մ-ի պէս Միութեան մը համար՝ տասը տարին վայրկեան իսկ չէ...:

Խմբագրական «Մարզիկ»ի,
Դ. տարի, թիւ 9 (45), Դեկտ.Յունուար1985:



50 ՏԱՐԻՆԵՐ, ՈՐՈՆՔ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՀԱՐՍՏԱՑՈՒՑԻՆ ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 100 ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՄՔ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐ

1. Պէյրուք, 1974
2. Նիկոսիա, 1979
3. Աթէնք, 1983
4. Աթէնք, 1987
5. Աթէնք, 1991
6. Պրումմանա, 1995
7. Ատմա, 1999
8. Ծաղկաձոր, 2003
9. Ծաղկաձոր, 2007
10. Ծաղկաձոր, 2011
11. Աղվերան, 2015
12. Ծաղկաձոր, 2019
13. Ծաղկաձոր, 2023

Մ. ԱՐԵՒԵԼՔԻ ՄԱՍՆԱԾԻԳԵՐՈՒ ԴԻՒՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

1. Ամման, 2006
2. Պէյրուք, 2010

ԵՒՐՈՊԱՅԻ ՄԱՍՆԱԾԻԳԵՐՈՒ ԴԻՒՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

1. Փարիզ, 2002

Մ. ԱՐԵՒԵԼՔԻ ՄԻՋ-ՄԱՍՆԱԾԻԳ. ՄԱՐՁԱԽԱՂԵՐ

1. Նիկոսիա, 2007

ՄԻՋ-ԴԻՒՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՆԵՐ

1. Միլանո, 1985
2. Լոնտոն, 1989
3. Լաւալ, 1993
4. Փարիզ, 1997
5. Պէյրուք, 2001
6. Աթէնք, 2005
7. Փարիզ, 2009
8. Նիկոսիա, 2013
9. Նիկոսիա, 2016
10. Պէյրուք, 2022
11. Երեւան, 2024

**ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ
ԲԱՆԱԿՈՒՄՆԵՐ**

1. Քալամոս, 1978
2. Քլամար, 1980
3. Չալֆոնթ Յայթց, 1986
4. Այա Մարինա, 1990
5. Բիրական, 1994
6. Աղանաձոր, 1998
7. Բիրական, 2002
8. Բիրական, 2006
9. Բիրական, 2010
10. Բիրական, 2014
11. Բիրական, 2018
- Առցանց, 2021
12. Բիրական, 2023

**«ՎԿԱՅԵԱԼ» ԿԱՐԳԻ
ԴԱՍԸՆԹԱՅՔՆԵՐ**

1. Եւրոպայի յատուկ, Փարիզ, 2009
2. Միջին Արեւելքի յատուկ, Հալէպ, 2009
3. Ամերիկայի յատուկ, Լոս Անճելըս, 2009
4. Ամերիկայի յատուկ, Սէնթ Գաթրինգ, 2013
5. Եւրոպայի յատուկ, Սթոքհոլմ, 2016
6. Եւրոպայի յատուկ, Փարիզ, 2022
7. Միջին Արեւելքի յատուկ, Ամման, 2022

**ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ
ԺՈՂՈՎ**

1. Առցանց, 2024

**ՑԱՄԱՔԱՍԱՍԱՅԻՆ
ԲԱՆԱԿՈՒՄՆԵՐ**

1. Եւրոպայի Ա. բանակում, Շուէտ, 2024

**ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐ**

1. Աթէնք, 1982
2. Լոս Անճելըս, 1988
3. Սիտնի, 1996
4. Ծաղկաձոր, 2004
5. Ծաղկաձոր, 2008
6. Ծաղկաձոր, 2012
7. Երեւան, 2016
8. Առցանց, 2020
9. Գահիրէ, 2024

**«ԱՐԱՐԱՏԵԱՆ» ԿԱՐԳԻ
ԴԱՍԸՆԹԱՅՔՆԵՐ**

1. Բիրական, 2010
2. Բիրական, 2014
3. Բիրական, 2018
4. Բիրական, 2023

**Մ. ԱՐԵՒԵԼՔԻ ԽՄԲԱՊԵՏՆԵՐՈՒ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐ**

1. Պէյրութ, 2006

**ՔՈՅՐ ՄԱՍՆԱՃԻՂԵՐՈՒ
ԲԱՆԱԿՈՒՄՆԵՐ**

1. Երեւան, 2011

**ՔԱՐՈՉՉԱԿԱՆ ՔԱՏԵՐՈՒ
ԴԱՍԸՆԹԱՅՔ**

1. Առցանց, 2023

**ՔԱՐՈՉՉԱԿԱՆ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐ**

1. Առցանց, 2021
2. Առցանց, 2024

**ԱՏԵՆԱՊԵՏՆԵՐՈՒ
ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ**

1. Առցանց, Ապրիլ 2020
2. Առցանց, Հոկտ. 2020
3. Առցանց, Հոկտ. 2022
4. Առցանց, Մայիս 2023
5. Առցանց, Փետր. 2024
6. Առցանց, Յունիս 2024
7. Առցանց, Հոկտ. 2024

41 ՇՐՋԱՆ **101** ՄԱՍՆԱՃԻՂ **11** ՄԻԱԻՈՐ

9 ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ (80 ՄԱՍՆԱՃԻՂ-ՄԻԱԻՈՐ)

32 ՄԵԿՈՒՄԻ (ՄԱՍՆԱՃԻՂ-ՄԻԱԻՈՐ)

26 ԵՐԿԻՐ **435** ԹԻՒ



**50 ՏԱՐԻՆԵՐ, ՈՐՈՆՔ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՀԱՐՍՏԱՑՈՒՑԻՆ
ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 100 ՆԱԽԱՉԵՌՆՈՒԹԵԱՄԲ**

**ԱՏԵՆԱՊԵՏՆԵՐՈՒ
ՑԱՄԱՔԱՄԱՍԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ**

1. Եւրոպայի ատենապետներ, Փարիզ, 2016
2. Եւրոպայի ատենապետներ, Ալմեյո, 2017
3. Եւրոպայի ատենապետներ, Միւնիխ, 2018
4. Եւրոպայի ատենապետներ, Լոնտոն, 2019
5. Ամերիկայի ատենապետներ, Լոս Անձելըս, 2019

**ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ
ՄԱՐԶԱԽԱԴԵՐ**

1. Մոնթրեալ-Թորոնթո, 1981
2. Լոս Անձելըս, 1985
3. Վալանս, 1990
4. Մոնթրեալ-Թորոնթո, 1993
5. Ուաշինկթոն-Նիւ Ջորջի, 1997
6. Պէյրուս, 2001
7. Աթէնք, 2005
8. Երեւան, 2009
9. Երեւան-Արտաշատ, 2013
10. Երեւան-Արտաշատ, 2017
- Առցանց, 2021
11. Երեւան-Կիւմրի, 2022

**ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐ**

1. Աթէնք, 2019
2. Նիկոսիա, 2023

**ՀԱՄԱԵՐՐՈՊԱԿԱՆ
ԵՐԻՏ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐ**

1. Վիեննա, 2017

**ՈԳԵԿՈՉՈՒՄՆԵՐ
ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

1. Հայոց Ցեղասպանութեան 90-ամեակի ուխտագնացութիւն, Տէր Զօր եւ Մարկատէ, 2005
2. Հ.Մ.Ը.Մ.ի 90-ամեակի առիթով «Շ. Քրիսեան» լսարանի բացում, Երեւան, 2008
3. Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի առիթով, Վահան Չերազի արձանի բացում, Կիւմրի, 2018
4. Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի առիթով, գիտաժողով, ցուցահանդէս եւ յուշաքարի բացում, Երեւան եւ Բիւրական, 2018
5. Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի առիթով, փառաւոր տողանցք-տօնակատարութիւն, Երեւան, 2018

ԿԱՌՉԱԾ ՊԻՏԻ ՄՆԱՆՔ ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԱՐՄԱՏՆԵՐՈՒՆ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ
ԵՂԲ. ՅԱԿՈԲ ԽԱԶԵՐԵԱՆԻ ՊԱՏԳԱՄԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝
ՄԻՈՒԹԵԱՆ 106-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ, ՀԱԼԷՊԻ ՄԷՁ)

Հաւաքուած ենք տօնա-
կատարելու Հ.Մ.Ը.Մ.Ի
հիմնադրութեան 106-ամեա-
կը:


Հաւաքուած ենք Հայէպ,
20-րդ դարու առաջին եւ ան-
նախադէպ Յեղասպանութեան
վայրերու ամենամօտակայ
քաղաքը: Վայրը եւ մեր այս
հաւաքը կը պարտաւորեցնեն,
որ Հ.Մ.Ը.Մ.Ի համաշխարհա-
յին բազմահազարնոց կառույ-
ցի իւրաքանչիւր անդամին
անունով, արտայայտուած՝ իր
գերագոյն մարմինին ճամբով,
երախտագիտութեան ամենաազնիւ մեր գնահատանքը արձա-
նագրենք Սուրիոյ արաբ ժողովուրդին, որուն նախնիները եւ
անոնց զաւակները գրկաբաց, սիրով եւ գորովազին ընդունե-
ցին եւ հոգատար վերաբերմունք ցուցաբերեցին անտուն,
անօգնական, յուսաբեկ, որդեկորոյս, որբ, սովէ ու ծարաւէ
փրկուած մեր պապիկ ու տատիկներուն, հայրերուն ու մայ-
րերուն, որոնք այս երկրին մէջ ու մասնաւորաբար այս քաղա-
քին մէջ գտան ապաստան, պատսպարան եւ տարիներու
ընթացքին նախ շտկեցին իրենց ողնասիւնը, անգամ մը եւս
բարձրացուցին իրենց ճակատը, դիտեցին հորիզոններ, վերա-
կազմեցին իրենց տաք բոյները եւ ընտանիքները, կառուցեցին
դպրոց, եկեղեցի՝ հաւաքաբար պահելու համար Մեսրոպեան
տառերով հայոց լեզուն, Գրիգոր Լուսաւորիչի շունչով աղօթ-
քը, Հայկ նահապետի եւ Արամ Մանուկեանի կորովով արձա-
նագրուած հայոց պատմութիւնը:

Բի՛ւր շնորհակալութիւն եւ յարգանք Սուրիոյ արաբ ժողո-
վուրդին եւ անոր ողջմիտ ղեկավարութեան:

Վեց դար ստրուկ ապրած տարաբախտ հայ ազգի զարթօն-
քի բարեբախտ օրերուն հայ ժողովուրդի ծոցէն ծնունդ առած
սկառուտական-մարզական միութիւնը՝ Հայ Մարմնակրթական
Ընդհանուր Միութիւնը այսօր 106 տարեկան է:

106 տարեկան, բայց միշտ երիտասարդ, եռանդ ու ոգեւո-
րութիւն վարակող,

106 տարի անաղմուկ եւ կարգապահ շարքերով տողանցող,
բայց հոգիներ թնդացնող,



106 տարի Արարատ ու
Եռագոյն կրող նոյն, բնաւ
չմաշող, բայց՝ յարգանք պար-
տադրող տարազով,

106 տարի շարունակ ու
աննահանջ, հակառակ հալա-
ծանքներու, արգելքներու եւ
խոչընդոտներու՝ յամառեցաւ
բոլոր գլուխներէ վեր բարձ-
րացնել ու ծածանել Հայաս-
տանի Հանրապետութեան
Եռագոյն դրօշը եւ շեփորա-
հարել ազգային օրհներգը՝
«Մեր հայրենիք»ը,

106 տարի, ընտանիքի եւ
դպրոցի կողքին, եղած է դաստիարակող հայ պատանին եւ
երիտասարդը՝ ըլլալու բարի, ազնիւ, աշխատասէր, ազգասէր
ու հայրենասէր հայորդի,

106 տարի եղած է «ՄԻՇՏ ՊԱՏՐԱՍՏ» եւ «ԼԱԻԱԳՈ՛ՅՆ»ը:

106 տարի եւ տակաւին «Նահատակ ցեղի անմահներ»ը,
«վրէժի գրահներ»ը, «հսկայ նուիրման հրաթեւ տորմիղ»ը՝
«կամաւոր բանակ»ը կը շարժի յառա՛ջ, դրօշ Եռագոյնը կոթո-
ղելու կատարն հայրենի լեռանց հեռագոյն:

Փառահեղ երթ:
Այս երթի իրագործման մէջ գլխաւոր դերակատարութիւն
վերցուցած Հ.Մ.Ը.Մ.Ի շրջաններէն մէկը եղած է Սուրիոյ կա-
ռույցը, որ տասնամեակներ շարունակ իր կազմակերպական
բծախնդրութեամբ, անսակարկ ծառայութեամբ, անշեղ սկզբ-
բունքայնութեամբ, գիտակից շարքերով մղիչ ուժը հանդիսա-
ցած է միութեան երթին յաջող ընթացքին:

Փաստ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի աշխարհասփիւռ մասնաճիւղերու կամ
տարբեր գաղութներու մէջ հաստատուած կազմակերպու-
թիւններու գործունեայ տարրերու յարգելի տոկոսը կը կազ-
մեն Սուրիոյ մեր մասնաճիւղերուն մէջ հասակ նետած տա-
րազաւորները:

Եւ վստահ այլ որակի վերաբերում, պակասաւոր նուիրում
կամ անբաւարար կազմակերպուածութիւն կարելի չէր սպա-
սել Զարեհաշնորհ հովանաւորութեան տակ գործող մեր Սուր-
իոյ կառույցէն:

Հ.Մ.Ը.Մ.Ի հիմնադրութեան 106-ամեակի տօնակատարու-

Թեան այս ձեռնարկին անգամ մը եւս լսենք մեր միութեան յղուած սրբազան ուղերձ մը:

«Յայ ազգի կեանքին մէջ պատահած հրաշքներէն մէկն է, անտարակոյս, կազմութիւնն ու զարգացումը Յ.Ս.Ը.Ս.ին՝ որպէս կոթող անցեալի փառքին ու գրգիռ՝ ապագայի առաւել փառաւոր գործունէութեան:

«Ըստ Սեզի, որ այս հրաշալի կազմակերպութեան մեղուաջան աշխատանքին ու յարաճուն վերելքին ականատես վկան ենք մօտ քսան տարիներէ ի վեր, Յ.Ս.Ը.Ս.ը չէր եւ հետագային երբեք պէտք չէ ըլլայ հայ պատանիին միայն Ֆիզիքական ուժին զարգացումին ազդակը, այլ առողջ մարմնին մէջ, առողջ հոգիին հետ պէտք է կերտէ անոր նկարագիրը, որուն դրոշմէն սեւեռած կը մնան Յ.Ս.Ը.Ս.ին ու այս՝ իրաւամբ»:

«Քսաներորդ դարու աշխարհացունց գիտերու եւ աննախատեսելի վերիվայրումներու շրջանին Յ.Ս.Ը.Ս.ի գլխաւոր եւ նախախնամական պարտականութիւնը պէտք է ըլլայ կերտումը այդ նկարագրին, որպէսզի հայ ազգի կանչին, տագնապի մէջ կամ ուրախութեան առիթով, իր ամբողջ կարելիութեամբ կարենայ պատասխանել՝ «ՄԻՇՏ ՊԱՏՐԱՍ»: Ու յարատեւ բարձրանայ՝ իրեն հետ բարձրացնելով անոնք, որոնք նիւթողէն եւ հոգեկան իրենց աչքերը սեւեռած կը մնան Յ.Ս.Ը.Ս.ին ու այս՝ իրաւամբ»:

Զարեհ Ա. Կաթողիկոս Սեծի Տանն Կիլիկիոյ:

Վեհափառ տէ՛ր, Հ.Մ.Ը.Ս.ը հաւատարիմ է Ձեր պատգամին, մասնաւորապէ՛ս՝ Սուրբիոյ ձեր սրտին մօտիկ չըմանը:

Վա՛րձքը կատար Հ.Մ.Ը.Ս.ի այս միջնաբերդը հիմնողներուն, քար առ քար անոր պարիսպները բարձրացնողներուն եւ մինչեւ օրս զայն անառիկ պահողներուն:

Կրկնակի՛ վարձքը կատար բոլոր Հ.Մ.Ը.Ս.ականներուն, որոնք պատնէջի վրայ մնացին ու ղեկավարեցին Սուրբիոյ գաղութին գոյութիւնը, ու այդ կարգին՝ մեր կառույցը, ըլլայ այդ 1960-ական թուականներու հալածանքներու ժամանակաշրջանին, կամ 2011-էն սկսեալ եւ շուրջ 12 տարիներու վրայ երկարած Սուրբիոյ դէմ շղթայազերծուած միջազգային պատերազմի օրերուն:

Յիշատակը անթառամ մնայ այս երկու ժամանակաշրջաններու բոլոր նահատակներուն՝ Սահակ Նալպանտեանէն մինչեւ Բաֆֆի Պաքճեան:

Այսօր մենք բացակայ չենք դներ եղբ. Յարութ Բանոյեանին, եղբ. Յակոբ Աստարճեանին եւ եղբ. Մոսիկ Սեքլճեանին, որոնք չորս տարի առաջ, այս պահուն, իրենց զինակիցներուն հետ Շուշիի ինքնապաշտպանութեան մարտերը կը մղէին ազերի-թուրք բանակներուն դէմ, եւ 5 Նոյեմբերին, հաւատարիմ՝ իրենց երդումին, վասն հայրենեաց կը նահատակուէին ու կը մտնէին հայ քաջարիներու պանթէոն:

«Նրանք ընկան կռիւներում Բայց ապրում է հոգին նրանց Ապրողների հոգիներում»:

Պատիւը ձե՛րն է:



106 տարիներու յաջողութիւններու եւ իրագործումներու նշումը սակայն չի հանգստացներ մեր ներաշխարհը,

- Որովհետեւ մեր բազմերակը կը բաբախէ հայու ազգային զգայարաններու կշռոյթով, բայց 9 Նոյեմբեր 2020-էն ետք այդ կշռոյթը մեզի հարազատ չէ:

- Որովհետեւ 9 Նոյեմբեր 2020-էն ետք ազատագրելի Արարատի լանջերուն բանակելու մեր սկառուտ տարագաւորներուն երազն իսկ ապօրինի կը նկատուի:

- Որովհետեւ 9 Նոյեմբեր 2020-էն ետք ազատագրելի Տարօնի Բագրեւանդ գաւառի մէջ մեր Նաւասարդեան խաղերը վերականգնելու կամքը թշնամական գաղափար կը սեպուի:

- Որովհետեւ «Քանի Արցախը կայ, լաւ չենք ապրելու» թեզը քարոզողները ու Արցախը բեռ նկատող անոնց հետեւորդները կը շարունակեն իրենց դաւադիր ծրագիրները:

Վաղ՛ւց տաճարը ներսէն քանդողները ու իրենց ձեռքով թշնամիին սուրը սրողները՝ այսօրուան խունթան կրկնօրինակն է Վասակ Սիւնիի, Մելիք Ֆրանկիլի:

Սակայն մենք՝ Հ.Մ.Ը.Ս.ականներս, Վարդան Մամիկոնեանի, Դաւիթ Բէկի ծոռները, ամենամարդաշատ, ամենատարածուած, ամենաժողովրդական միութեան անդամներ, ազգն ու հայրենիքը գերադաս արժէքներ դաւանող միութեանականներ՝

- Պիտի չհաշտուինք դաւաճանական պարտութեան հետ:
- Կառչած պիտի մնանք մեր ազգային արմատներուն:
- Պատուով պիտի շարունակենք մեր ազգանուէր ու հայրենանուէր առաքելութիւնը:

- Անհպելի պիտի պահենք մեր ազգային արժեհամակարգը՝ լեզու, կրօն, մշակոյթ, ընտանիք, պատմութիւն, բարքեր:

- Բուռն կերպով պիտի պայքարինք կառույցներ կազմաքանդող համաշխարհայնացման ալիքներուն ու աղանդաւորական հոսանքներուն դէմ:

Ու պատրաստ ըլլանք, որ երբ տայ զանգը, ահագանգը, ու գահին նստած հայ իշխանը հայ տառերով գրէ հայոց հրաման՝ շարժինք յառա՛ջ դէպի Արցախ, Տիգրանակերտ, Մուշ, Պայազիտ ու Վան, «որ մեր հոգու պարտքը տանք»:

ԻՐ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ԵՒ ԿՈՉՈՒՄԻՆ ԳԻՏԱԿԻՑ ՄԻՈՒԹԻՒՆ ՄԸ ՄԻԱՅՆ ԿՐՆԱՅ ԱՅՍՔԱՆ ԲԱՐԻՔ ՏԱԼ ԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ ԵՂԲ. ՎԻԳԻՆ ԱՒԱԳԵԱՆԻ ԽՕՍՔԸ,
ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-Ի 35-ԱՄԵԱԿԻ ՃԱՇԿԵՐՈՅԹԻՆ, ԵՐԵՒԱՆ)

Տօն է այսօր Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ըն-
տանիքին համար:

Բոլորը հաւաքուած են նշելու
սիրելի յոբելեարին՝ Հ.Մ.Ը.Մ.-
ՀԱՍԿ-ի 35-ամեակը:

Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ը երիտա-
սարդ է իր տարիքով, բայց իւրայա-
տուկ է իր կենսափորձով: Արդա-
րեւ,

- Անկախ Հայաստանի մէջ կա՞յ
պատանիներով ու երիտասարդնե-
րով զբաղող միութիւն մը, որ 35
տարիէ կամաւոր կերպով կը գործէ անհատին մէջ մարդը,
մարդուն մէջ ազնիւ քաղաքացին կերտելու առաքելութեամբ:

- Կա՞յ միութիւն մը, որ 28 տարիէ ի վեր, 1996-էն սազին՝
հայութիւնը կը ներկայացնէ միջազգային ընտանիքին մօտ,
այնպէս ինչպէս Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ը հայ սկստուտութիւնը կը
ներկայացնէ Համաշխարհային Սկստուտական Շարժումին
մօտ:

- Կա՞յ միութիւն մը, որ անցնող 35 տարիներուն հիւրընկա-
լած է համահայկական իր կառուցին մեծագոյն ձեռնարկները՝
8 ընդհանուր բանակումներ, 4 մարզախաղեր, 4 խմբապետա-
կան համագումարներ, միջ-դիւանական խորհրդաժողով եւ 6
Պատգամաւորական Ընդհանուր ժողովներ, եւ այս բոլորը՝
տարուէ տարի աճող մասնակիցներու թիւերով ու հետզհետէ
աւելի կատարեալ կազմակերպումով:

- Յուշեցէ՛ք, կա՞յ միութիւն մը, որ իր կարիքները բաւա-
րարելէ ետք, ընդառաջած է նաեւ քոյր շրջաններու՝ Թիֆլիսի,
Մոսկուայի եւ Արցախի մասնաճիւղերու կարիքներուն:

- Կա՞յ միութիւն մը, որ քառայարկ կեդրոն ունի Երեւանի
մէջ, հսկայ բանակավայր մը Բիւրականի մէջ, յարմարաւէտ
երկրորդ մը Երեւանի մէջ, տակաւին առանց անդրադառնա-
լու տարբեր քաղաքներու մէջ իր ունեցած կեդրոններուն եւ
զբասնեակներուն:

- Ըսէ՛ք, գոյութիւն ունի՞ միութիւն մը, որ սփիւռքեան չա-
րիքը բարիքի վերածած է՝ իր դռներն ու սրտերը լայն բանա-
լով Իրաքի, Սուրիոյ, Իրանի եւ Լիբանանի շրջաններէն
հայրենիք հաստատուած բազմահարիւր պատանիներու եւ
երիտասարդներու:

- Վերջապէս, ցո՞յց տուէք միութիւն մը, որ այսքան աշխոյժ



կերպով լծուած է Արցախի տեղա-
հան ժողովուրդի զաւակներուն
խինդ ու ժպիտ բաշխելու, անոնց
ծանր ու ճնշիչ առօրեան թեթեւցը-
նելու կենսական աշխատանքին:

Իր առաքելութեան եւ կոչումին
գիտակից միութիւն մը միայն կըր-
նայ այսքան բարիք տալ իր ժողո-
վուրդին, գործ ու արդիւնք՝ իր հայ-
րենիքին:

Իր առողջ միջնորդտով, բարո-
յական մեծ վարկով ու միջազգա-

յին ճանաչումով միութիւն մը միայն կրնայ այսքան փնտրու-
լած ու յարգուած ըլլալ:

Յարգանքը, սակայն, յոբելեար միութեան չի վերաբերիր
միայն, այլ նաեւ՝ միութեան անդամներուն:

Խիղճի պարտք է 35-ամեակի տօնակատարութեան այս պա-
հուն յիշել եւ զնահատել Հայաստանի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի վերըն-
ձիւղման առաջին սերունդի երախտաւորները՝ եղբ. Վարդան
Բախչեանը (Կեդրոնական Վարչութեան մեր նահատակ եղբայ-
րը), մեր մէջ ներկայ եղբ. Բագրատ Եսայեանը (Կեդրոնական
Վարչութեան մեր սիրելի նախկին անդամը) եւ տակաւին ու-
րիշներ, որոնք 70 տարուան արգելքէ ետք՝ կազմակերպութիւն
ստեղծեցին, գաղափարախօսութիւն տարածեցին եւ սկստու-
տական շարժումը վերակենդանացուցին նորանկախ հայրենի-
քի մէջ:

Պէտք է յիշել եւ խոնարհիլ յիշատակին դիմաց Հ.Մ.Ը.Մ.-
ՀԱՍԿ-ի այն բոլոր նահատակներուն, որոնք իրենց թանկա-
զինը՝ գարուն կեանքերը զոհաբերեցին հայրենիքին եւ հայու-
թեան համար: Յաւե՛րժ ապրի անոնց յիշատակը:

Պէտք է յիշել մանաւանդ սեւ աշխատանքի ախոյեան մեր
քոյրերն ու եղբայրները, յաջողական վարչական կազմերու
եւ յանձնախումբերու անդամները, որոնք յոգնութիւն չճանչ-
ցան իրենց ծառայութեան մէջ: Գործեցին անձնուէր, մարդա-
սէր եւ ազգասէր մարդու օրինակով: Հ.Մ.Ը.Մ.ը նման
խոնարհներու կը պարտի իր յաջողութիւնները:

Վերջապէս, յիշե՛ք ու զնահատենք անոնք որոնք պատնէշի
վրայ են այսօր: Անոնք որոնք մտածումով, խօսքով ու գործով
կապուած են այս միութեան եւ որոշած են Հ.Մ.Ը.Մ.ի սիրոյն
զոհել ամէն բան եւ իրենց բոլոր կարողութիւններով «Միշտ

պատրաստ» ըսել եւ յարատեւ բարձրանալ, իրենց հետ բարձրացնելով իրենց շրջապատը:

Հ.Մ.Ը.Մ-ը, սիրելիներ, այս բոլորով Հ.Մ.Ը.Մ. է:

Բոլորին գոհողութիւններուն գումարն է, որ այս միութիւնը արժանի կը դարձնէ Հայաստանի Ազգային Սկառուտական Կազմակերպութիւնը ըլլալու եւ մնալու կոչումին:

Բոլորին նուիրաբերումի անչափելի տարողութիւնն է, որ այս միութիւնը կը պահէ Հայաստանի ամէնէն աշխոյժ, ամէնէն ազգային եւ ամէնէն յանձնառու պատանեկան-երիտասարդական կազմակերպութիւնը:

Ու բոլորին վստահութիւնը եւ երբեմն խենթութեան աստիճանի հասնող հաւատքն է, որ այս միութիւնը կ'օտտէ ամէն ձեւի դժուարութիւն յաղթահարելու եւ անկարելի կարելի

դարձնելու զօրութեամբ:

Փա՛ռք հաւատքի աղբիւր Հ.Մ.Ը.Մ.ին: Շնորհաւո՛ր անոր 35-ամեայ յոբելեար Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ին:

Շնորհաւորութիւններ նաեւ հանդիսաւոր այս պահուն պարգեւատրուած մեր վաստակաշատ եղբայրներուն: Պատի՛ւս արժանաւորաց:

Կը մնայ մաղթել, որ 35-ամեակի այս երթը բոլորիս ճիգերով ըլլայ անխափան:

Թող նորանոր ամեակներ հարստացնեն Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի պատմութիւնը, որպէսզի ան թիւով ու որակով աւելի զարգանայ, մեծնայ, ուժեղանայ եւ անվերջ իրագործումներով հարստացնէ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը, համայն հայութիւնն ու Հայաստանը:

ԴՈՒՔ ՍՈՎՈՐԱԿԱՆ ՍԿԱՌՈՒՏՆԵՐ ՉԷՔ, ԴՈՒՔ «ՆԱՀԱՏԱԿ ՑԵՂԻ ԿԱՄԱՒՈՐ ԲԱՆԱԿ»ԻՆ ՁԻՆՈՒՈՐՆԵՐՆ ԷՔ (Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ ՔՈՅՐ ԹԱԼԻՆ ՕՐՏՈՂԼԵԱՆԻ ԽՕՍՔԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-Ի 35-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒՒՐՈՒԱԾ՝ ՍԿԱՌՈՒՏԱԿԱՆ ԽՈՍՏՄԱՆ ԵՒ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ)

Իրեւ Հ.Մ.Ը.Մ.ականներ, բոլորիս համար հպարտառիթ երեւոյթ է տեսնել եւ ներկայ ըլլալ Հ.Մ.Ը.Մ.ի շրջանի մը հիմնադրութեան ամեակներու հանդիսութիւններուն, որոնք լոկ բազմութիւն հաւաքող ձեռնարկներ չեն եւ անոնց արժէքը մէկ կամ երկու ժամուան հանդէսին մէջ չէ որ կը կայանայ: Այս հանդիսութիւններուն լիիրաւ արժէքը պէտք է տեսնել արդասիքը տարիներու աշխատանքին, այս միութեան սկզբունքներուն հաւատացող եւ անոնց հիման վրայ գործող մարդոց կամքի զօրութեան:



ներ գործողութեան Հայաստան՝ բանակումներ կազմակերպելու եւ սկառուտական աշխատանքի սերմերը ցանելու համար: Ու այսպէս, Հայաստանի մէջ սկսան կազմուել սկառուտական բջիջներ, որոնք տարիներու վրայ բազմացան, ցանուած սերմերը ծլեցան ու ծաղկեցան՝ մասնաճիւղեր հիմնուեցան, սկառուտական շարքերը խիտ դարձան եւ այսօր մենք ակնատես վկաներն ենք այդ իրականութեան, երբ մեր դիմաց կը տեսնենք կազմակերպուած այդ խիտ շարքերը: Հ.Մ.Ը.Մ.ը դարձաւ Հայաստանի Ազգային Սկառուտական Կազմակերպութիւն՝ ճանչցուելով իրեւ Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ եւ այսօր ան անդամ է Համաշխարհային Սկառուտական Շարժումին:

Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ը այսօր կը տօնէ իր հիմնադրութեան 35-ամեակը, սակայն Հայաստանի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի կեանքը շատ աւելի կանուխ սկսած է անիկա հայրենիք մուտք գործեց առաջին անկախութեան հետ՝ որբախնամի հայրենանուէր առաքելութեամբ: Դժուար պարտականութիւն մը այդ օրերուն համար, երբ հազարաւոր որբեր կարիքը ունէին զիրենք գրկողի եւ գուրգուրացողի: Եւ Հ.Մ.Ը.Մ. տէրը դարձաւ այդ ծանր պարտականութեան: Կարճատեւ մը ետք սակայն, պատմութիւնը այլ ընթացք ունեցաւ եւ Հ.Մ.Ը.Մ. պարտաւորուեցաւ դուրս գալ Հայաստանէն եւ 70 տարի Սփիւռք դարձաւ՝ իր սրտին մէջ պահելով Եռագոյնն ու հայրենիքը: Պատմութիւնը նոր անկիւնադարձ մը ունեցաւ, երբ 1989-ին Հ.Մ.Ը.Մ. վերադարձաւ հայրենիք՝ օրուան Կեդրոնական Վարչութեան օրհնութեամբ եւ զօրակցութեամբ:

Այսօր ձեզմէ շատեր պիտի տան Հ.Մ.Ը.Մ.ական սկառուտի իրենց խոստումը: Դուք ձեր պատուոյն վրայ պիտի խոստանաք ըլլալ հաւատարիմ Աստուծոյ, ծառայել հայրենիքին եւ գործել բարիքներ: Ես վստահ եմ, որ դուք տէրը պիտի ըլլաք ձեր տուած խոստումին եւ ձեր առաւելագոյնը պիտի տաք, որովհետեւ դուք ունիք լաւագոյն օրինակները հայրենիքի ծառայութեան: Ամէն անգամ, որ դուք մուտք կը գործէք Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի Երեւանի կեդրոնը, ձեր աչքերուն դիմաց կը տեսնէք նկարները տակաւին քանի մը տարի առաջ սկառուտական շարքերու անդամ նահատակ եղբայրներու, իսկ երբ ամբողջ կը բարձրանաք Բիւրականի «Գառնիկ Մկրտիչեան» բանակավայր՝ հոն ալ ձեզ պիտի դիմաւորէ «Միզախներու պուրակը»՝ նուիրուած Արցախեան պատերազմին նահատակուած սկառուտներու, որոնք Հ.Մ.Ը.Մ.ական սկառուտի խոստումը

բառերու ու խօսքի սահմաններէն դուրս բերելով՝ զանոնք գործի վերածեցին, տալով իրենց գերագոյնը եւ իրենց արիւնով ուղղելով հայրենիքի սրբազան հողը:

Հետեւաբար, յատկապէս այսօր խոստում տուող քոյրեր եւ եղբայրներ, տէրը եղէք ձեր սկառստական խոստումին: մնացէք հաւատարիմ Աստուծոյ, գործեցէք բարիքներ եւ միշտ ծառայեցէք մեր բոլորին հայրենիքին: ՀԱՍԿ-ի նստավայրի պատերուն վրայ տեղադրուած հերոս նահատակներուն նկարները, ինչպէս նաեւ Բիւրակահնի բանակավայրին մէջ ծաղկած պուրակը թող դառնան ձեր հայեացքներուն կիզակէտը եւ կողմնացոյցը ձեր աշխատանքներուն: Դարձէ՛ք արժանի յա-

ջորդները այդ նահատակներուն, որոնք չսակարկեցին, երբ հայրենիքը զիրենք կանչեց եւ իրենց կեանքը նուիրելով փաստեցին, որ իրենք արժանաւոր զինուորներն են Հ.Մ.Ը.Մ-ի «կամաւոր բանակ»ին: Դուք եւս զինուորներն էք այդ «կամաւոր բանակ»ին եւ դրօշն ու ջահը այսօր ձեզի փոխանցուած են: Բարձր պահեցէք զանոնք եւ ձեր այսօրուան տուած խոստումին բառերը գործի վերածելով դէպի յառաջ քալեցէք խրոխտ ու հպարտ, որովհետեւ դուք սովորական սկառստներ չէք, ԴՈՒՔ Հ.Մ.Ը.Մ-ի սկառստներն էք, ԴՈՒՔ «Նահատակ ցեղի կամաւոր բանակ»ին զինուորներն էք:

ՕԳՏՈՒԻՆՔ ԱՆՑԵԱԼԻ ՓՈՐՉԱՌՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ, ԽԱՆԴԱՎԱՌՈՒԹԵԱՄԲ ՈՒՂՂՈՒԻՆՔ ԳԷՊԻ ԱՊԱԳԱՅ

10 Հոկտեմբեր 2024-ին, Սիտնիի Willoughby Uniting եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցաւ Դ.Յ.Դ. Աւստրալիոյ կառոյցի հիմնադրութեան 60-ամեակին նուիրուած հանրային լսարանը, ուր ողջոյնի խօսքեր արտասանեցին Դ.Յ.Դ. Բիւրոյի, ՀՊՄ-ի եւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութիւններու ներկայացուցիչները: Հ.Մ.Ը.Մ-ի խօսքը փոխանցեց Կեդրոնական Վարչութեան Աւստրալիոյ անդամ Եղբ. Տիրան Վահրատեան: Ստորեւ՝ խօսքին ամբողջութիւնը:



առաջնորդ: Հ.Մ.Ը.Մ., իբրեւ ուղեկից միութիւն, տեւաբար սատար կանգնած է Հ.Յ.Դ-ի բոլոր ծրագրերներուն, որովհետեւ հաւատացած է, որ իր եւ Հ.Յ.Դ-ի վերջնական նպատակները նոյնն են: Հ.Մ.Ը.Մ., ինչպէս Հ.Յ.Դ-ն, հաւատացած է Հայ Դատի եւ Արցախի պայքարին, հայութեան կազմակերպման եւ հօրացման, Հայաստանի պետականութեան ամրապնդման եւ արդիականացման: Հետեւաբար, պատիւ է վկայել նման կուսակցութեան մը մասին, որ ամբողջական կերպով նուիրուած է իր ժողովուրդին եւ հայրենիքին:

Յարգելիներ, Քիչ ետք, տեսանիւթով մը պիտի ծանօթանաք Հ.Մ.Ը.Մ-ի աշխարհատարած գործունէութեան: Տեսանիւթին պատրաստութենէն անցած է որոշ ժամանակ եւ այս միջոցին մենք կորսնցուցած ենք Արցախը, Հայաստանը վտանգուած է եւ ինչպէս համայն հայութիւնը, Հ.Մ.Ը.Մ-ը եւս կը կանգնի նոր իրականութիւններու դէմ յանդիման:

Պարտականութիւնը եւ պատիւը ունիմ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անունով ողջունելու Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Աւստրալիոյ կառոյցին հիմնադրութեան 60-ամեակը:

Նախ՝ պարտականութիւն, որովհետեւ իբրեւ Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքի ներկայացուցիչ, կարիքը չկայ հաստատելու, որ Հ.Մ.Ը.Մ. ծնունդն է Հայ Յեղափոխական Դաշնակցութեան: Աւստրալիոյ մէջ կուսակցութեան ստեղծումէն տարի մը ետք ստեղծուած է Հ.Մ.Ը.Մ-ը՝ Սիտնիի իր «Անդրանիկ» մասնաճիւղով, ապա՝ Մելպուռնի եւ Սիտնիի մնացեալ մասնաճիւղերով:

Հետեւաբար, Աւստրալիոյ Հ.Մ.Ը.Մ-ը իր ստեղծման, զարգացման եւ վեց տասնամեակի գործունէութեան համար շատ բան պարտական է Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, որուն համար պարտականութիւն կը զգայ շնորհաւորել 60-ամեակը եւ յաջողութիւն մաղթել դէպի 100-ամեակ երթին:

Երկրորդ հերթին, պատիւ է ողջունել 60-ամեակը կուսակցութեան մը, որ կեդրոնական տեղ ունեցած է աւստրալահայութեան կեանքին մէջ: Եղած է Հայ Դատի գործունէութեան մղիչ ուժ, հայապահպանման աշխատանքներու ղեկավար եւ

Այս պայմաններուն մէջ, Հ.Մ.Ը.Մ- իր աշխատանքներուն մէջ առաջնահերթ տեղ տուած է Արցախին եւ Արցախի հայութեան: Ստեղծած է Հ.Մ.Ը.Մ-ի «Արցախ հիմնադրամ», իր մարզիկներու եւ սկառստներու տարագններուն վրայ զետեղած է Արցախի յատուկ պէճ, Արցախի մասնաճիւղը կանգուն պահած է Հայաստանի մէջ եւ Արցախի իր սկառստները մասնակից դարձուցած է Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի շրջանի Մալիսեան փառատօնին եւ Շուէտի մէջ տեղի ունեցած Եւրոպական ցամաքամասի Հ.Մ.Ը.Մ-ական առաջին բանակումին:

Աւելին, Հ.Մ.Ը.Մ-ի «Արցախ հիմնադրամ»ը Հ.Մ.Ը.Մ-ՀԱՍԿ-ի հետ գործակցաբար, անցնող ամիսներուն, Հայաստանի մէջ բազմաթիւ ճամբարներ կազմակերպած է արցախցի 850 երեխաներու համար:

Այս բոլորը կատարուած են կողքին Հ.Մ.Ը.Մ.ի ընթացիկ այլ աշխատանքներու, ինչպէս՝ սկստական խմբապետական համագումար Գահիրէի մէջ, Եւրոպայի ցամաքամասի սկստական առաջին բանակում Շուէտի մէջ:

Իբրեւ անմիջական ծրագիրներ, յառաջիկայ շաբաթ տեղի կ'ունենայ քարոզչական առցանց երկրորդ համագումարը, իսկ յառաջիկայ ամիս Հայաստանի մէջ կը կազմակերպուի Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային եւ Մեկուսի շրջաններու դիւանական 11-րդ խորհրդաժողովը, որ կը զուգարկուի Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի հիմնադրութեան 35-ամեակի տօնակատարութիւններուն:

Աշխատանքները շատ են, ծրագիրները՝ աւելի: Կը բաւէ միայն յիշել, որ Աւստրալիոյ շրջանը կը պատրաստուի 145 մարզիկ-մարզիկուհիներով իր մասնակցութիւնը բերել 2025-ի Յուլիսին Հայաստանի մէջ տեղի ունենալիք համա-Հ.Մ.Ը.Մ.ական 12-րդ մարզախաղերուն:

Այս բոլորը կարելի պիտի չդառնային, եթէ չըլլար մեր ժողովուրդին եւ անոր ծոցէն ծնած Հայ Յեղափոխական Դաշնակցութեան տեւական նեցուկը Հ.Մ.Ը.Մ.ին:

60-ամեակը թող նոր մեկնակէտ մը ըլլայ գործակցութեան: Օգտուելինք անցեալի փորձառութիւններէն եւ նոր խանդավառութեամբ ուղղուինք դէպի ապագայ, միշտ կողք-կողքի, հայր ու զակի նման, փոխադարձ յարգանքով ու սիրով:

Ի վերջոյ, «Կամաւոր Բանակ»ը եւ «Երդուեալ բանակ»ը միասնաբար մեր ժողովուրդը պիտի առաջնորդեն իր անկատար տենչերուն իրականացման՝ Արցախի ազատագրման, Հայ Դատի արդար լուծման եւ ամբողջական հայութեամբ ամբողջական Հայաստանի կերտման:

Կեցցէ՛ Հ.Մ.Ը.Մ.ը եւ կեցցէ՛ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը:

ՍԱ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ Է, ՈՐ ՉՈՒՆԻ ԱՒԱՐՏ

(Հ.Մ.Ը.Մ.ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ
ՔՈՅՐ ՍԱՆՏՐԱ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍՔԸ՝
ԹԵՀՐԱՆԻ ՀՄԱԿ-Ի 80-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ)

Որբաթ, 6 Դեկտեմբեր 2024-ին, Թեհրանի «Արարատ» մարզաւանի «Սասունցի Դաւիթ» սրահին մէջ տեղի ունեցաւ Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպութեան հիմնադրութեան 80-ամեակի յոբելեանական ձեռնարկը, մեծ շուքով, պաշտօնական եւ գեղարւեստական յայտագիրով: Ձեռնարկին ներկայ գտնուեցաւ եւ Հ.Մ.Ը.Մ.ի ողջոյնի խօսքը արտասանեց Կեդրոնական Վարչութեան անդամ քոյր Սանտրա Վարդանեան:

Ստորեւ՝ քոյր Վարդանեանի խօսքին ամբողջութիւնը:

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Պատգամաւորական ժողովի պատուարժան դիւան.

Թեհրանի Հայոց Թեմի Թեմական Խորհրդի յարգարժան անդամներ,

ՀՄԱԿ-ի Կենտրոնական Վարչութեան յարգելի անդամներ, Սիրելի ներկաներ, քոյրեր ու եղբայրներ,

1944 թուականին, Թեհրանում, համաշխարհային եւ ներքաղաքական ծանրագոյն պայմաններում, քաջ գիտակցելով համայնքին սպառնացող լրջագոյն սպառնալիքները, մի խումբ գաղափարակից, յաւակնոտ եւ մի գուցէ շրջապատի կողմից քիչ հասկանալի երիտասարդներ, հիմքը դրեցին այս կազմակերպութեան եւ նրանց երազը իրականացաւ ու միս ու արիւն առած շարունակում է քայլել ցայսօր՝ արդէն 80 տարի:

Բայց դա ինքնանպատակ որոշում ու ցանկութիւն չէր: Նրանք՝ Յակոբ Կարապենցը, Հրայր Մարուխեանը, Նորայր Պահլավունին, Սեպուհ Յովհաննիսեանը, Վաչիկ Զարաբէկեանը եւ այլոք այդ կազմակերպական մեծ քայլը կատարեցին, իրենց առջեւ ունենալով 1918 թուականին հիմնադրուած, տակաւին երիտասարդ բայց Հայաստանի առաջին Հանրապետութեան եւ սփիւռքեան պայմաններում աշխատած Հայ Մարմ-



նակրթական Ընդհանուր Միութեան յաջողուած փորձը:

Բացարձակ պատահական չէ, եւ ինձ համար մեծ պատիւ, յուզմունք եւ պարտաւորութիւն է, որ այսօր, այստեղ, ունեմ հնարաւորութիւն, ինձ, հասարակական եւ գաղափարական անփոխարինելի դաստիարակութիւն, մտածողութիւն, գիտելիքներ եւ հմտութիւններ փոխանցած Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպութեան 80-ամեակը ողջունել եւ շնորհակարար իմ մեծ ընտանիքի՝ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան համաշխարհային կառոյցի Կենտրոնական Վարչութեան անունից:

Եւ սա մեր երկու ուղեկից, թոյլ տուէք ասել նոյնական կազմակերպութիւնների հիմնադիրների եւ նրանց փոխարինող սերունդների աշխատանքի եւ գաղափարի համագգային արժէքն է, որը արտացոլում է այս դարբնոցից անցած ցանկացածիս կեանքում, աշխատանքում եւ մօտեցումներում՝ ուր էլ որ լինենք Մայր Հայրենիքում, Արցախում թէ Սփիւռքում,

ՀՄԱԿ-ում թէ Հ.Մ.Ը.Մ-ում: Վկան Հ.Մ.Ը.Մ-ի տարբեր շրջաններում, սկստակապ, մարզական եւ վարչական աշխատանքներում ներգրավուած մեծաթիւ «Արարատականներ»-ի նուիրումն ու ներդրումը: Սա առաքելութիւն է, որ չունի աւարտ:

Իսկ այսօր, երբ ցաւօք, ազգային արժէքների դեմ պայքարը դարձել է համակարգային, երբ գունաթափուում են հայ մարդու երազանքները, երբ այլափոխում է սերունդների կրթութեան եւ պատմութեան ընթացքը, աւելի են մեծանում մեր կազմակերպութիւնների առջեւ ծառայած խնդիրներն ու

մարտահրաւէրները, որը պէտք է յաղթահարենք մեր միասնական կամքով ու սերտ համագործակցութեամբ, նոր մօտեցումներով, բայց միտամանակ ամուր կառչած մնալով որպէս աւանդ մեզ փոխանցուած գաղափարներին ու նպատակներին:

80-ամեայ յրբեկանդ շնորհաւոր իմ հարազատ կազմակերպութիւն: Սահուն եւ բեղուն տասնամեակներ Քեզ:

Յաւերժ փառք քո հիմնադիրներին եւ իրենց նուիրումն քեզ բերած հայորդիներին:

Տօնդ շնորհաւոր իմ Արարատական Ընկեր:

Ո՞Վ ԵՆՔ ՄԵՆՔ, ԻՔՐԵՒ Հ.Մ.Ը.Մ. ԵՒ ՀԱՅՈՒԹԻՒՆ, Ո՞ՒՐ Կ'ԵՐԹԱՆՔ ԵՒ ԻՆՉՈ՞Ւ Կ'ԵՐԹԱՆՔ (Հ.Մ.Ը.Մ-ի ՊԱՂՏԱՏԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻ 75-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔԻ ԵՒ ԵՐԱԽՏԻՔԻ ԽՕՍՔ)

Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վիգէն Աւագեանի ստորեւ տրուած խօսքը սկզբունքով պիտի արտասանուէր Հ.Մ.Ը.Մ-ի Պաղտատի մասնաճիւղի հիմնադրութեան 75-ամեակին նուիրուած Շրջանային 39-րդ մարզահանդէսին, 26 Սեպտեմբեր 2024-ին:

Օրին, Լիբանանի ծանօթ պայմաններուն բերումով, եղբ. Աւագեան վերջին պահուն չկարողացաւ ներկայ գտնուիլ Պաղտատ, սակայն խօսքը, իբրեւ վկայութիւն եւ մասնաճիւղին հանդէպ գնահատանքի արտայայտութիւն, կը փոխանցենք ամբողջութեամբ:

Ուրախութիւն եւ հպարտութիւն է այսօր ներկայ ըլլալ այստեղ, Հ.Մ.Ը.Մ-ի Պաղտատի մասնաճիւղի 75-ամեակին նուիրուած 39-րդ մարզահանդէսին:

Ուրախութիւնը կը բխի այն իրողութենէն, որ իբրեւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ, ես պարտականութիւնը եւ պատիւը ունիմ ձեզի փոխանցելու Հ.Մ.Ը.Մ-ի համահայկական մեծ ընտանիքին ջերմ շնորհաւորութիւնները 75-ամեայ յրբեկանին առիթով:

Իսկ հպարտութիւնը կու գայ այն իրականութենէն, որ այս պահուս ես կը գտնուիմ 75-ամեայ պատկառելի գործունէութիւն, պատմութիւն եւ վաստակ ունեցող մասնաճիւղի մը պատուոյ ամպիրին վրայ:

75-ամեակ բառը կը հնչուի շատ դիւրին:

Բայց արդեօք դիւրին եղա՞ծ են անցնող 75 տարիները այս մասնաճիւղին եւ գայն ծնած ու պահած ժողովուրդին համար:

75 տարուան մէջ որքա՞ն գոհողութիւն, յոգնութիւն, ջանք ու ճիգ կայ արդեօք:

75 տարուան մէջ որքա՞ն նուիրեալներ եկած ու անցած են այս մասնաճիւղէն, անջնջելի հետք ու դրոշմ ձգելով իրենց ետին:

75 տարին քիչ ժամանակ չէ: 75 տարուան ընթացքին ինչե՛ր չէ տեսած Հ.Մ.Ը.Մ. Պաղտատը, «Նետի Ռիատի Արմանի», «Նատի Սատուն Ռիատին», մեր սիրած ու պաշտած Հ.Մ.Ը.Մ-ը:

Քաղաքական վերիվայրումնե՞ր, պատերա՞զմ, տնտեսական դժուարութիւննե՞ր, արտագա՞ղթ. ո՞ր մէկը չէ անցած այս մասնաճիւղին գլուխէն եւ, սակայն, հակառակ բոլոր փորձութիւններուն, Հ.Մ.Ը.Մ. Պաղտատ ահա՛, կանգուն է եւ աշխոյժ, միշտ երիտասարդ ու խոստմնալից:

Մասնաճիւղը կենսունակ է նաեւ անոր համար, որ ան տակաւին կը շարունակէ իրաքահայ երիտասարդութիւնը համախմբել իր շուրջ, կատարելով հայպահպանման գնահատելի աշխատանք: Այլապէս, ի՞նչպէս բացատրել այստեղ ներկայութիւնը իրաքահայ մարզական խումբերու, որոնք եկած են հեռաւոր շրջաններէ, ուր հայկական ներկայութիւն կայ, սակայն կազմակերպ միութիւն չկայ: Այս մարզահանդէսը եւ ասոր



նմանները, անցնող տասնամեակներուն, ամէն տարի յաջողած են քով-քովի բերել Քերքուկի, Պասրայի, Մուսուլի, Ջախոյի եւ երբեմնի հայաշատ այլ շրջաններու մարզիկ-մարզիկուհիները, անոնց մէջ հայրենասիրական ոգին վառ պահելով, հայութեան ու Հայաստանին հանդէպ սէրը երբեք չմարելով:

Եւ դեռ, Հ.Մ.Ը.Մ. Պաղտատ այսօր դուրս եկած է Պաղտատի եւ Իրաքի սահմաններէն եւ իր առաքելութիւնը տարածած է աշխարհով մէկ՝ շնորհիւ իրաքահայ այն բազմաթիւ քոյրերուն եւ եղբայրներուն, որոնք երկրէն մեկնելով, իրենց հետ տարած են Պաղտատի Հ.Մ.Ը.Մ.ին ազգային-հայրենասիրական շունչը, միութենական առողջ դաստիարակութիւնը եւ իրենց ապրած երկիրներուն մէջ, Մ. Նահանգներէն մինչեւ Հոլանտա, այսօր Հ.Մ.Ը.Մ.ական գործը կը շարունակեն անցեալի, Պաղտատի մէջ սորված իրենց ականդրութիւններով եւ խանդավառութեամբ:

Եւ լա՛ւ կ'ընեն ու ճի՛շդ կ'ընեն, որ իրենց գործունէութիւնը կը շարունակեն Պաղտատի մէջ իրենց տեսած ու սորված արժէքներով, որովհետեւ այստեղ տրուածը, անկասկած, եղած է ամէնէն հարազատը, ամէնէն անհաճախնդիրը եւ ամէնէն Հ.Մ.Ը.Մ.ականը: Իրաքէն դուրս ապրող մեր սիրելի Հ.Մ.Ը.Մ.ական քոյրերն ու եղբայրները շատ բան կը պարտին իրենց մայր մասնաճիւղին՝ Հ.Մ.Ը.Մ. Պաղտատին եւ կ'արժէ, որ միշտ երախտապարտ մնան անոր, բարոյական եւ նիւթական տեւական օժանդակութեամբ:

Յարգելիներ,

Մտածուած է արդեօք, որ ի՞նչ կրնար ըլլալ իրաքահայութեան կեանքը ընդհանրապէս եւ Պաղտատի հայութեան կեանքը մասնաւորապէս, եթէ երբեք չըլլար Հ.Մ.Ը.Մ.ի Պաղտատի մասնաճիւղը. սերունդներ կրթող, առողջ մարմին մէջ առողջ միտքը պատրաստող, տիպար հայր կազմաւորող, ազգասէր, հայրենասէր քաղաքացին կերտող այս եզակի միութիւնը:

Ո՛ր պիտի երթային մեր պատանիներն ու երիտասարդները, եթէ երբեք չըլլային Հ.Մ.Ը.Մ.ը եւ անոր նման միութիւնները: Ազգային առողջ միջավայրէն դուրս, բոլորս ալ գիտենք, թէ ի՞նչ վտանգներ կը սպառնան մեր զաւակներուն. մոլորութիւններ, յոռի բարքեր, ընկերային շեղումներ, սենեակներու մէջ փակուած եւ գործիքներու գերին դարձած այլամերժ վիճակներ, տակաւին չըսելու համար նաեւ այլասերում եւ ձուլում:

Հ.Մ.Ը.Մ. Պաղտատ 75 տարի այս բոլոր վտանգներէն փրկեց նորահաս սերունդները, երբ զանոնք ակմբային կեանքի վարժեցուց, չարքաշուծեան ընտելացուց, մշակութային կեանքի ծանօթացուց, հայկական շրջանակի մէջ պահեց եւ հայ եկեղեցուց, հայ դպրոցի եւ հայ ընտանիքի սրբութիւններուն կապեց իրեն դիմողները:

Դիւրին չեղաւ աշխատանքը: «Կամաւոր բանակ»ի նուիրեալներ եկան, ծառայեցին, բարի անուն ձգեցին ու անցան:



75-ամեակ է այսօր եւ առիթն է խոնարհելու «Կամաւոր բանակ»ի բոլոր ներկայացուցիչներու յիշատակին, ըլլան անոնք վարչականներ, սկաուտական թէ մարզական ճիւղերու պատասխանատուներ, տիկնանցի թէ մշակութային յանձնախումբներու ժրջան անդամներ: Բոլորին վարձքը կատար:

Պատմութիւնը եւ սերունդները անպայման պիտի յիշեն այս միութեան մեծ երախտաւորներ՝ եղբայրներ Երջանիկ Պապայեանը եւ Յովհաննէս Եսայեանը:

Պիտի յիշեն ու մեծարեն եղբայրներ Դանիէլ Ճանոյեանը, Վարդգէս Յովհաննէսեանը, Գրիգոր Պաթմանեանը, Պետրոս Պողոսեանը, Յովհաննէս Խալոյեանը, Հրայր Արզումանեանը, Սողոմոն Իշխանեանը, Ռազմիկ Աւագեանը, Բաբգէն Պետրոսեանը, քոյր Աննա Քիւրիշեանը եւ անոնց գործակիցները:

Աւելի նոր սերունդը պիտի յիշէ ու պատուէ եղբայրներ Վաղինակ Վահանեանը, Շանթ Միրզոյեանը, Անդրանիկ Զաքարեանը, Վարդգէս Վահանեանը, Մանեակ եւ Սիւզան Պողոսեանները, Արմէն Պէրճեմեանը, Սեւան Գրիվարգիսեանը, Ժագ Միրզոյեանը, Անի Միրզոյեանը, սոքթ. Վեհուհի Մինասեանը եւ Հայկազ Սարգիսեանը:

Իսկ մենք, ի՞նչպէս չյիշենք, 2003-ին Լիբանան եկած այն սքանչելի քոյրերն ու եղբայրները, որոնք մեկնարկը տուին միութեան վերաշխուժացման նոր հանգրուանի գործունէութեան: Թող ներեն մեզի, եթէ համեստութիւններ չվիրաւորելու համար, անուններ չյիշենք այս պահուս:

Եւ դեռ, ի՞նչպէս մոռնալ մասնաճիւղին փառքի օրերը կերտած մարզական խումբերը.՝ պասքէթպոլ, վոլիպոլ, սուսերամարտ, թենիս, հասնելու համար այս շաբթուան վերջին յաջողութեան՝ պոլիսի խումբին:

75-ամեակ է այսօր եւ առիթն է գնահատելու նաեւ պատենչի վրայ եղողները: Այս դժուարին պայմաններուն մէջ վարչական աշխատանք կատարող, 75-ամեակի յոբելեանական յանձնախումբը ղեկավարող մեր անմասն քոյրերն ու եղբայրները՝ գլխաւորութեամբ եղբայր Յակոբ Սահակեանի: Կ'արժեն ծափահարութիւն մը: Անսպառ ուժ եւ կորով՝ 75-ամեակի իրենց բոլոր ծրագիրները իրականացնելու եւ Պաղտատի մասնաճիւղի պատմութեան լուսաւոր մէկ նոր էջը արձանագրելու համար:

Վերջապէս, ողջոյնի խօսք՝ այսօրուան մեր երիտասարդները:

րուն, վաղուան մեր պատասխանատուներուն, որոնք գալիքին նոյնքան եւ աւելի շքեղութեամբ պիտի նշեն Պաղտատի մասնաճիւղին 80, 90 եւ 100-ամեակները:

Սիրելի՛ քոյրեր եւ եղբայրներ,

Հետեւեցէք ձեր երէցներուն օրինակին, օրինակ առէք անոնց նուիրումէն եւ անսահման ծառայութենէն, լսեցէք զիրենք, սորվեցէք անոնց փորձառութենէն եւ իւրաքանչիւրդ հարց տուէք, թէ ո՞վ ենք մենք, իբրեւ Հ.Մ.Ը.Մ. եւ հայութիւն, ո՞ւր կ'երթանք եւ ինչո՞ւ կ'երթանք: Պատասխանները պիտի օգնեն ձեզի հասկնալու 75-ամեակի իմաստը այսօրուան եւ վաղուան ձեր կեանքին համար:

Այսօր, 75-ամեակ կը նշենք եւ մեր կուրծքերուն կը կրենք Արցախի նշանակը: Ա՛յն Արցախին, զոր 35 տարի կրեցինք մեր սրտերուն մէջ, ուրախացանք անոր ազատագրումով եւ անկախութեամբ, պետականութեամբ եւ բանակով: Այսօր, դժբախտաբար չկան այդ բոլորը, սակայն իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ականներ, մենք պարտքն ու պարտաւորութիւնը ունինք մեր աչքին լոյսին պէս պահելու Արցախի պետականութեան խորհրդանիշները՝ քայլերգը եւ դրօշը, զինանշանը եւ տուն դարձի տեսլականը:

Իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ականներ, մենք պիտի ապրինք ու գործենք այնպէս, որ կարենանք Արցախի յիշատակը միշտ վառ պահել մեր ժողովուրդի զաւակներու հոգիներուն մէջ:

Պիտի ընենք այնպէս, որ եթէ մենք չտեսնենք, գէթ մեր գաւակներն ու թոռները տեսնեն անոր երկրորդ ազատագրումը եւ Արցախի հայութեան տունդարձի պատմական օրը:

Մինչ այդ, Սփիւռքի մէջ գոյատեւելու, զարգանալու եւ գորանալու համար մենք պիտի գործենք Հ.Մ.Ը.Մ.ական մեր ուժերու ամբողջ կարելիութեամբ, մեզի ընձեռուած բոլոր միջոցներով: «Մէկս բոլորին, բոլորս մէկուն» սկզբունքով, որպէսզի միասնաբար հասնինք յաղթանակի օրուան, մեր նահատակներու հոգիներու հանգստութեան օրուան, մեր երազներու իրականացման հանգրուանին:

Այս մտածումներով, անգամ մը կը շնորհակտընք յոբելեար Հ.Մ.Ը.Մ.ի Պաղտատի մասնաճիւղը, անոր շուրջ բոլորած մեր ժողովուրդը, հին ու նոր անդամները, բարեկամները, բարերարները ու հանդիսաւոր այս պահուն կ'ըսենք՝

Յարգելիներ,

Գործի մը սկսիլը դիւրին է, շարունակելն է դժուարը: Մեր սպասումն է, որ իր 75-ամեակը տօնակատարող այս մասնաճիւղը ունենայ երկա՛ր եւ բեղուն կեանք:

Հ.Մ.Ը.Մ.ի Պաղտատի մասնաճիւղը հիմնուած է Պաղտատի հայութեան ծառայելու համար, բայց մասնաճիւղը Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին մէկ անդամն է, հետեւաբար անոր իւրաքանչիւր յաջողութիւնը բոլորիս յաջողութիւնն է, իսկ իւրաքանչիւր ընկրկումը՝ դարձեալ բոլորիս: Մենք միայն ուրախ լուրեր կը սպասենք այս մասնաճիւղէն ու կը մաղթենք, որ Հ.Մ.Ը.Մ.ականի առողջ ոգին անպակաս ըլլայ մասնաճիւղի բոլոր անդամներուն մօտ, որպէսզի անոնք շարունակեն իրենց սիրելի միութեան ճամբով ծառայել իրենց պատկանած համայնքին, հայրենիքին ու հայութեան, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ական ըլլալու նախապայմանն է այդ:

Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի Կենտրոնական Վարչութեան անունից ողջունում եմ բոլորիդ, եւ մինչ բուն ելոյթիս անցնելը, խնդրում եմ մէկ րոպէ լուսութեամբ յարգել մեր բոլոր նահատակների լուսաւոր յիշատակը:

Սիրելի՛ Հ.Մ.Ը.Մ.ականներ, նախ թոյլ տուէք շնորհակտը բոլորիս Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրման 106-րդ տարեդարձի առթիւ: 106 տարի առաջ այս օրը Կ. Պոլսում հիմնուեց այն կազմակերպութիւնը, որը բոլորիս՝ հայրենիքում թէ Սփիւռքում համախմբել է մէկ նուիրական դրօշի, առաքելութեան ու տեսլականի շուրջ, դարձել իմաստը մեր կեանքի ու գործունէութեան: Շնորհակտը եմ մեզ բոլորիս նաեւ Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի Հայաստանում վերահիմնադրման 35-ամեակի առթիւ, որը լրանում է այս տարի, ընդամենը մի քանի օրից: Անչափ ուրախ ենք մեզ համար շատ կարեւոր այս օրը մեր կողքին գտնուելու, Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի տօնական միջոցառումներին մասնակցելու համար:

Այո, պատմական եւ երկար սպասուած իրադարձութիւն էր Հ.Մ.Ը.Մ.ի վերահիմնադրումն Հայաստանում, եւ միշտ երախտագիտութեամբ ու խորին յարգանքով պիտի յիշենք այն մարդկանց, ովքեր 1989 թ. նախաձեռնեցին այդ գործը, փառք ու պատիւ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին, աշխարհասփիւռ մեր շրջաններին, ովքեր առաջին օրերից ի վեր աջակից ու նեցուկ եղան մեզ, խանդավառուեցին եւ այդ ոգեւորութիւնը, ջերմութիւնը հիմնադրումից առ այսօր փոխանցում են մեզ: Առանց Հ.Մ.Ը.Մ.ի, առանց Հ.Մ.Ը.Մ.ի տարբեր տարիների Կենտրոնական Վարչութիւնների աջակցութեան Հայաստանի Ազգային Սկստակական Կազմակերպութիւնը չէր կարող կայանալ ու զարգանալ, յաղթահարել իր առջեւ ծառայած մարտահրաւէրները:

Դժուար ժամանակների ծնունդ էր Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ը, դժուար, բայց ազգային պոռթկումի, վերելքի ու յաղթանակների ժամանակների: Մենք այդ ազգայինի ու յաղթանակի պտուղն էինք՝ պատրաստ տալու նուիրականը: Եւ տուեցինք՝ Արցախում նահատակուեց Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի առաջին ատենապետ եղբ. Վարդան Բախշեանը՝ նորաստեղծ կազմակերպութեան զաւակների համար դառնալով տիպար անձնուիրութեան ու հայրենասիրութեան: Գաղափարական այս բարձր նշանոցը Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ում սահմանուեց ի վերուստ եւ դարձաւ առանցքային դաստիարակութեան հէնք ու հիմք: 35 տարի շարունակ մենք Հ.Մ.Ը.Մ.ական ազգային ոգով եւ առաքելութեան բարձր գիտակցումով դաստիարակել ենք բազմաթիւ հայորդիների եւ այսօր հայկական կեանքի ամե-



ՊԻՏԻ ԲԱՐՁՐԱՆԱՆՔ ՈՒ ԲԱՐՁՐԱՑՆԵՆՔ ՅԱՆՈՒՆ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԱՌԱՒԵԼ ԼԱՒ ՈՒ ՅԱՂԹԱԿԱՆ ԳԱԼԻՔԻ

(Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ԱՐԹԻՒՐ
ՄԿՐՏՉԵԱՆԻ ԽՕՍՔԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ 35-ԱՄԵԱԿԻ ՃԱՇԿԵՐՈՅԹԻՆ, ԵՐԵՒԱՆ)

նատարբեր ոլորտներում կարող ենք տեսնել Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի ճանապարհով անցած, կայացած քաղաքացիների եւ առաջնորդների: Կարեւոր ձեռքբերում է մեզ համար եղել որպէս Ազգային Սկսուտական Կազմակերպութիւն, անդամակցումը Համաշխարհային Սկսուտական Շարժմանը, ձեռք բերել միջազգային կապեր, նպաստել տարբեր ազգերի մօտ Հայաստանի եւ հայ ժողովրդի հեղինակութեան բարձրացմանը: Տարիներ ի վեր Հ.Մ.Ը.Մ.ական հարիւրաւոր պատանիներ ու երիտասարդներ մասնակցել են ինչպէս Համաշխարհային Սկսուտական Շարժման, այնպէս էլ համա-Հ.Մ.Ը.Մ.ական եւ Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի կազմակերպած միջոցառումների՝ ձեռք բերել գիտելիքներ, կարողութիւններ եւ հմտութիւններ:

Անցնող 35 տարիների մեր պատմութիւնը հարստացել է, կազմակերպութիւնը ամրապնդուել նաեւ տարբեր տարիների Հայաստանում անցկացուած համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումների եւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերի շնորհիւ: Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի տարեգրութիւնն հարստացաւ նաեւ այս օրերին՝ կապուած այն հանգամանքով, որ առաջին անգամ Հայաստանում անցկացուած է Հ.Մ.Ը.Մ.ի 11-րդ միջ-գիւղանական խորհրդաժողովը: Մեզ համար միշտ պատիւ է Հայաստանում հիւրընկալել Հ.Մ.Ը.Մ.ական մեր քոյրերին ու եղբայրներին. բարով էք եկել եւ միշտ բարով գաք հայրենիք:

Թերեւս 35 տարին շատ է Հ.Մ.Ը.Մ.ական մի կազմակերպութեան համար, բայց այդ տարիները մեզ համար եղել են կայացումի, քրտնաջան աշխատանքի, ձեռքբերումների, ուրախութեան ու տիրութեան արցունքի տարիներ: Այս տարիներին մենք յաղթահարել ենք ներքին եւ արտաքին բազմաթիւ դժուարութիւններ՝ միշտ հաւատարիմ մնալով մեր որդեգրած արժէքներին: Մարտահրաւէրներից թերեւս առանձնացնեմ քորոնա վիրուսի համավարակն ու 2020 թ. Արցախեան 44-օրեայ պատերազմը, որը մեզանից խից ամենաթանկը՝ մեր Հ.Մ.Ը.Մ.ական 10 եղբայրների կեանքը: Առհասարակ, որպէս հայրենիքում ապրող հաւաքական հայութիւն, Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի կեանքը շատ



շաղկապուած է եղել Արցախում կատարուած իրադարձութիւնների եւ Հ.Մ.Ը.Մ.ի Արցախի Մեկուսի շրջանի հետ: Մենք շնորհակալ ենք, որ Հ.Մ.Ը.Մ.ի Կենտրոնական Վարչութեան կողմից ի սկզբանէ մեզ է վրաստահուել Հ.Մ.Ը.Մ. Արցախի եւ Հ.Մ.Ը.Մ. Թիֆլիսի կայացման եւ գործընթացման առաքելութիւնը: Մենք սիրով ու ջանասիրութեամբ ենք կատարել այդ գործը ու միշտ պատրաստ ենք անել այն:

Այս տարիների մեր կարեւոր ձեռքբերումներից է եղել կըրթական, երիտասարդական ծրագրերի, սկսուտական դասագրքերի մշակումն եւ դրանց կիրառութեան ուղղութեամբ ձեռնարկուած քայլերը: Վստահ եմ պապագայում դրանք կը ստանան պետական գրանցում՝ որպէս ոչ ֆորմալ կըրթական ծրագրեր: Իսկ մեր կարեւոր խնդիրներից մէկը եղել եւ մնում է Հայաստանում սկսուտական շարքերի ընդլայնումը, կազմակերպութեան մշտական եկամուտների ապահովումը, նոր կենտրոնների ու մասնաճիւղերի հիմնումը: Օգտուելով առիթից եւ Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի անունից խորին շնորհակալութիւն եմ յայտնում բոլոր այն Հ.Մ.Ը.Մ.ականներին եւ ոչ Հ.Մ.Ը.Մ.ականներին անցնող 35 տարիներին մեզ սատարելու համար: Առանձնայատուկ շնորհակալութիւն Հ.Մ.Ը.Մ.ի եւ Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի նախորդ բոլոր Կենտրոնական Վարչութիւններին, կազմակերպութիւնն առաջ մղած, կայացման գործում մեծագոյն աւանդ ունեցող վարչական, սկսուտական առաջնորդներին, անցնող տարիների խմբապետներին եւ սկսուտներին: Եւ ի հարկէ բոլոր այն մարդկանց ովքեր նուիրատուութիւններով եւ ամենատարբեր եղանակներով օգնել եւ սատար են կանգնել մեզ:

Շնորհակալութիւն մեզ ու ձեզ, շնորհակալութիւն, որ երբեմն անյոյս ու խաւար թուացող օրերի մէջ չենք կորցնում մեր երազը, հաւատում ենք, որ մենք ենք լոյսը վառողները, չենք վախենում ու չենք ընկրկում, չենք դաւաճանում մեր երդումին ու խոստումին եւ վստահ ենք, որ մենք պիտի բարձրանանք ու բարձրացնենք յանուն հայութեան առաւել լաւ ու յաղթական գալիքի:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 106-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԶՈՒԳԱՀԵՌ՝

ԱՌԱՋԻՆ ՄԻՋ-ԴԻՒԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԷՋ

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումներ (1994-էն), Պատգամաւորական Ընդհանուր Ժողովներ (2003-էն), խմբապետական համագումարներ (2004-էն) եւ մարզախաղեր (2009-էն) կազմակերպուած էին հայրենիքի մէջ, սակայն միջ-դիւանական խորհրդաժողով ցարդ չէր կատարուած:

Հայաստանի մէջ նման խորհրդաժողով մը կատարելը, միութեան հիմնադրութեան 106-ամեակի տօնակատարութեան օրը, Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի Հայաստանի մէջ վերընծիւղման 35-ամեակի հանդիսութիւններով, անկասկած, որ յատուկ իմաստ եւ նշանակութիւն պիտի ունենար, մանաւանդ որ բացումը պիտի կատարուէր Եռաբլուրէն, փակումը՝ Միծեռնակաբերդէն:

Ձեռով ու ընթացքով եւս միջ-դիւանական այս խորհրդաժողովը պիտի տարբերէր նախորդներէն, որովհետեւ շրջաններու գեկուցումներու յատկաց-

ւած բաժինը, նախապէս, չորս ժամնոց առցանց նիստով մը, պիտի կատարուէր ատենապետներու հանդիպումով (այս մասին կարդալ Գ. Կողք), հետեւաբար, գեկուցումներէն քաղուած եզրակացութիւններու քննարկումներն էին, որոնք պիտի կատարուէին յաջորդական նիստերու ընթացքին, աւելի գործնական բնոյթ տալով համա-Հ.Մ.Ը.Մ.ական այս հանդիպումին:

Խորհրդաժողովը, ինչպէս նախորդները, պիտի ծառայէր Հ.Մ.Ը.Մ.ի վերջին Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի որոշումներու իրագործման առաջին փուլին ծանօթացման եւ յաջորդող փուլերու ծրագրաւորման:

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ ՊԱՇՏՏՕՆԱԿԱՆ ԲԱՅՈՒՄԸ Միջ-դիւանական 11-րդ խորհրդաժո-



ղովին պաշտօնական բացումը տեղի ունեցաւ Ուրբաթ, 15 Նոյեմբեր 2024-ի առաւօտեան ժամը 10-ին, Եռաբլուրի նահատակաց պանթէոնին մէջ, ներկայութեամբ

Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամներ Կիրօ Մանոյեանի, Արսէն Համբարձումեանի, Հ.Յ.Դ. Արցախի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Արա Պուլուզեանի, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայ եւ նախկին անդամներու, ինչպէս նաեւ միջ-դիւանական խորհրդաժողովի մասնակից 19 շրջաններէ 42 մասնակիցներու:

Բացման հանդիսութիւնը ուղղակի սփռուեցաւ միութեան դիմատետրի էջով (մանրամասնութիւնները տեսնել էջ 28):



ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ ԱՌԱՋԻՆ ՕՐՈՒԱՆ ՆԻՍՏԵՐԸ

Բացման տպաւորիչ հանդիսութեանէն ետք, կէսօրուան ժամը 12-ին, Երեւանի «Քոնկրէս» հիւրանոցի սրահին մէջ ընթացք առին խորհրդաժողովին նիստերը:

Բացման խօսքով, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ Եղբ. Յակոբ Խաչերեան յայտնեց, որ խորհրդաժողովին բացումը կատարուեցաւ Եռաբլուրի մէջ: «Բնագոյով չէինք կրօնար հոն չըլլալ: Հոն էինք՝ մեզի համար: Այն դաստիարակութիւնը, զոր ստացած ենք մեր միութեան մէջ, մեր ուղին գծած է եւ բնական է, որ հոն ըլլայինք, գիտնալու համար, թէ ո՞ւր պէտք է երթանք», նշեց ան:

Եղբ. Խաչերեան շեշտեց, որ միշտ պէտք է յիշել մեր պատմութիւնը, որ պէսզի կարելի ըլլայ կերտել նոր պատմութիւն: Ոչ մէկ անձ կրնայ գալ եւ ջնջել այդ պատմութիւնը,- ըսաւ ան,- ջրնջել մեր լեզուն, ջնջել մեր հաւաքական յիշողութիւնը եւ մեր պայքարը: Մենք



երազ ունինք: Երազ չունեցողին բան չեն տար: Կարելոր է պայքարի ոգին պահպանելը եւ 106 տարի առաջ սկսուած գործը շարունակելը: Մենք պիտի ունենանք ազգային գունաւորում եւ մեր սիրտը պիտի բաբախէ հայրենիքի սիրտին բաբախումով:



Ապա, ատենապետներու առցանց ժողովին ներկայացուած տեղեկագիրներու լոյսին տակ, եղբւր՝ Խաչերեան ներկայացուց ՀՄԸՄ-ի շրջաններուն դիմագրուած ընդհանրական մտահոգութիւնները: - նիւթականի դժուարութիւն, հայերէն լեզուի հարց, մարդուժի պակաս, մարդադաշտերու չգոյութիւն եւ հեռաւորութիւններու հարց: Իբրեւ լուծում, ան առաջարկեց մշակել երկարաշունչ ծրագիրներ եւ կազմակերպել վարչազիտական գիտելիքներու եւ հայերէն լեզուի դասընթացքներ, բաւարար մարդուժ պատրաստելու եւ լեզուական դժուարութիւնները յաղթահարելու համար:

Կեդրոնական Վարչութեան ատենապետը յատուկ շեշտադրումով խօսեցաւ միութեան քարոզչական համակարգի ստեղծման կարեւորութեան մասին, թելադրելով դուրս գալ պատահական եւ առանձին-առանձին գործունէութեան



ոճէն եւ փոխարէնը գործել ընդհանրական մէկ տեսլականով, մէկ ուղղութեամբ, յստակ թիրախներով, նորարար ոճով եւ արդիական միջոցներով:

Եղբւր՝ Խաչերեանի խօսքէն ետք, Կեդրոնական Վարչութեան ատենապետը եղբւր՝ Վիգէն Աւագեան փառլոր փոյնթով ներկայացուց Պատգամաւորական վերջին Ընդհանուր Ժողովէն ընտրուած Կեդրոնական Վարչութեան միամեայ գործունէութեան գլխաւոր իրագործումները: Իր կարգին, Կեդրոնական Վարչութեան անդամ քոյր Սանտրա Վարդանեան զեկուցում մը ներկայացուց ՀՄԸՄ-ի «Արցախ հիմնադրամ»-ին աշխատանքներուն մասին:

Ձեկուցումներուն յաջորդեցին լուսաբանական հարցում-պատասխաններ:

Սկառուտական բաժինով հանդէս եկան քոյր Թալին Օրտողլեան եւ եղբւր՝ Գազանճեան՝ ՀՄԸՄ-ի Եւրոպայի ցամաքամասի առաջին բանակումը (13-20 Յուլիս 2024, Շուէտ):

Քոյր Օրտողլեան իր ներկայացումին մէջ յիշեց միութեան սկառուտական շարքերուն դիմագրուած գլխաւոր դժուարութիւնները, որոնք շատ չեն տարբերի վարչական կազմերու դիմագրուած ընդհանրական դժուարութիւններէն: - նիւթականի հարց, մարդուժի պակաս, սեփական ակումբներու չգոյութիւն, նստավայրերու սուղ վարձքեր, հեռաւորութեան հարց, հայերէն լեզուի տի-





րապետութեան ղեկավարութիւն, հայու-
թեան պարպուած ընտանիքներ, արտա-
գաղթ եւ Միջին Արեւելեան գաղութ-
ներու նօսրացում, կամաւոր աշխա-
տանքի հանդէպ որոշ անտարբերու-
թիւն, 16 տարեկանէն վեր երիտասարդ-
ներու հետաքրքրութիւններու շեղում,
Արցախի կորուստի բարոյահոգեբանա-
կան անդրադարձ եւ Հայաստանի մէջ
տիրող ապագային միջոցառում:

Սկառուտական երկրորդ նիւթը գնա-
հատեց Եւրոպայի ցամաքամասի առա-
ջին բանակումին յաջողութիւնը: Եօթն-
օրեայ բանակումը ներկայացուցեալ յա-
տուկ տեսերիզով եւ փառքը փոյնթով:

Ապա, ճաշի դադարէ ետք, սկառու-
տական օրակարգին քննութիւնը շարու-
նակուցեալ գործողութիւններու (Փահիրէ,
Փլովարի), համաշխարհային սկառուտա-
կան 16-րդ երէցական բանակումի եւ
«Հայ սկառուտի օր»ունան տօնակատա-
րութիւններու քննարկումներով:

Յաջորդ մեծ օրակարգը եղաւ մար-
զականը, որ ունեցաւ հինգ ենթաբա-
ժին.- համա-Հ.Մ.Ը.Մ.ական 12-րդ մար-
զախաղեր, ցամաքամասային խաղեր,
համահայկական ձմեռնային եւ ամառ-
նային մարզախաղեր, «Հայ մարզիկի
օր» եւ արհեստավարժութեան դադրե-
ցում:

Իւրաքանչիւր ենթաբաժինի մասին
ներկայացուցեան զեկուցումներ, որոնց
յաջորդեցին տեսակէտներու փոխանա-
կումներ եւ առաջարկներ: Փարիզի եւ
Հարաւային Ամերիկայի շրջանները
իրենց պատրաստակամութիւնը յայտ-
նեցին հիւրընկալելու 2027-ին նախա-
տեսուած Եւրոպայի եւ Ամերիկաներու



ցամաքամասային խաղերը, տրուած ըլ-
լալով որ շուտով Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս
կ'օժտուի մարզական իր արդիական
համալիրով, իսկ Հարաւային Ամերիկա-
յի շրջանը կը պատրաստուի իր հիմնադ-
րութեան 100-ամեակը նշել այդ տարի:

**ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ ԵՐԿՐՈՐԳ-
ՕՐՈՒԱՆ ՆԻՍՏԵՐԸ**

Շաբաթ, 16 Նոյեմբերին, Հ.Մ.Ը.Մ.ի
հիմնադրութեան տարեդարձին օրը,
միջ-դիւանական խորհրդաժողովին նիս-
տերը սկսան առաւօտեան ժամը 10-ին,
մարզական օրակարգի վերջին ենթաբա-
ժինին՝ արհեստավարժութեան դադրեց-
ման նիւթով: Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական
Վարչութեան ատենապետը սպառիչ եր-
կար բացատրական մը ներկայացուց
որոշումին տուն տուող պատճառնե-
րուն եւ անոր գործադրութեան դէմ
անցեալին ցցրուած խոչընդոտներուն
մասին: Ապա, ան բացատրեց, որ այս

**Հ.Մ.Ը.Մ.Ի
ՄԻՋ-ԴԻՒԱՆԱԿԱՆ
ՆԱԽՈՐԳ
ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՆԵՐԸ**

Հ.Մ.Ը.Մ.ի միջ-դիւանա-
կան խորհրդաժողովնե-
րը ընթացք առած են
1985-ին: Այնուհետեւ, ընդհան-
րապէս չորս տարուան յաջոր-
դականութեամբ, գումարուած
են տասը խորհրդաժողովներ՝
հետեւեալ ձեւով.-

- Ա. խորհրդաժողով, 5-7 Ապ-
րիլ 1985, Սիլանօ, Իտալիա:
- Բ. խորհրդաժողով, 24-27
Մարտ 1989, Լոնտոն, Անգլիա:
- Գ. խորհրդաժողով, 13-16
Յուլիս 1993, Լաւալ, Գանատա:
- Դ. խորհրդաժողով, 26-28
Մարտ 1997, Փարիզ, Ֆրանսա:
- Ե. խորհրդաժողով, 13-15
Օգոստոս 2001, Պէյրութ, Լիբա-
նան:
- Զ. խորհրդաժողով, 1-3 Օգոս-
տոս 2005, Աթէնք, Յունաստան:
- Է. խորհրդաժողով, 9-11 Ապ-
րիլ 2009, Փարիզ, Ֆրանսա:
- Ը. խորհրդաժողով, 29-31
Մարտ 2013, Նիկոսիա, Կիպրոս:
- Թ. խորհրդաժողով, 27-29
Յուլիս 2016, Նիկոսիա,
Կիպրոս:
- Ժ. խորհրդաժողով, 11-13 Նո-
յեմբեր 2022, Պէյրութ, Լիբանան:





Կեդրոնական Վարչութիւնը հանգրուանային ի՞նչ քայլերու դիմեց նման կարեւոր որոշումի մը գործադրութիւնը յաջողցնելու համար:

Մարզական օրակարգի փակումով, խորհրդաժողովը լայն տեղ յատկացուց քարոզչական մարզի նորութիւններուն: Արդարեւ, քարոզչութիւնը, իբրեւ միութենական գործունէութեան միջոց, վերջին Պատգամաւորական Ընդհանուր ժողովին որոշումով տեղ գտաւ Հ.Մ.-Ը.Մ-ի կանոնադրին մէջ: Շրջանային եւ Մեկուսի շրջաններ պարտաւորուեցան ունենալ քարոզչական յանձնախումբեր եւ պատասխանատուներ: Կեդրոնական Վարչութեան քարոզչական յանձնախումբը այս ուղղութեամբ կատարեց մեծ աշխատանք. կազմակերպեց քարոզչական առցանց Բ.համագումարը (այս մասին տեսնել էջ 47), կազմեց ուղեցոյց, տօնացոյց, միութեան խորհրդանիշներու օգտագործման բացատրագիր, ծանօթացման հանդիպում մը ունեցաւ հայրենի լրատուամիջոցներու ներկայացուցիչներուն հետ (տեսնել էջ 44) եւ յառաջացուց առցանց երկու հարթակ՝ քարոզչական ներկայացուցիչներու եւ հայերէն լեզուի անկցութեան կարիքը ունեցող շրջաններու համար: Միաժամանակ, ընթացք առին աշխատանքներ՝ միութեան նոր կայքէջը ստեղծելու եւ քարոզչական գրասենեակը հիմնելու համար:

Քարոզչական օրակարգին մէջ քննարկուեցան նաեւ միութեան «Մարզիկ» պաշտօնաթերթին բովանդակութեան եւ առաքման առնչուած հարցեր: Խօսուեցաւ թերթին բովանդակութիւնը նորաս-

տեղծ կայքէջին մէջ բազմալեզու ձեւով ներկայացնելու անհրաժեշտութեան մասին, նաեւ նպատակայարմար նկատուեցաւ բաժանորդներ ընդունելի թերթին PDF տարբերակին համար, առաքման աշխատանքը աւելի արագ եւ նուազ ծախսալից դարձնելու համար:

Բաւական սպառիչ քննարկումներէ եւ բազմաթիւ առաջարկներէ ետք, խորհրդաժողովը արծարծեց երիտասարդական բաժանմունքի ստեղծումը դանդաղեցնող դժուարութիւնները: Խորհրդաժողովը ճիշդ գտաւ նախ երկու շրջանի դրական փորձառութիւնը (Հարաւային Ամերիկա եւ Արեւմտեան Մ.Նահանգներ) ամրապնդել, այլ շրջաններու վարակիչ դարձնել ու ապա ծրագրել յառաջիկայ քայլերը:

Յաջորդեց կէսօրուան ճաշի դադարը, որուն հետեւեցաւ խորհրդաժողովին վերջին նիստը՝ յատկացուած տնտեսական, տեղեկատուական արհեստագիտութեան եւ այլեւայլ հարցերու քննութեան: Հիմնական նորութիւնը եղաւ տնտեսական յանձնախումբին կազմակերպած նաւապտոյտը՝ Դանուբ գետին վրայ, 13-20 Յուլիս 2026-ին: Այս առիթով արդէն ստեղծուած է յատուկ կայքէջ, որուն առաջին օրինակին ներկաները ծանօթացան մեծ հետաքրքրութեամբ: Նաւապտոյտը իր բոլոր մանրամասնութիւններով ներկայացուց Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Մհեր Դաւիթեան:

Այլեւայլ հարցերու գլխուն տակ, Հ.Մ.-Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Խաչերեան խօսեցաւ խորհրդաժողովը կանխած՝ Կեդ-

րոնական Վարչութեան երկրորդ լիագումար նիստերու գլխաւոր որոշումներուն մասին. չքանչաններու կանոնադրութեան վերամշակում, վարչագիտական ծանօթութիւններու եւ հայերէն լեզուի դասընթացներու կազմակերպում՝ հոն ուր կարիք կայ, միութեան խորհրդանշանի գործածութեան եղանակի ուղեցոյցի պատրաստութիւն, միութենական կալուածներու ցանկազրում, քարոզչական համակարգի ստեղծում, «Արցախ հիմնադրամ»ի նոր ծրագիրներ եւ այլն:

Ապա, առիթը տրուեցաւ, որպէսզի շրջաններու ներկայացուցիչներ ցուցադրեն այս առիթով իրենց հետ բերած կարճ տեսերիկները: Տեղի ունեցաւ երեք ցուցադրութիւն՝ Հարաւային Ամերիկայի Նաւասարդեան վերջին մարզախաղերուն, Հ.Մ.-Ը.Մ.-Ֆրանսի նորակառույց մարզական համալիրին եւ Հ.Մ.-Ը.Մ-ի «Հրաջ» բաժանմունքին մասին:

Այնուհետեւ, խորհրդաժողովին փակումը կատարեց Հ.Մ.-Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Խաչերեան: Ան յայտնեց, որ դիւրին չէր անցնող մէկ տարին եւ դիւրին պիտի չլլան գալիք երեք տարիները: Կը մնայ տոկալ եւ ուխտել, որ միասնաբար շարունակենք մեր ուղին, մեր երազած ամբողջական Հայաստանը օր մը կերտելու համար: Մինչ այդ, հաւատարիմ մնանք մեր նահատակներու յիշատակին եւ տանք մեր առաւելագոյնը ու մեր լաւագոյնը:

Խորհրդաժողովը փակուեցաւ յետմիջօրէի ժամը 4:30-ին, «Յառաջ նահատակ» քայլերգով:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Նոյեմբերի երկրորդ շաբաթավերջը բեղուն եղաւ Զ.Ս.Ը.Մ.ի մեծ ընտանիքին համար, որուն ներկայացուցիչները հայրենիքի մէջ նշեցին միութեան 106-ամեակը, Զ.Ս.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի 35-ամեակը եւ միջ-դիւանական 11-րդ խորհրդրդաժողովով ճշդեցին միութեան յառաջիկայ հանգրուանի գործունէութեան գլխաւոր ուղղութիւնները:



Համա-Զ.Ս.Ը.Մ.ական յիշեալ նախաձեռնութիւնները կանխեցին 2023-2027 քառամեակի Կեդրոնական Վարչութեան երկրորդ լիազումարի նիստերը, որոնք տեղի ունեցան 13 եւ 14 Նոյեմբերին, Երեւան: Նիստերը քննեցին միութեան անցնող մէկ տարուան գործունէութեան զանազան մարզերը (կազմակերպչական, սկաուտական, մարզական, քարոզչական, հրատարակչական, տնտեսական, տեղեկատուական արհեստագիտութեան) եւ հաստատեցին միջ-միութեանական ձեռնարկներուն յաւելեալ թափ տալու եւ բոլորը աւելի յաճախակի կերպով իրարու քով բերելու անհրաժեշտութիւնը, այս իմաստով օգտակար փորձառութիւն նկատելով Եւրոպայի ցամաքամասի Ա. բանակումին իրագործումը (Շուէտ), սկաուտական խմբապետական Թ. համագումարը (Եգիպտոս), քարոզչական առցանց երկրորդ համագումարը եւ շրջաններու տտենապետներու եռամսեայ առցանց ժողովները:

Լիազումար նիստերը յատուկ կարեւորութեամբ անդրադարձան Զ.Ս.Ը.Մ.ի «Արցախի հիմնադրամ»-ի ծրագիրներուն, որոնք անցնող շրջանին մարդասիրական անմիջական օժանդակութիւններէ անդին՝ նպաստեցին արցախցի 850 երեխաներու ամառնային դաստիարակչական ճամբարներու իրագործման եւ Զ.Ս.Ը.Մ.ի Արցախի վտարանդի մասնաճիւղի աշխատանքներուն ծաւալման:

Սկաուտական եւ մարզական աշխատանքներու վերաշխուժացումը եւ արդիականացումը իրենց նկատառելի տեղը ունեցան լիազումար նիստերու օրակարգին մէջ: Անդրադարձ կատարուեցաւ նաեւ շրջաններու մէջ կատարուող աշխատանքներու, որոնց մեծագոյնը Զ.Ս.Ը.Մ.-Ֆրանսի մարզահամալիրին իրագործումն է, Փարիզի մէջ: Մարզահամալիրին բացումը նախատեսուած է 5 Ապրիլ 2025-ին:

Կեդրոնական Վարչութեան երկրորդ լիազումարը լայնօրէն արծարծեց միութեան քարոզչական համակարգի ստեղծման հրամայականը՝ հանրային կապե-

րու մարմնի աշխոյժ գործունէութեամբ, նոր կայքէջի ու գրասենեակի ստեղծումով եւ շրջաններու մէջ հանրային կապի մարմիններու յառաջացումով: Նպատակայարմար նկատուեցաւ «Մարզիկ» պաշտօնաթերթը առցանց ներկայացնել բազմալեզու բովանդակութեամբ:

Վերջապէս, լիազումար նիստերը շեշտեցին Զ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան տնտեսական հզօրացման անհրաժեշտութիւնը եւ այդ իմաստով հաստատեցին տնտեսական յանձնախումբին առաջարկը՝ 2026-ի ամրան նաւապտոյտ մը կատարելու Եւրոպայի մէջ:

Լիազումար նիստերը ճշդեցին նաեւ յառաջիկայ հանգրուանի միութեանական ձեռնարկներու թուականները՝ համա-Զ.Ս.Ը.Մ.ական 12-րդ մարզախաղեր (2025 Յուլիս, Երեւան), Ամերիկեան եւ Աւստրալիոյ ցամաքամասերու բանակում (2025 Յուլիս, Լոս Անճելըս), համա-Զ.Ս.Ը.Մ. 13-րդ բանակում (2026 ամառ), համա-Զ.Ս.Ը.Մ.ական ցամաքամասային մարզախաղեր (2027 ամառ),

Լիազումար նիստերու առընթեր, Կեդրոնական Վարչութիւնը աշխատանքային հանդիպումներ ունեցաւ Զ.Ս.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի եւ Զ.Ս.Ը.Մ.ի Արցախի մասնաճիւղերու վարչութիւններուն հետ, կազմակերպեց միջ-դիւանական խորհրդաժողով, հանրային կապերու մարմինը նախաձեռնեց հայրենի լրատուամիջոցներու ներկայացուցիչներու հետ հանդիպումի մը, իսկ Երեւան ժամանած պատուիրակութիւնները մասնակցեցան Զ.Ս.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի 35-ամեակի տօնակատարութեան եւ սկաուտական հանդիսութեան, այցելեցին Եռաբլուր, Ծիծեռնակաբերդ եւ Ս. Էջմիածին, ուր հոգեհանգստեան պաշտօն կատարեցին մահացած եւ նահատակուած Զ.Ս.Ը.Մ.ականներու յիշատակին:

Զ.Ս.Ը.Մ.ի 106-ամեակին զուգահիշող եւ հայրենիքի ու Միջին Արեւելքի տագնապալի պայմաններուն մէջ կատարուող համա-Զ.Ս.Ը.Մ.ական այս նախաձեռնութիւնները անգամ մը եւս փաստը տուին հայութեան «Կամաւոր բանակ»-ին կենսունակութեան եւ միշտ յառաջ ընթանալու վճռականութեան, յաղթահարելով իր շրջապատի աննպաստ բոլոր պայմանները եւ մեր ժողովուրդին դէմ ցցուած բոլոր մարտահրաւերները:

Զ.Ս.Ը.Մ.ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԻՋ-ԴԻՒԱՆԱԿԱՆ 11-ՐԴ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ ԲԱՑՈՒՄԸ ԵՌԱԲԼՈՒԻ ԵՆԱԿՍԱԿԱՑ ՊԱՆԹԵՈՆԵՆ

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան կազմակերպութեամբ, Հինգշաբթի, 15 Նոյեմբերի առաւօտեան ժամը 10-ին, միութեան միջ-դիւանական 11-րդ խորհրդաժողովին բացումը կատարուեցաւ Եռաբլուրի նահատակաց պանթէոնէն, ներկայութեամբ Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամներ Կիրո Մանոյեանի, Արսէն Համբարձումեանի, Հ.Յ.Դ. Արցախի Կեդրոնական

Կոմիտէի ներկայացուցիչ Արա Պուլուզեանի, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ներկայ եւ նախկին անդամներու, ինչպէս նաեւ միջ-դիւանական խորհրդաժողովի մասնակից 19 շրջաններէ 42 քոյր-եղբայրներու:

Եռաբլուրի նահատակաց պանթէոն հասնելով, մասնակիցները ուղղուեցան Եռաբլուրի Սրբոց Վարդանանց եկեղեցի, ուր դիմաւորուեցան Դադիվանքի

վանահայր Յովհաննէս Քհնյ. Յովհաննէսեանի կողմէ:

Յովհաննէս Քհնյ. կարճ խօսքով մը յայտնեց, որ Եռաբլուրը նաեւ հերոսաբլուր է: Այստեղ կը հանգչին հայրենիքին հանդէպ իրենց պարտքը կատարած հերոսները, որոնց պարտաւոր ենք միշտ յիշել: Չվախնանք հերոսին հերոս ըսելու, արցախցիին արցախցի ըսելու: Չվախնանք Արցախը Հայաստան է ըսելու: Եթէ չըսենք այդ բոլորը, մենք անտեսած կ'ըլլանք մեր հերոսներուն թափած արեան արժէքը, նշեց ան:

Շարունակելով, Յովհաննէս Քհնյ. ըսաւ. «Միանանք, զօրանանք եւ չհամակերպինք այս իրավիճակին, այլ՝ պայքարինք, որպէսզի հասնինք մեր նպատակին: Ոտքի կանգնինք եւ դառնանք հպարտ հայեր, ոչ թէ ծնկաչոք հայեր, այլ՝ գլուխը բարձր հպարտ հայեր, որպէսզի աշխարհին ապացուցենք, որ մենք իսկապէս հզօր ազգ ենք: Եկէք անձերու չվերագրենք Հայաստանը: Հայաստանը ամբողջութեամբ Հայաստան է: Հայաստանը մեզմով Հայաստան է եւ մենք պարտաւոր ենք մեր պատիւը, մեր





ըսելով: «Երբ Եռաբլուր ենք՝ հայոց աշխարհի սրբագոյն վայրը, պէտք է լուռ մնալ: Հոս՝ մենք ուխտաւորներս ըսելիք չունինք: Մենք կրնանք ամփոփուիլ եւ ինքնաքննութիւն ընել, հարց տալով, որ արդեօք մեր նպատակային ուղղութիւնը նո՞յնն է եւ զայն տակաւին միասին կը կտրե՞նք, մենք կենդանի, իսկ իրենք սաւառնող հոգիներ, մեզի հովանի ու պահապան»:

Ապա, հարցումներու շարքը շարունակելով, եղբ. Խաչերեան նշեց. «Հաւատարի՛մ ենք մէկուկէս միլիոն ցեղասպանուած նահատակ ու սրբադասուած մեր զոհերու արեան կանչին: Պահանջատէ՞ր ենք Յեղասպանութեան ճանաչման եւ հատուցումին: Եւ դեռ, ազատ, անկախ, միացեալ ու ամբողջական Հայաստանի իրագործումին հաւատացող ու ձգտող աննահանջ երդուեալներու կա-



մաւոր բանա՞կ ենք»: Ու եզրակացնելով, ան հաստատեց. «Եթէ հաստատ ենք մեր ուխտին, եւ մեր նպատակը անփոփոխ կը մնայ, աննենգ ենք սերունդներու կանչին, մեկնարկենք խորհրդաժողովը մեր քայլերգին կատարումով»:

Կեդրոնական Վարչութեան ատենապետին խօսքին աւարտով ներկաները խմբերգեցին Հ.Մ.Ը.Մ-ի «Յառաջ նահատակ» քայլերգը: Ապա, բոլորը լուռ ու յամբաքայլ քայլերով շրջեցան Եռաբլուրի մէջ իրենց յաւիտենական հանգիստը գտած նահատակներու շիրիմներուն շուրջ եւ ծաղիկներ խոնարհեցին Արցախեան առաջին եւ երկրորդ պատերազմներուն զոհ գացած Հ.Մ.Ը.Մ-ականներու յիշատակին:



քաջութիւնը փոխանցել գալիք սերունդներուն»:

Քահանայ հօր խօսքին յաջորդեց հոգեհանգստեան աղօթք, որմէ ետք ներկաները դրօշակակիրներու առաջնորդութեամբ ուղղուեցան Եռաբլուրի նահատակաց յուշապատ, ուր Հ.Մ.Ը.Մ-ի անունով ծաղկեպսակ մը գետեղեցին Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Խաչերեան եւ Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի ատենապետ եղբ. Արթիւր Մկրտչեան:

Այնուհետեւ, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետը արտասանեց խորհրդաժողովին բացման խօսքը՝



ԱՄՓՈՓՈՒԼ ԵՒ ԻՆՔՆԱՔՆՆՈՒԹԻՒՆ ԸՆԵԼ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ՅԱԿՈԲ ԽԱՉԵՐԵԱՆԻ ՊԱՏԳԱՄԸ, ԱՐՏԱՄԱՆՈՒԱԾ՝ ՄԻՋ-ԴԻԲԱՆԱԿԱՆ 11-ՐԴ ԽՈՐՀՐԳԱԺՈՂՈՎԻ ԲԱՅՄԱՆ, ԵՌԱԲԼՈՒՐ)



Յայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան 19 Շրջանային եւ Մեկուսի շրջաններու դիւանները եւ Կեդրոնական Վարչութեան կազմը կը գտնուինք Երեւան՝ կատարելու համար Հ.Մ.Ը.Մ.ի միջ-դիւանական 11-րդ խորհրդաժողովը:

Երբ եռաբլուր ենք՝ հայոց աշխարհի սրբագոյն վայրը, պէտք է լուռ մնալ: Յոս՝ մենք ուխտաւորներս ըսելիք չունինք:

Յոս, նահատակ հերոսները իրենց անխօսութեամբ կը թելադրեն ամէն բան:

Մենք կրնանք ամփոփուիլ եւ ինքնաքննութիւն ընել:-

- Արդեօ՞ք մեր նպատակային ուղղութիւնը նոյնն է եւ զայն տակաւին միասին կը կտրենք, մենք կենդանի, իսկ իրենք սաւառնող հոգիներ, մեզի հովանի ու պահապան:

- Հաւատարի՞մ ենք մէկուկէս միլիոն ցեղասպանուած նահատակ ու սրբադասուած մեր զոհերու արեան կանչին: Պահանջատէ՞ր ենք Ցեղասպանութեան ճանաչման եւ հատուցումին:

- Ազատ, անկախ, միացեալ ու ամբողջական Հայաստանի իրագործումին հաւատացող ու ձգտող աննահանջ երդուեալներու կամաւոր բանա՞կ ենք:

Եթէ հաստատ ենք մեր ուխտին, եւ մեր նպատակը անփոփոխ կը մնայ, անենեզ ենք սերունդներու կանչին, մեկնարկենք խորհրդաժողովը մեր քայլերգին կատարումով:





Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԻՋ-ԳԻՒԱՆԱԿԱՆ 11-ՐԳ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ ԱՒԱՐՏԵՑԱԻ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԳԻ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՄԲ

Երկօրեայ նիստերէ կտք, Հ.Մ.Ը.Մ.Ի միջ-դիւանական 11-րդ խորհրդաժողովը աւարտեցաւ Ծիծեռնակաբերդ այցելութեամբ:

Այցելութիւնը տեղի ունեցաւ Կիրակի, 17 Նոյեմբեր 2024-ի առաւօտեան ժամը 10-ին, մասնակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան, Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի եւ Հ.Մ.Ը.Մ.Ի Արցախի վարչութիւններուն եւ միջ-դիւանական 11-րդ խորհրդաժողովի մասնակիցներուն:



Ծիծեռնակաբերդի յուշարձանին առջեւ, Հ.Մ.Ը.Մ.Ի ընտանիքին անունով ծաղկեպսակ մը զետեղեցին Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Խաչերեան եւ Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի վարչութեան ատենապետ եղբ. Արթիւր Մկրտչեան: Ապա, բոլորը ուղղուեցան անմար կրակին շուրջ, ուր ծաղիկներ խոնարհեցին մեր մէկուկէս միլիոն նահատակներու յիշատակին եւ Տէրունական աղօթքով հրաժեշտ տուին հայութեան սրբավայրին:



ԷԶՄԻԱԾԻՆԻ ՄԷՋ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՕՆ՝ ՄԱՀԱՅԱԾ ԵՒ ՆԱՀԱՏԱԿՈՒԱԾ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ծիծեռնակաբերդ այցելութենէն կտք, Հ.Մ.Ը.Մ.Ի բազմանդամ պատուիրակութիւնը ուղղուեցաւ Ս. Էջմիածին, ուր ներկայ գտնուեցաւ Պատարագի եւ մահացած ու նահատակուած Հ.Մ.Ը.Մ.ականներու յիշատակին յատկապէս կատարուած հոգեհանգստեան պաշտօնի:

Հոգեհանգիստէն առաջ, Ս. Էջմիածինի արտաքին յարաբերութիւններու եւ արարողակարգի բաժնի տնօրէն Նաթան Արք. Յովհաննիսեան ներկայ հաւատացեալներուն կարճ խօսքով մը ծանօթացուց Հ.Մ.Ը.Մ.ը եւ անոր 106 տարուան մարդանուէր ու հայանուէր առաքելութիւնը: Ապա, բոլորը իրենց աղօթքներով հոգիներու խղաղութիւն խնդրեցին այն Հ.Մ.Ը.Մ.ականներու համար, որոնք այս աշխարհէն հեռացան միութեան ու ազգին հանդէպ իրենց պարտքը կատարած ըլլալու խիղճի հանգստութեամբ:





Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐՑԱԽԻ ԵՒ Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-Ի ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Միջ-դիւանական 11-րդ խորհրդաժողովին եւ Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի 35-ամեակի տօնակատարութիւններուն առիթով Երեւան ժամանած Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամները Երեքշաբթի, 12 Նոյեմբեր 2024-ին, Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի կեդրոնին մէջ առանձին հանդիպումներ ունեցան Հ.Մ.Ը.Մ-ի Արցախի Մեկուսի շրջանի վարչութեան եւ Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի Կեդրոնական Վարչութեան հետ:

Արցախի վարչութեան հետ քննարկուեցան վտարանդի մասնաճիւղին անցնող մէկ տարուան աշխատանքները եւ դիմադրուած գլխաւոր դժուարութիւնները: Կեդրոնական Վարչութիւնը այս առիթով անդամ մը եւս հաստատեց միութեան աշխարհասփիւռ շրջաններուն ամբողջական աջակցութիւնը Արցախի Մեկուսի շրջանին եւ անոր ծրագիրներուն:

Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի Կեդրոնական Վարչութեան հետ արծարծուեցան միջ-դիւանական 11-րդ խորհրդաժողովի եւ ՀԱՍԿ-ի 35-ամեակի նախապատրաստական աշխատանքները եւ հայրենի սկաւտտութիւնը յուզող հարցեր: Հանդիպումին Կեդրոնական Վարչութիւնը իր յատուկ գնահատանքը յայտնեց անցնող ամառ Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի կազմակերպած բակային ճամբարներուն, որոնց մասնակցեցան 850 արցախցի երեխաներ: Հանդիպումը նաեւ առիթ մը եղաւ անդրադառնալու Հայաստանի մէջ Հ.Մ.Ը.Մ-ի աշխատանքներուն տարածման ու զարգացման բազմազան ծրագիրներուն:



Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի 35-ամեակը փառաւոր ճաշկերոյթով մը նշուեցաւ Շաբաթ, 16 Նոյեմբեր 2024-ի երեկոյան ժամը 7-ին, Երեւանի «Կարս» ճաշարանային համալիրի սրահին մէջ, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան լրիւ կազմին եւ միութեան աշխարհասփիւռ ներկայացուցիչները համախմբող, միջ-դիւանական 11-րդ խորհրդաժողովի մասնակիցներուն:

Իրենց ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ը պատուեցին Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Կիրո Մանոյեան, Հ.Յ.Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինի անդամներ եւ Հայաստանի Ազգային ժողովի պատգամաւորներ Գեղամ Մանուկեան եւ Արգիշտի Գեորգեան, Հ.Յ.Դ. Արցախի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Արա Պուլուզեան, Համազգայինի Կեդրոնական Վարչութեան անդամ Արտաշէս Շահապեան, ՀՕՄ-ի Հայաստանի Շրջանային Վարչութեան անդամներ եւ Հ.Մ.Ը.Մ-ի բարեկամներ ու բարերարներ, ընդամէնը՝ 250 հոգի:

ԲԱՅՈՒՄԸ

Ճաշկերոյթին բացումը կատարուեցաւ Հայաստանի, Արցախի եւ Հ.Մ.Ը.Մ-ի քայլերգներով: Բացման խօսքով հանդէս եկան եւ հանդիսավարութիւնը կատարեցին եղբ. Սեւակ Նազարեան եւ քոյր Կարինէ Կրեւեղեան:

Այս առիթով ցուցադրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի 35ամեայ երթը ներկայացնող տեսանիւթ մը: Յոբելէար շրջանին անունով խօսք արտասանեց ատենապետ եղբ. Արթիւր Մկրտչեան, Հ.Յ.Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինին





Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-Ի 35-ԱՄԵԱԿԻ ՃԱՇԿԵՐՈՅԹԸ ԵՒ ԱՐԺԱՆԱԻՈՐՆԵՐՈՒ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄՆԵՐԸ

անունով՝ Գեղամ Մանուկեան եւ Հ.Մ.-Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան անունով՝ եղբ. Վիգէն Աւագեան:

ՅՈՒՅԼԵԱՐ Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-Ի ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍԲԸ

Իր խօսքին սկիզբը, Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Արթուր Մկրտչեան ներկաներէն խնդրեց վայրկեան մը յօտնկայս լութեամբ յարգել լուսաւոր յիշատակը մեր բոլոր նահատակներուն: Ապա, ներկաները ողջունելով ան ըսաւ, որ պատմական եւ երկար սպասուած իրադարձութիւն էր Հ.Մ.Ը.Մ.-ի վերահիմնադրումը Հայաստանի մէջ, եւ միշտ երախտագիտութեամբ ու խորին յարգանքով պիտի յիշենք այն մարդիկը, որոնք 1989-ին նախաձեռնեցին այդ գործին: Փառք

ու պատիւ Հ.Մ.-Ը.Մ.-ի մեծ ընտանիքին, աշխարհասփիւռ մեր շրջաններուն, որոնք առաջին օրերէն աջակից ու նեցուկ եղան Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ին, խանդավառուեցան եւ այդ ոգեւորութիւնը, ջերմութիւնը հիմնադրութենէն ի վեր կը փոխանցեն մեզի:

Եղբ. Մկրտչեան արագ ակնարկ մը նետեց Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի 35-ամեայ երթին վրայ եւ հաստատեց. «35 տարի շարունակ մենք Հ.Մ.Ը.Մ.-ական ազգային ոգիով եւ առաքելութեան բարձր գիտակցութեամբ դաստիարակած ենք բազմաթիւ հայորդիներ եւ այսօր հայ կեանքի տարբեր մարզերուն մէջ կրնանք տեսնել Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի բովէն անցած, կայացած քաղաքացիներ եւ առաջնորդներ: Կարելոր ձեռքբերում էր մեզի համար, իբրեւ Ազգային Սկաուտական Կազմակերպու-



թիւն, անդամակցութիւնը Համաշխարհային Սկաուտական Շարժումին, ձեռք բերելով միջազգային կապեր, նպաստելով տարբեր ազգերու մօտ Հայաստանի եւ հայ ժողովուրդի հեղինակութեան բարձրացման»:

Շարունակելով, Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի ատենապետը նկատել տուաւ, որ «Թերեւս 35 տարին շատ չէ Հ.Մ.Ը.Մ.-ական կազմակերպութեան մը համար, բայց այդ տարիները մեզի համար եղած են կայացումի, քրտնաջան աշխատանքի, ձեռքբերումներու, ուրախութեան ու տիրութեան արցունքի տարիներ: Այս տարիներուն մենք յաղթահարած ենք ներքին եւ արտաքին բազմաթիւ դժուարութիւններ՝ միշտ հաւատարիմ մնալով մեր որդեգրած արժէքներուն... Երբեմն անյոյս ու խաւար թուացող օրերու մէջ





մենք չենք կորսնցներ մեր երազը, կը հաւատանք, որ մենք ենք լոյսը վառողները, չենք վախնար ու չենք ընկրկիր, չենք դաւաճաներ մեր երգումին ու խոստումին եւ վստահ ենք, որ մենք պիտի բարձրանանք ու բարձրացնենք յանուն հայութեան աւելի լաւ ու յաղթական գալիքի» (խօսքին ամբողջութիւնը տեսնելէջ 20) :

ՊԱՐԳԵԻԱՏՐՈՒՄՆԵՐԸ

Յորելեար չրջանի խօսքին յաջորդեցին Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի վաստակաշատ միութենականներու պարգեւատրում-

ները: Արդարեւ, Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի «Ոսկէ շուշանածաղիկ» շքանշանին արժանացան եղբայրներ Էմիլ Մաղաքեան (ի բացակայութեան), որուն շնորհիւ կառուցուեցաւ ժամանակակից յարմարութիւններով Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի Արմաւիրի կեդրոնը եւ Պերճ Թիւֆէնկեան՝ իր երկարամեայ ծառայութեան եւ նուիրումին համար: Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի «Վարդան Բախչեան» շքանշանը շնորհուեցաւ նահատակին գործակից, Հ.Մ.Ը.Մ-ի Հայաստանի մէջ վերընձիւղման առաջին սերունդի անդամներէն եղբարատ Եսայեանի: Շքանշանը յանձ-

նեց նահատակ Վարդանին մայրը՝ քոյր Այտա Բախչեանը: Հ.Մ.Ը.Մ-ի «Ծառայութեան» շքանշանին արժանացաւ եղբ. Դաւիթ Յակոբեան՝ միութեան հանդէպ իր ցուցաբերած անկոտրում հաւատարմութեան համար, իսկ Հ.Մ.Ը.Մ-ի բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանին տիրացաւ եղբ. Օշին Փիրումեան (կենսագրական տուեալները տեսնել առանձին): «Արժանեաց» շքանշանը յանձնեց Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Խաչերեան:

Այս առիթով յատուկ շնորհակալագիրներ եւ յուշանուէրներ յանձնուեցան 13 նուիրատուներու, որոնցմէ իւրաքանչիւրը 1000 ամերիկեան տոլար նուիրեց Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ին: Յուշանուէրներու արժանացան եղբ. Արմանտ եւ քոյր Թամար Քիլիճեաններ (յուշանուէրը ստացաւ իրենց որդին՝ Շանթ Քիլիճեան), Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութիւնը





(յուշանուէրը ստացաւ ատենապետ եղբ. Փիէր Մանուկեան), եղբայրներ Ալէն Ասատուրեան, Բագրատ Եսայեան, Դաւիթ Յակոբեան, Յարութ Գաբրիէլ, Պերճ Թիւֆէնկճեան, Օշին Փիրումեան, Մարտին Լազարեան, Արա Մակաչեան, քոյրեր Լարա Քոռայեան եւ Շուշիկ Աբրահամեան (վերջին չորսին յուշանուէրները ստանձնեց եղբ. Ալէն Ասատուրեան):

Հ.Յ.Դ. ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆԻՆ ԽՕՍՔԸ

Երկրորդ խօսքը արտասանեց Հ.Յ.Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինի անդամ Գեղամ Մանուկեան: Բաւական սրտառուէ խօսքով մը ան ըսաւ. «Իբրեւ Հայաստանի Գերագոյն Մարմինի անդամ շատ դժուար է խօսք ըսել, իսկ իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ական շատ աւելի դժուար է խօսք ըսել ու յիշել բոլոր անոնք, որոնք այսօր այստեղ չեն, ոգեկոչել յիշատակը բոլոր անոնց, որոնք մեզմէ յաւէտ բաժնուած են՝ եղբ. Վարդգէս Տէր Կարապետեանը, որ գլխաւոր ձեւաւորողն էր Հ.Մ.Ը.Մ.ի համահայկական կառույցին: Եղբայրներ Երուանդ Տէմիրճեանը, Յովհաննէս Տէր Յարութիւնեանը, որոնք Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամներ էին, երբ նահատակ Վարդան Բախչեանը եւ եղբ. Բագրատ Եսայեանը կը փորձէին Հայաստանի մէջ կառույց ստեղծել: Երկու օր ետք կը լրանայ Արա Տէմիրճեանի մահուան տարելիցը: Ան Հ.Մ.Ը.Մ.ական էր, բայց առանց Հ.Մ.Ը.Մ.ական ըլլալու ունէր կազմակերպական հսկայական աշխատանք, որպէսզի Դաշնակցութիւնը եւ անոր քոյր կառույցները Հայաստանի մէջ

ՃԱՆՉՆԱՔ

**«ԱՐԺԱՆԵԱՅ»
ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐ
ԵՂԲ. ՕՇԻՆ ՓԻՐՈՒՄԵԱՆ**



Եղբ. Օշին Փիրումեան ծնած է Թեհրան, 12 Յունուար 1968-ին: Սկաուտական շարքերու անդամագրուած է 1974-ին, Թեհրանի Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպութեան ճամբով: 1978 Դեկտեմբերին տեղափոխուած է Մ. Նահանգներ եւ փոխանցուած է տեղւոյն Հ.Ս.Ը.Մ.ի «Արարատ» մասնաճիւղի սկաուտական բաժանմունք՝ հասնելով մինչեւ մասնաճիւղի խմբապետի պաշտօնին: 1988-2006 ան ստանձնած է պատասխանատու զանազան պաշտօններ՝ նշանակուած է մասնաճիւղի Սկաուտ. Խորհուրդի, Շրջանային Սկաուտ. Խորհուրդի անդամ: Ընտրուած է մասնաճիւղի վարչութեան, ապա՝ Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան անդամ:

Սկաուտական աշխոյժ գործունէութեան տարիներուն, 1991-1992, իբրեւ խմբապետ ան մաս կազմած է սկաուտական առաջին խումբին, որ Մ. Նահանգներէն մայր հայրենիք գործուղուած է Հ.Ս.Ը.Մ.ը Հայաստանի մէջ վերահիմնադրելու համար, կազմակերպելով սկաուտական առաջին բանակումները այնտեղ:

Եղբ. Օշին Փիրումեան 2006-ին հաստատուած է հայրենիք, այնուհետեւ իր բեղմնաւոր աշխատանքը շարունակելով իբրեւ Հ.Ս.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի անդամ: Ան երեք շրջան ընտրուած է Հ.Ս.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ, շրջան մը վարելով ատենապետի պաշտօն:

Հ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ նշանակուած է համահայկական 8-րդ բանակումի գործադիր մարմինի անդամ (2006) եւ 9-րդ բանակումի ընդհանուր խմբապետ (2010): Ան նշանակուած է նաեւ համահայկական 8-րդ (2009) եւ 9-րդ մարզախաղերու (2013) կազմակերպիչ յանձնախումբի անդամ: Եղբ. Օշին Փիրումեան, իբրեւ Հ.Ս.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու եւ Հ.Ս.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի պատգամաւոր, մասնակցած է Պատգամաւորական չորս ընդհանուր ժողովի եւ երկու անգամ ընտրուած է Հ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ՝ 2015-2019 եւ 2019-2023:

Եղբ. Օշին Փիրումեան ամուսնացած է եւ ունի երեք զաւակ՝ երկու մանչ եւ մէկ դուստր:





հաստատուին: Անդնահատելի է անոր կատարած աշխատանքը: Հազար փառք Արա Տէմիրճեանի, Վարդգէս Տէր Կարապետեանի, Երուանդ Տէմիրճեանի, Յովհաննէս Տէր Յարութիւնեանի եւ այլ նուիրեալներու յիշատակին: Ամէն մէկս յուշեր ունինք անոնցմէ: Վարդանի մասին չեմ ուզեր խօսիլ, որովհետեւ քիչ մը դժուար պիտի ըլլայ ինձի համար»:

Ապա, Հ.Մ.Ը.Մ-ի առաքելութեան բնորոշումը կատարելով, Գեղամ Մանուկեան շեշտեց, որ «Հ.Մ.Ը.Մ-ը իր ամբողջ գործունէութեան ընթացքին մարմնացումը եղած է հայ ժողովուրդի ճակատագրին: Հ.Մ.Ը.Մ-ը առաջին Հանրապետութեան անկախութեան ժամանակ որբեր հաւաքող, որբերը քաղաքացի դարձնող կառոյց եղած է: Հ.Մ.Ը.Մ-ը նորանկախ հանրապետութեան ժամանակ պոլշեիզմի տիրապետութեան տակ ծնած ու մեծցած սերունդը ազգային ոգիով դաստիարակողը եղած է: Հ.Մ.Ը.Մ-ը Վարդան Բախշեանով օրինակ դարձած է հայրենիքին իր ծառայութեամբ»:

Հ.Յ.Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինի անդամը անդրադարձաւ նաեւ Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի 35ամեայ երթին եւ ըսաւ. «Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ը 35 տարի մարմնացումն է այս դաստիարակութեան, արժեհամակարգին, բարոյական, քաղաքական արժէքներուն: Ասոր լաւագոյն ապացոյցը 2020-ի ամրան, Հ.Մ.Ը.Մ-ի Երեւանի «Հայկ Յովսէփեան» բանակավայրին մէջ Հայաստանի Հանրապետութեան զինեալ ուժերուն ծառայելու պատրաստուող Հ.Մ.Ը.Մ-ական այն եղբայրներն էին, որոնք Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի Կեդրոնական Վարչու-

թիւնը օրին խաչեր յանձնեց եւ այդ եղբայրներէն ոմանք նահատակուեցան Արցախի 44-օրեայ պատերազմին ընթացքին: Բոլորին յիշատակը անմոռաց, իսկ պատնէշի վրայ գտնուողներուն վարձքը կատար: Ձեր աշխատանքը, ձեր վաստակը մեր ժողովուրդին համար է: Պատիւ ձեզ»:

Հ.Մ.Ը.Մ-ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍԲԸ

Ճաշկերոյթին Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան խօսքը փոխանցեց ատենադպիր եղբ. Վիգէն Աւագեան: Ան ըսաւ, որ տօն է այսօր Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին համար: Բոլորը հաւաքուած են նշելու սիրելի յոբելեարին՝ Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի 35-ամեակը: Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ը երիտասարդ է իր տարիքով, բայց իւրայատուկ է իր կենսափորձով:

Եղբ. Աւագեան ներկայացուց եօթը հիմնաւորումներ, որոնք եզակի ըլլալու բնորոշումը կու տան Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ին, իբրեւ անհատին մէջ մարդը, մար-

դուն մէջ ազնիւ քաղաքացին կերտող, 35 տարեկան միութիւն: «Իր առաքելութեան եւ կոչումին գիտակից միութիւն մը միայն կրնայ այսքան բարիք տալ իր





ժողովուրդին, գործ ու արդիւնք՝ իր հայրենիքին: Իր առողջ միջնորդատու, բարոյական մեծ վարկով ու միջազգային ճանաչումով միութիւն մը միայն կրնայ այսքան փնտուռած ու յարգուած ըլլալ», ըսաւ եղբ. Աւագեան:

Ապա, Կեղրոնական Վարչութեան ատենադպիրը խիղճի պարտք նկատեց յիշել Հ.Մ.Ը.Մ.ի Հայաստանի մէջ վերընձիւղման առաջին սերունդի երախտաւորները, նահատակները, սեւ աշխատանքի ախոյեան քոյրերն ու եղբայրները եւ այսօր պատնէշի վրայ եղողները: Ան ընդգծեց, որ «Հ.Մ.Ը.Մ.ը, այս բոլորով Հ.Մ.Ը.Մ. է:

«Բոլորին զոհողութիւններուն գումարն է, որ այս միութիւնը արժանի կը դարձնէ Հայաստանի Ազգային Սկստական Կազմակերպութիւնը ըլլալու եւ մնալու կոչումին:

«Բոլորին նուիրաբերումի անչափելի տարողութիւնն է, որ այս միութիւնը կը պահէ Հայաստանի ամէնէն աշխոյժ, ամէնէն ազգային եւ ամէնէն յանձնա-



ռու պատանեկան-երիտասարդական կազմակերպութիւնը:

«Ու բոլորին վստահութիւնը եւ երբեմն խենթութեան աստիճանի հասնող հաւատքն է, որ այս միութիւնը կ'օժտէ ամէն ձեւի դժուարութիւն յաղթահարելու եւ անկարելին կարելի դարձնելու զօրութեամբ» (խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 14) :

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐԸ

Աւելի քան մէկուկէս ժամ տեւած պաշտօնական բաժինէն ետք, հատուցաւ 35-ամեակի կարկանդակը եւ գործադրուեցաւ գեղարուեստական տպաւորիչ յայտագիր: Երեկոն ծաղկեցուցին «Մասունք» աւանդական երգի-պարի համոյթը, հայրենի արուեստագէտներ Ալլա Լեւոնեան, «Արցախի ձայներ» խումբը, Շուշան Պետրոսեան, Արսէն Գրիգորեան Մըրօ եւ Սմբատ Խալլաթեան: Միջնորդող խանդավառութեան գազաթնակէտին հասաւ երգիչ Սուրէն Աճէմեանի ազգային-յեղափոխական երգերով:

Ճաշկերոյթի միջնորդածն ոգեւորւած՝ կատարուեցան նուիրատուութիւններ: Տեղի ունեցաւ վիճակահանութիւն եւ Արցախեան գորգի աճուրդ-վաճառք, որուն հասոյթը ամբողջութեամբ յատկացուեցաւ Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՄԿ-ին:

Երեկոն փակուեցաւ «Արիւնոտ դրօշ» երգի կատարումով:









Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-Ի 35-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԽՈՍՏՄԱՆ ԵՒ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի 35-ամեակի տոնակատարություններու ծիրէն ներս, Կիրակի, 17 Նոյեմբեր 2024-ի կէսօրէ ետք ժամը 4-ին, Երեւանի Պետական Համալսարանի մարզադահլիճին մէջ տեղի ունեցաւ սկաուտական խոստման եւ երդման հանդիսաւոր արարողութիւն, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի եւ Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի Կեդրոնական Վարչութիւններու,

միջ-դիւանական 11-րդ խորհրդա-ժողովի մասնակիցներու, Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի վարչական կազմերու եւ մեծ թիւով ծնողներու:

Մարզադահլիճի մուտքին ցուցադրուած էին Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի 35-ամեայ գործունէութիւնը ներկայացնող նկարներ եւ սկաուտներու կողմէ պատրաստուած ձեռագիր աշխատանքներ:

Հանդիսութիւնը ընթացք առաւ տողանցքով: Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի շեփորախումբին առաջնորդութեամբ մարզադահլիճ մուտք գործեցին եւ իրենց համապատասխան տեղերը գրաւեցին Հ.Մ.Ը.Մ-ի Արցախի եւ Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի մասնաճիւղերու (Երեւան, Արմաւիր, Վետի) սկաուտները: Ապա, հնչեցին Հայաստանի, Արցախի եւ Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտական քայլերգները:



Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-Ի ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍԳԼ

Հանդիսութեան առաջին խօսքը արտասանեց Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Արթուր Մկրտչեան: Ան ըսաւ, որ 35-ամեակը հրաշալի առիթ է հաշուետու ըլլալու մեր հասարակութեան, ներկայացնելու Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի եւ առհասարակ Հ.Մ.Ը.Մ-ի առաքելութիւնը հայ կեանքի, հայ իրականութեան եւ Հայաստանի հասարակութեան:

«Մեր առաքելութիւնը անցնող տարիներուն եղած է հայ հասարակութեան համար պիտանի, հայրենասէր, իր հայրենիքը, պետութիւնը, շրջակայ միջավայրը եւ առհասարակ մարդը յարգող ու սիրող սերունդ պատրաստելը, յայտնեց եղբ. Մկրտչեան ու շարունակեց, դիւրին չեղաւ մեր ուղին եւ դիւրին պիտի չըլլայ ապագային, բայց մենք քաջ կը գիտակցինք, որ այս մեր կոչումն է, առաքելութիւնն է, եւ պիտի կարողանանք պատուով շարժիլ յառաջ»:

Օգտուելով առիթէն, Հ.Մ.Ը.Մ.-



ՀԱՍԿ-ի ատենապետը շնորհակալու-
թիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք
անցնող տարիներուն Հայաստանի թէ՛
Սփիւռքի մէջ աջակցեցան Հ.Մ.Ը.Մ.-
ՀԱՍԿ-ի կայացման:

Ապա, իր խօսքը ներկայ սկաուտնե-
րուն ուղղելով, եղբ. Մկրտչեան ըսաւ.
«Սիրելի սկաուտներ, դուք էք կամաւոր
բանակին հիմնասիւնը, դուք պիտի դի-
տակցիք Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի առաքե-
լութեան եւ պիտի կարողանաք ձեր
հետագայ կեանքին եւ ամէն քայլափո-
խին ապացուցել ձեր ո՞վ ըլլալը, այլա-
պէս մեր դործը չի յաջողիր, եթէ ոեւէ
սկաուտ իր կեանքին մէջ չեղի այն սկզբ-
բունքներէն եւ այն արժեհամակարգէն,
գոր Հ.Մ.Ը.Մ-ը կու տայ բոլորին: Ես բո-
լորին ներկայութեան, ձեր ծնողներուն
եւ վարչականներու ներկայութեամբ, կը
խնդրեմ եւ կը յորդորեմ այսուհետեւ ըլ-
լալ աւելի պատասխանատու, աւելի սկզբ-
բունքային, երբեք չընկրկել, այլ՝ ձգտել
դառնալ լաւագոյն սկաուտը, լաւագոյն
քաղաքացին եւ լաւագոյն հայր: Ըլլանք
ուժեղ, բարձրանանք եւ բարձրացնենք»:

**Հ.Մ.Ը.Մ. ԱՐՅԱՆԻ
ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍԳԸ**

Հ.Մ.Ը.Մ-ի Արցախի վարչութեան
խօսքը փոխանցեց քոյր Տիրուհի Գաս-
պարեան: Ան շնորհակալութիւն եւ
երախտագիտութիւն յայտնեց Հ.Մ.-
Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան՝ միջ-
դիւանական խորհրդաժողովը Հայաս-
տանի մէջ կազմակերպելու համար եւ
նչեց, որ այս օրերուն առիթը ստեղծուե-

ցաւ ծանօթանալու զանազան շրջաննե-
րու Հ.Մ.Ը.Մ-ական քոյրերու ու եղբայր-
ներու եւ ծրագրելու յառաջիկայի մեր
կատարելիքները:

Քոյր Գասպարեան Արցախի Մեկու-
սի շրջանի վարչութեան անունով շնոր-
հաւորեց խոստում եւ երդում տուող
զայլիկներն ու սկաուտները եւ ըսաւ.
«Սիրելի սկաուտներ, ձեզի կը մաղթեմ
նորանոր յաջողութիւններ եւ կ'ուզեմ,





որ հաւատարմ ձեր ուժերուն եւ գիտակցիք, թէ ինչքան կարեւոր էք դուք հայրենիքին համար»:

Շարունակելով, քոյր Գասպարեան հաստատեց. «Այսօր մենք հսկայական գործ ունինք կատարելիք եւ իրաւունք չունինք մեր պայքարը աւարտած նկատել, մեր պայքարը աւարտած կը նկատենք այն ժամանակ, երբ ազատ ու անկախ Արցախը դարձեալ մեզ կը դիմաւորէ եւ ես վստահ եմ ու կը հաւատամ, որ օր մը մենք պիտի վերադառնանք եւ այնտեղ, բարբառով մեզ պիտի դիմաւորեն մեր «Տէտոն ու Պապոն»: Շնորհակալ եմ, կ' ուզեմ, որ այս հաւատքը վարակիչ ըլլայ, կ' ուզեմ, որ դուք ձեր գործերուն եւս հաւատարմ եւ վստահիք, որ պիտի գայ այն օրը, այն լուսաւոր օրը, որուն մենք բոլորս կը հաւատանք»:

Հ.Մ.Ը.Մ-ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ
Վերջին խօսքը, յանուն Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան, արտասանեց քոյր Թալին Օրտողլեան: Ան նշեց,

որ իբրեւ Հ.Մ.Ը.Մ-ականներ, բոլորիս համար հպարտառիթ երեւոյթ է տեսնել եւ ներկայ ըլլալ Հ.Մ.Ը.Մ-ի շրջանի մը հիմնադրութեան ամեակներու հանդիսութիւններուն, որոնք լոկ բազմութիւն հաւաքող ձեռնարկներ չեն եւ անոնց արժէքը մէկ

կամ երկու ժամուան հանդէսին մէջ չէ որ կը կայանայ: Այս հանդիսութիւններուն լիիրաւ արժէքը պէտք է տեսնել արգասիքը տարիներու աշխատանքին, այս միութեան սկզբունքներուն հաւատացող եւ անոնց հիման վրայ գործող մարդոց կամքի զօրութեան:

Քոյր Օրտողլեան հաստատեց, որ «Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ը այսօր կը տօնէ իր հիմնադրութեան 35-ամեակը, սակայն Հայաստանի մէջ Հ.Մ.Ը.Մ-ի կեանքը

չատ աւելի կանուխ սկսած է. անիկա հայրենիք մուտք գործեց առաջին անկախութեան հետ՝ որբախնամի հայրենանուէր առաքելութեամբ: Դժուար պարտականութիւն մը այդ օրերուն համար, երբ հազարաւոր որբեր կարիքը ունէին գիրենք գրկողի եւ գուրգուրացողի: Եւ Հ.Մ.Ը.Մ. տէրը դարձաւ այդ ծանր պարտականութեան: Կարճատեւ մը ետք սակայն, պատմութիւնը այլ ընթացք ունեցաւ եւ Հ.Մ.Ը.Մ. պարտաւորեցաւ դուրս գալ Հայաստանէն եւ 70 տարի Սփիւռք դարձաւ՝ իր սրտին մէջ պահելով Եռագոյնն ու հայրենիքը: Պատմութիւնը նոր անկիւնադարձ մը ունեցաւ, երբ 1989-ին Հ.Մ.Ը.Մ. վերադարձաւ հայրենիք՝ օրուան Կեդրոնական Վարչութեան օրհնութեամբ եւ զօրակցութեամբ»:

Իր խօսքը խոստով եւ երգում տրւող գայլիկներուն եւ սկառտներուն ուղղելով քոյր Օրտողլեան ըսաւ. «Տէրը եղէք ձեր սկառտական խոստովին. մնացէք հաւատարիմ Աստուծոյ, գործեցէք բարիքներ եւ միշտ ծառայեցէք մեր





բոլորին հայրենիքին: ՀԱՍԿ-ի նստավայրի պատերուն վրայ տեղադրուած հերոս նահատակներուն նկարները, ինչպէս նաեւ Բիւրականի բանակավայրին մէջ ծաղկած պուրակը թող դառնան ձեր հայեացքներուն կիզակէտը եւ կողմնացոյցը ձեր աշխատանքներուն: Դարձէ՛ք արժանի յաջորդները այդ նահատակներուն, որոնք չսակարկեցին, երբ հայրենիքը գիրենք կանչեց եւ իրենց կեանքը նուիրելով փաստեցին, որ իրենք արժա-

նաւոր գինուորներն են Հ.Մ.Ը.Մ-ի «Կամաւոր բանակ»ին: Դուք եւս գինուորներն էք այդ «Կամաւոր բանակ»ին եւ դրօշն ու ջահը այսօր ձեզի փոխանցուած են: Բարձր պահեցէ՛ք զանոնք եւ ձեր այսօրուան տուած խոստումին բառերը դործի վերածելով դէպի յառաջ քարեցէ՛ք խրոխտ ու հպարտ, որովհետեւ դուք սովորական սկաուտներն չէք, ԴՈՒՔ Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտներն էք, ԴՈՒՔ «Նահատակ ցեղի կամաւոր բանակ»ին

գինուորներն էք» (խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 15) :

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐԸ

Հանդիսութեան գեղարուեստական բաժինով սկաուտներ ներկայացուցին բաւական տպաւորիչ յայտագիր՝ դաւազաններու ցուցադրութիւն, իբրեւ կարգապահութեան եւ համախմբուածութեան լաւ օրինակ: Բուրգեր, իբրեւ համագործակցութեան եւ հաւասարակըշուութեան կարեւորութեան ցուցադրութիւն եւ պար (Կարնոյ «Քոչարի»), իբրեւ մշակոյթի անգին զանձերու պահպանման յանձնառութիւն:

ԽՈՍՏՄԱՆ ԵՒ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հանդիսութեան վերջին եւ ամէնէն աւելի սպասուած բաժինով տեղի ունեցաւ գայլիկներու խոստման եւ սկաուտներու երգման արարողութիւն: Բազմաթիւ գայլիկներ կատարեցին իրենց առաջին ու համարձակ քայլը դէպի Հ.Մ.Ը.Մ-ի մեծ եւ հիւրընկալ ընտանիք: Անոնք ստացան սկաուտական կեանքի խորհրդանիշ՝ իրենց առաջին փողկապները: Կատարուեցաւ նաեւ Ա. կարգի, Վարիչ Առաջնորդի, Փոխ Խմբապետի եւ Խմբապետի աստիճաններու յանձնումի արարողութիւն:

Խոստում եւ երդում տուող գայլիկներու եւ սկաուտներու փողկապներու տուելութեան մասնակցեցան Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամները:

Հանդիսութիւնը վերջ գտաւ «Յառաջ նահատակ» քայլերգի կատարողութեամբ:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐՈՒԻ ՄԱՐՄԻՆԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ՝

ՀԱՆԴԻՊՈՒՄ-ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ՝ ՀԱՅՐԵՆԻ ԼՐԱՏՈՒԱՄԻՋՈՑՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ

Հ.Մ.Ը.Մ.Ի միջ-դիւանական 11-րդ խորհրդակցությունը մասնակցութեան համար Երեւան ժամանած Հ.Մ.Ը.Մ.Ի աշխարհասփիւռ շրջաններու պատասխանատուներու ներկայութեան օգտուելով, Ուրբաթ, 15 Նոյեմբեր 2024-ի երեկոյեան ժամը 7-ին, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան հանրային կապերու մարմինը ծանօթացման հանդիպում-ընդունելութիւն մը կազմակերպեց հայրենի լրատուամիջոցներու ներկայացուցիչներու համար: Հանդիպումը նպակատաղեց 106-ամեայ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը եւ անոր 35-ամեայ Հայաստանեան կազմակերպութիւնը՝ Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ը մօտէն ծանօթացնել հայրենի բանաւոր, գրաւոր թէ էլեկտրոնային մամուլին եւ փոխադարձ կապեր հաստատել Հ.Մ.Ը.Մ.Ի մեծ ընտանիքի անդամներուն եւ մամուլի ներկայացուցիչներուն միջեւ:

Հանդիպում-ընդունելութիւնը տեղի ունեցաւ «Քոնկրէս» հիւրանոցին մէջ, ներկայութեամբ 15 լրատուամիջոցներու ներկայացուցիչներու, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամներու եւ միջ-դիւանական 11-րդ խորհրդակցութեան մասնակիցներու:

Հանդիպումին կազմակերպիչ մար-



ԳՎԻՈՒՄ ԵՒ ՀԱՄԿԻՆ
ՅԱՃԱՆ ՏՈՒՄԻՍ ԿԱԶՄԵ

1. Ի՞նչ է Հ.Մ.Ը.Մ.ը եւ ո՞րն է դրա նպատակները:

- Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը համահայկական, սկաուտական, մարզական, երիտասարդական, հասարակական կազմակերպութիւն է, որը հիմնադրուել է 1918 թ.ին Պոլսում եւ զբաղուում է հայ երիտասարդների ոչ-ֆորմալ կրթութեամբ՝ սպորտի եւ սկաուտական գործունէութեան միջոցով: Հ.Մ.Ը.Մ.ի նպատակն է դաստիարակել տիպար հայ քաղաքացիներ, ամրապնդել հայ պատանիների եւ երիտասարդների ազգային ինքնութիւնը, աջակցել համայնքային ներգրաւուածութեանը եւ նպաստել առողջ ապրելակերպին, ինչպէս նաեւ պահպանել հայկական մշակոյթն ու ժառանգութիւնը:

2. Ո՞րն է ՀԱՍԿ-ի նպատակը եւ ինչպէ՞ս է այն կապուած Հ.Մ.Ը.Մ.ի հետ:

- ՀԱՍԿ-ը՝ Հայաստանի Ազգային Սկաուտական Կազմակերպութիւնն է, որը զբաղուում է երիտասարդների եւ պատանիների հայրենասիրական ու բնապահպանական դաստիարակութեամբ: Այն մաս է կազմում Հ.Մ.Ը.Մ.ի ընդհանուր գործունէութեան եւ իրականացուող ծրագրերին, որոնք խթանում են համայնքային ներգրաւուածութիւնը եւ ազգանուր դաստիարակութիւնը: ՀԱՍԿ-ը անդամ է Համաշխարհային Սկաուտական Կազմակերպութեանը: ՀԱՍԿ-ը Հայաստանի մէջ մարզական գործունէութեամբ չի զբաղուում:

3. Որտե՞ղ են գործում Հ.Մ.Ը.Մ.ը եւ ՀԱՍԿ-ը:

- Հ.Մ.Ը.Մ.ը գործում է աշխարհի տարբեր երկրներում՝ ունենալով 112 մասնաճիւղեր աշխարհի 26 երկրներում: Հ.Մ.Ը.Մ.ի անդամ են տասնեակ հազարաւոր մանուկներ, պատանիներ, երիտասարդներ ու տարեցներ: ՀԱՍԿ-ը յատկապէս կենտրոնացած է Հայաստանում, 14 մասնաճիւղերով եւ գործում է 7 մարզերում՝ կազմակերպելով բազմապիսի սկաուտական եւ հայրենասիրական միջոցառումներ:



մինին անունով ներկաները ողջունեց եւ կարճ տեսանիւթով մը Հ.Մ.Ը.Մ.ի հանրային կապերու համակարգը ներկայացուց եղբ. Նժդեհ Մկրտիչեան: Ան իր խօսքին մէջ նշեց, որ սովորականէն տարբեր հաւաք մըն է այս մէկը, որովհետեւ այստեղ հաւաքուած՝ ոչ-աշխատանքային հանդիպում մը կ'իրականացնենք՝ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան նպատակները ծանօթացնելու եւ առաքելութեան գլխաւոր առաջադրանքները պարզելու համար: Հանդիպումը աւրիթ մըն է 106-ամեայ այս միութեան զանազան շրջաններու աշխատանքներու ծանօթացման եւ փոխադարձ գործակցութեան կապերու հաստատման:

Ապա, խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի ատենապետ եղբ. Արթիւր Մկրտչեան:

Ան ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.ի Հայաստանի մէջ վերընձիւղման պատմականը, շեշտելով, որ Հ.Մ.Ը.Մ. Հայաստանի առաջին Հանրապետութեան օրերուն ունեցաւ կարճատեւ, սակայն երախտաշատ գործունէութիւն, ապա՝ 70 տարւան տարագրութենէ ետք, ան հայրենիքի մէջ վերընձիւղուեցաւ 2 Դեկտեմբեր 1989-ին, երբ Հայաստան անկախ չէր: Այսօր, Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ը 35 տարեկան է, - հաստատեց եղբ. Մկրտչեան, յիշեցնելով որ 1996



թուականէն ի վեր, իբրեւ Հայաստանի Ազգային Սկստակական Կազմակերպութիւն (ՀԱՍԿ), Հ.Մ.Ը.Մ. հայրենի սկստութիւնը կը ներկայացնէ Համաշ-

4. Ինչպիսի՞ գործունէութիւններ են իրականացում 3.Ս.Ը.Ս.ի շրջանակներում:

- 3.Ս.Ը.Ս.ը հիմնական երեք ուղղութիւններով է աշխատում՝ սկստակական, մարզական ու երիտասարդական: Կազմակերպում է տարբեր սպորտային գործունէութիւններ աւելի քան 14 մարզածեւերում, մարզական մրցաշարեր, ճամբարներ, սկստակական գործունէութիւններ ու միջոցառումներ, մշակութային տօնակատարութիւններ եւ հայրենասիրական դասընթացներ, որոնք նպաստում են հայ երիտասարդների համախմբմանը եւ ինքնութեան պահպանմանը: Վերջերս Արեւմտեան Ա.Մ.Ն.ում կեանքի կոչուեց նաեւ յատուկ խնամքի կարիք ունեցող երեխաների համար «Յրաշք» ծրագիրը, նրանց հասարակական կեանքում ներգրաւելու նպատակաւ:

5. Ինչպէ՞ս կարող եմ անդամակցել 3.Ս.Ը.Ս.ին կամ ՀԱՍԿ-ին:

- 3.Ս.Ը.Ս.ին կամ ՀԱՍԿ-ին անդամակցելու համար պէտք է դիմել մօտակայ մասնաճիւղին կամ կենտրոնին: Կազմակերպութիւնները բաց են բոլոր հայ երիտասարդների եւ պատանիների համար, ովքեր ցանկանում են միանալ սկստակական, մարզական կամ երիտասարդական գործունէութեան:

6. Ո՞վ է ղեկավարում 3.Ս.Ը.Ս.ը եւ ՀԱՍԿ-ը:

- 3.Ս.Ը.Ս.ը կառավարում է Կենտրոնական Վարչութեան կողմից, որը բաղկացած է ընտրուած անդամներից՝ աշխարհի տարբեր երկրներից: Իւրաքանչիւր Շրջան կամ մասնաճիւղ ունի իր վարչութիւնը, Սկստակական Խորհուրդն ու համապատասխան յանձնախմբերը: ՀԱՍԿ-ը ղեկավարում է Հայաստանի Կենտրոնական Վարչութիւնը, որը համագործակցում է 3.Ս.Ը.Ս.ի սփիւռքեան կառոյցների հետ:

7. Ինչպէ՞ս են 3.Ս.Ը.Ս.ի եւ ՀԱՍԿ-ի միջոցառումները ֆինանսաւորում:

- Միջոցառումների մեծ մասը ֆինանսաւորում է անդամավճարներից եւ նուիրատուութիւններից: Նման միջոցները հնարաւորութիւն են տալիս կազմակերպել ճամբարներ, դասընթացներ եւ սպորտային մրցաշարեր:

8. Ինչպիսի՞ արժէքներ է ուսուցանում 3.Ս.Ը.Ս.ը իր անդամներին:

- 3.Ս.Ը.Ս.ը կարելորում է համամարդկային արժէքներ. հայրենասիրութիւնը, ինքնուրոյնութիւնը, եղբայրասիրութիւնը, թիմային աշխատանքը եւ կամաւորութիւնը:

9. Ինչպիսի՞ն է 3.Ս.Ը.Ս.ի ազդեցութիւնը համայնքի վրայ:

- 3.Ս.Ը.Ս.ը խթանում է հայ համայնքի համախմբմանը՝ ստեղծելով ակտիվ, առողջ, ընկերասէր եւ հայրենասէր երիտասարդների միջավայր: Կազմակերպութեան միջոցով հայ երիտասարդները կարող են կապ հաստատել իրենց արմատների հետ, սովորել ու զարգանալ միասնական եւ հարուստ մշակութային միջավայրում:

10. Ինչպէ՞ս է 3.Ս.Ը.Ս.ը նպաստում հայկական ինքնութեան պահպանմանը:

- 3.Ս.Ը.Ս.ը ոչֆորմալ կրթութեան ճամբով մշտապէս կազմակերպում է երիտասարդական, սկստակական ու մարզական միջոցառումներ: Անդամները կարողանում են կապ հաստատել հայկական մշակոյթի հետ, սերտել հայրենասիրական արժէքներ եւ զարգացնել ազգային հպարտութիւնը: Միջազգային կապերի միջոցով կազմակերպութիւնը հայ երիտասարդներին հնարաւորութիւն է տալիս ինքնաարտայայտուել եւ համախմբուել իրենց մշակութային ժառանգութեան շուրջ:



խարհային Սկաուտական Շարժումին մօտ:

Եղբ․ Մկրտչեան նչեց, որ իբրև սկաուտական շարժում, Հ․Մ․Ը․Մ․-ՀԱՍԿ կը նպատակադրէ պատրաստել կիրթ, ազնիւ, բնապահպան, ազգասէր ու հայրենասէր սերունդ մը, որ ըլլայ տէր ու պահապան մարդկային արժանիքներու եւ ազգային արժէքներու:

Այնուհետեւ ցուցադրուեցաւ Հ․Մ․Ը․Մ․-ի գործունէութիւնը եւ պատմական երթը ծանօթացնող տեսանիւթ մը:

Հանդիպում-ընդունելութեան վերջին խօսքը արտասանեց Հ․Մ․Ը․Մ․-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եւ հանրային կապերու պատասխանատու եղբ․ Վիգէն Աւագեան: Ան անդրադարձաւ Հ․Մ․Ը․Մ․-ի եզակի միութիւն մը ըլլալու հանգամանքին, դիտել տալով որ՝

ա․ Հ․Մ․Ը․Մ․-ի գործունէութեան վրայ արեւը մար չի մտներ: Ան կը գործէ աշխարհի հինգ ցամաքամասերու 26 երկիրներու 112 քաղաքներու մէջ:

բ․ Ունի 106 տարուան պատմութիւն

ու աւանդ: Նորանկախ Հայաստանի հնագոյն պատանեկան-երիտասարդական միութիւնն է, որ հիմնուած է նախքան անկախութեան հռչակումը եւ այսօր 35 տարիէ ունի անընդմէջ գործունէութիւն:

գ․ Ունի տարբեր միջավայրերու մէջ գործելու փորձառութիւն (Պոլսոյ թաղերէն Կիւմրիի որբանոցները, սփիւռքեան հիւղաւաններէն արեւմտեան հսկայական քաղաքներ, հասնելու համար մայրաքաղաքներ Ստեփանակերտ, Երեւան, Թիֆլիս, Մոսկուա եւ այլուր):

դ․ Ունի կամաւոր սկզբունքով գործելու իւրայատկութիւն:

ե․ Ունի երեք ճիւղով՝ սկաուտական, մարզական եւ վարչական աշխատանքներու ճամբով սերունդ կերտելու առաքելութիւն:

զ․ Ունի միջազգային ճանաչում (Համաշխարհային Սկաուտական Շարժումին մօտ) եւ մեծ վարկ ու հեղինակութիւն (գործող երկիրներու սկաուտական եւ մարզական ֆետերասիոններ

րուն եւ տեղական շրջանակներուն մօտ):

Ապա, իր խօսքը ներկայ հիւրերուն ուղղելով, եղբ․ Աւագեան յայտնեց, որ Հ․Մ․Ը․Մ․ եւ գանգուածային լրատուամիջոցներ նոյն գործը կը կատարեն տարբեր միջոցներով: Երկուքն ալ կը զբաղին քաղաքացիական դաստիարակութիւն շամբելու եւ գիտակցական մտածողութիւն կերտելու աշխատանքով: Երկուքն ալ սերունդ ու միտք կը պատրաստեն, հետեւաբար ան կենսական նկատեց երկուքին գործակցութիւնը, մէկ կողմէ Հ․Մ․Ը․Մ․-ի աշխատանքներուն արձագանգումը կարելիութիւնները ընդլայնելու, իսկ միւս կողմէ լրատուամիջոցներու աշխատանքին շահագրգռութեան ծիրը ընդարձակելու եւ Հ․Մ․Ը․Մ․-ի համակիր լայն գանգուածին հասնելու համար:

Խօսքերուն յաջորդեց ընդունելութիւն-հիւրասիրութիւն եւ զրոյց՝ ներկայ լրատուամիջոցներու ներկայացուցիչներուն եւ Հ․Մ․Ը․Մ․-ի պատասխանատուներուն միջեւ: Հիւրերը հանդիպումէն մեկնեցան Հ․Մ․Ը․Մ․-ի հանրային կապերու մարմինին կողմէ տրամադրուած նուէրներով (Հ․Մ․Ը․Մ․-ի թանգարանին ալպոմ-յուշամատեանը, «Հ․Մ․Ը․Մ․-ի գործունէութեան մասին յաճախ հարցընդ հարցում-պատասխաններու պոռչիւրներ եւ յատուկ Եռ-էս-Պի-ներ, որոնք ընդգրկեցին Հ․Մ․Ը․Մ․-ական գրականութիւն, պատմութեան գիրքեր, միութեան «Մարզիկ» պաշտօնաթերթի PDF օրինակներ, տեսանիւթեր եւ Հ․Մ․Ը․Մ․-ը ծանօթացնող անհրաժեշտ նիւթեր):

Երեք տարի առաջ, համա-Յ.Մ.-Ը.Մ.ական առցանց առաջին համագումարով (6 եւ 13 Նոյեմբեր 2021) ազդանշանը տրուեցաւ Յ.Մ.Ը.Մ.ի քարոզչական աշխատանքներու մեկնարկին՝ միութեան քարոզչական միջոցներու մէկտեղումի, համադրումի եւ համակարգումի ճիգին:

Տարի մը առաջ, Հոկտեմբեր 2023-ին, Յ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական ԺԳ. Ընդհանուր Ժողովը կանոնագրային յօդուած մը բանաձեւեց քարոզչական աշխատանքի համար, իբրեւ միութեան կանոնադրական նպատակներու իրագործման եօթը կարեւոր միջոցներէն մէկը:

Կը մնար այդ միջոցին ձեւ ու մարմին տալ, անոր աշխատանքի եղանակը յստակացնել, չափանիշները որոշել եւ պատասխանատուները ճշդել, ինչ որ կատարեց համա-Յ.Մ.Ը.Մ.ական առցանց երկրորդ համագումարը, գործնական ու անմիջական քայլերով, ընդհանրական թէ ցամաքամասային մօտեցումներով:

Շաբաթ, 19 Հոկտեմբեր 2024-ի երեկոյեան ժամը 5-ին (Պէէյ-րուլթի ժամով), ընթացք առաւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական քարոզչական առցանց Բ. համագումարը, կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան քարոզչական յանձնախումբին, մասնակցութեամբ Շրջանային եւ Մեկուսի 21 շրջաններէ աւելի քան 50 քարոզչական պատասխանատուներու եւ ընկերային ցանցեր վարող քոյր-եղբայրներու: Համագումարին ներկայ էին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ղեկանի անդամներ եւ համագումարի կազմակերպիչ՝ Կեդրոնական Վարչութեան քարոզչական յանձնախումբի ներկայացուցիչներ:



ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԱՌՑԱՆՑ Բ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՁԵՌՆԱՐԿԵՑ ՄԻՈՒԹԵԱՆ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԼՈՒՐՁ ՔԱՅԼԵՐՈՒ


ԲԱՑՈՒՄԸ

Բացման խօսքով հանդէս եկաւ քարոզչական յանձնախումբի անդամ քոյր Նայիրի Ազարիկեան: Ան ողջունեց ներկաները եւ հրահրեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Խաչերեանը՝ փոխանցելու իր խօսքը:

Եղբ. Խաչերեան իր խօսքը միութեան

քարոզչական մեքենայի «կամաւոր զինւորներու վաշտ»ին ուղղելով ըսաւ, որ հարկ է քարոզչական մեր աշխատեւածը դուրս բերել տեղական, շրջանային ցիր ու ցան վիճակէն եւ աշխարհին ներկայանալ իբրեւ համահայկական, մէկ ու հզօր ամբողջութիւն կազմող միութիւն: Ան թելադրեց հասարակ յայտարարներ գտնել քարոզչական մեր մօտեցումներ





րուն մէջ, ամէնուրեք ըլլալ պատշաճ ներկայութիւն, միշտ պահելով Հ.Մ.-Ը.Մ.-ական բարոյականութեան գլխաւոր արժէքները:

Յաջորդեց ծանօթացման բաժին մը՝ յանձնախումբի անդամներու եւ նման համագումարի մը առաջին անգամ մասնակցողներու:

ՆԱԽՈՐԴ ՔԱՌԱՄԵԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ ԾԱՆՕԹԱՅՈՒՄԸ

Համագումարին առաջին զեկուցումը ներկայացուց Կեդրոնական Վարչութեան քարոզչական յանձնախումբի անդամ եղբ. Նժդէճ Մկրտիչեան: Ան ներկայացուց յանձնախումբին նախորդ քառամեակին (2019-2023) կատարած գլխաւոր աշխատանքները եւ Հ.Մ.-Ը.Մ.-ի ԺԳՊատգամաւորական Ընդհանուր Ժողովին բանաձեւերը՝ քարոզչական մարզին վերաբերեալ:

Հ.Մ.-Ը.Մ.-Ի ՔԱՐՈՉՁՈՒԹԵԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Երկրորդ զեկուցումը ներկայացուց քարոզչական յանձնախումբի ատենապետ եղբ. դոկտ. Գէորգ Յակոբեան՝

նիւթ ունենալով «Հ.Մ.-Ը.Մ.-ի քարոզչութեան ռազմավարական ուղղութիւնները»: Ան անդրադարձաւ հիմնական չորս ուղղութեան.-

ա. Հ.Մ.-Ը.Մ.-ի ճանաչելիութեան եւ հասանելիութեան մակարդակը բարձրացնելու անհրաժեշտութիւն:

բ. Հ.Մ.-Ը.Մ.-ի թուային (Digital) ներկայութիւնը եւ ներգրաւուածութիւնը բարելաւելու կարիք:

գ. Զանգուածային լրատուամիջոցներու հետ մեր գործակցութիւնը զարգացնելու կարեւորութիւն:

դ. Շրջաններու միջեւ կապերը աւելի ամրապնդելու եւ շրջանային, ցամաքամասային թէ՛ համաշխարհային մեր քարոզչութեան յաւելեալ թափ տալու անհրաժեշտութիւն:

ԻՆՉՊԻՍ ԱՊԱՀՈՎԵԼ ՄԵՐ ՅԱՆՅԵՐՈՒՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԻՒՆԸ

Ապա, առաջին նիստին վերջին նիւթը ներկայացուց Հ.Մ.-Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան IT-ի՝ տեղեկատուական արհեստագիտութեան աշխատանքներու պատասխանատու եղբ. Շանթ Տէմիրճեան: Ան բացատրեց «Ի՞նչպէս ապահովել մեր ցանցերուն անվտանգութիւնը»:


Բոլոր ներկայացումները կատարուեցան փառքը փոյնթերով:

ԽՍՐԱԿԱՅՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Մէկուկէս ժամուան ներկայացումներէ ետք, առցանց համագումարին մասնակիցները բաժնուեցան երեք խումբակի (Միջին Արեւելք-Հայաստան-Արցախ, Եւրոպա, Ամերիկաներ-Աւստրալիա): Անոնք հրաւիրուեցան նոյն օրը եւ յաջորդող օրերուն առցանց առանձնաբար քննարկելու ներկայացուած նիւթերը եւ իւրաքանչիւրը իր ցամաքամասի պահանջներուն համաձայն մշակելու քարոզչական իր ուղղութիւնները, նկատի ունենալով միութեան քարոզչական ռազմավարութեան գլխաւոր չորս կէտերը եւ տեղական-տեղայնական իւրայատուկ պայմանները:

ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԸ

Շաբաթ մը ետք, 26 Հոկտեմբեր 2024-ի երեկոյեան ժամը 5-ին (Պէյրութի ժամով), համա-Հ.Մ.-Ը.Մ.-ական քարոզչական առցանց Բ. համագումարը շարունակեց եւ աւարտեց իր աշխատանքները: Նիստին սկիզբը, ներկաները ողջունեց եւ նիստը վարեց քարոզչական յանձնախումբի անդամ քոյր Նայիրի Ազա-



րիկեան: Ապա, ան հրաւիրեց նախորդ նիստին կազմուած խմբակներու ներկայացուցիչները՝ ներկայացնելու իրենց գեկուցումները:

Երեք խմբակներու ներկայացուցիչներ՝ եղբ. Րաֆֆի Հատիտեան (Գանատա), եղբ. Անտոն Ծատայեան (Փարիզ) եւ քոյր Դալար Պէպէճեան (Լիբանան) ներկայացուցին Ամերիկաներու, Եւրոպայի եւ Միջին Արեւելքի խմբակներու քննարկումներուն արդիւնքները:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԲԱՐՈՉՉՈՒԹԵԱՆ ԴԻՄԱԳԻԾԸ. ԻՆՉ ԸՆՆԵԼ, ԻՆՉ ՉԸՆՆԵԼ

Ապա, Կեդրոնական Վարչութեան քարոզչական յանձնախումբի անդամ քոյր Ռուբինա Խայեթ-Եսայեան ներկայացուց «Հ.Մ.Ը.Մ.Ի քարոզչութեան դիմագիծը. ի՞նչ ընել եւ ի՞նչ չընել» նիւթը («Visual identity Dos and Don'ts»)՝ հիմնուելով վերջերս պատրաստուած յատուկ ուղեցոյցի մը վրայ:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓՈՒՍՆՑՈՒՄՆԵՐ

Յաջորդեց համագումարի կազմակերպիչ յանձնախումբին կողմէ քոյր Աստղիկ Աչրգեանի ներկայացումը՝ քա-

րոզչական աշխատանքներու գործնական եւ ճիշդ կերպով կատարման համար (Հ.Մ.Ը.Մ.Ի հաղորդակցութեան եւ հանրային կապերու ուղեգիծ, 2023-2027-ի քառամեակի քարոզչական ուղեւորութիւն, Հ.Մ.Ը.Մ.Ի վերջին Ընդհանուր Ժողովի քարոզչական մարզի բանաձեւեր, միութեանական տօնացոյց եւ այլն): Գոյրը այս առիթով նաեւ յայտարարեց ստեղծումը ցանցային երկու հարթակի, մէկ կողմէ իրարու կապելու համար միութեան բոլոր շրջաններու քարոզչական պատասխանատուները, իսկ միւս կողմէ լեզուական օժանդակութիւն տրամադրելու համար հայերէնով գրառումներ կատարելու դժուարութիւն ունեցող շրջաններուն:

ՓԱԿՈՒՄԸ

Աւցանց համագումարի աշխատանքներու աւարտին, խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ատենադրպիր եւ քարոզչական յանձնախումբին մօտ Կեդրոնական Վարչութեան կապ եղբ. Վիգէն Աւագեան: Եղբայր շնորհաւորեց կազմակերպիչ յանձնախումբը իր ժրջան աշխատանքին եւ համագումարին յաջողութեան համար եւ ըսաւ, որ միութիւնը այս համագումարով հի-

մերը կը դնէ քարոզչական իր համակարգի ստեղծման՝ բրգաձեւ կառուցով մը, որ կ'երկարի կեդրոնական քարոզչական յանձնախումբէն մինչեւ Շրջանային, Մեկուսի շրջաններու եւ ապա՝ մասնաճիւղերու քարոզչական յանձնախումբեր, բոլորը աշխատանքի նոյն ուղղութեամբ, մէկ միութեան պատկանելու եւ մէկ նպատակի ծառայելու գիտակցութեամբ եւ յանձնառութեամբ:

Իր խօսքին մէջ, եղբ. Աւագեան անդամ եւս շեշտեց համագումարի մասնակիցներուն Հ.Մ.Ը.Մ.Ի «կամաւոր բանակին քարոզչական վաշտը» ըլլալու իրողութիւնը եւ ըսաւ, որ այս «վաշտը» իր կարեւոր մասնակցութիւնը ունի միութեան 26 ճակատի՝ 26 երկրի մէջ մղած մեծ պատերազմին, անմիջական ու արդիական միջոցներով հայր հայ պահելու աշխատանքին, մեր ժողովուրդին եւ հայերնիքին համար առողջ եւ հաւատաւոր երիտասարդութիւն կերտելու աշխատանքին մէջ:

Հուսկ, սեմինարը փակուեցաւ վեց ամիս ետք, շրջաններու քարոզչական պատասխանատուներու առաջին աւցանց ժողովը կատարելու եւ ծրագրուած աշխատանքները հետապնդելու խոստումով:

«HRASHQ HEROES. A Special Place to Grow» ՕԳՏԱԿԱՐ ԵՒ ԵԶԱԿԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ



Նոյեմբեր 2024-ին, Լաս Վեկասի մէջ լոյս տեսաւ պատանի Րաֆֆի Պօղոսեանի «HRASHQ HEROES. A Special Place to Grow» անգլերէն պատկերազարդ գրքոյկը՝ նուիրուած յատուկ խնամքի կարօտ, Հ.Մ.Շ.Մ.ի «Հրաշք» բաժանմունքի երեխաներուն:

Րաֆֆի Պօղոսեան երկրորդականի աշակերտ է Լոս Անձելըսի մէջ: Ան «Հրաշք» բաժանմունքի կամաւոր մարզիչներէն մէկն է եւ այս գրքոյկով իր փորձառութիւնը կը ներկայացնէ երեք երեխաներու՝ Սէմի, Ուիլիըմի եւ Նոյայի հետ իր գործակցութեան:

This book is dedicated to everyone who feels they don't measure up to others; we're all important in our own ways!

Իբրեւ մարզիչ, Րաֆֆի անոնց կ'աջակցի պատրաստուելու եւ աբլեթիզմի խաղերու ընթացքին, կ'ուրախացնէ զանոնք եւ կ'ուրախանայ անոնցմով: Ան կը հաստատէ, որ ամէն մէկս իւրայատուկ է իր ձեւով. մեծնալու եւ մարտահրաւերներ դիմագրաւելու համար բոլորս օժանդակութեան եւ առաջնորդութեան կարիքը ունինք: Հետեւաբար, ան կ'եզրակացնէ, թէ կարելոր է ունենալ ընկերութիւն մը, որ կ'աջակցի մեզի եւ կը տօնէ մեր յաղթանակները, երբ կը յաղ-

թահարենք մեր դիմաց ցցուած մարհահրաւերները:

Գրքոյկը հրատարակուած է անձնական նախաձեռնութեամբ եւ վաճառքին ամբողջ հասոյթը պիտի տրամադրուի Հ.Մ.Շ.Մ.ի «Հրաշք» բաժանմունքին: Գրքոյկէն օրինակներ կարելի է ապահովել «Amazon.com»-ի կայքէջէն:





We all get to practice our skills and learn new ones together.

13



Sam was the first autism spectrum disorder athlete I ever worked with and it all started in the basketball court.

14



In our first big game, even though Sam was playing really well, he got distracted and hurt his ankle while running.

15



Surprised by the pain of his injury, the medical community of the coaches and support staff rushing to help him re-evaluated and saved him.

16



He didn't come to practice for weeks and I felt guilt and shame for having let him down. I learned to be more careful of my athletes and support them more closely.




Sam eventually came back, and we both gave our best from then on. He went on to continue playing basketball until he graduated from high school.

17



William, the curious little athlete, had a physical condition that caused him to use a wheelchair. Even though he couldn't run like the other kids, William still wanted to learn to play soccer.

18



Through practice and encouragement, he learned how to dribble the ball with the help of his chair.

19



With the skills he developed, he was able to participate in the group games with the other athletes and even scored goals.



Noah also had autism spectrum disorder and wanted to compete in his middle school's track and field competition against his neurotypical peers.

22



Despite his physical condition, Noah did his best at the shot put, the long jump, and the 100-meter dash. And went on to come in third place!

23



We are all unique in our own ways. We all need help and guidance to grow through our challenges.

24



It's important to have a community that supports us when we need it, and celebrates our victories when we overcome our challenges!



HRASHQ HEROES A Special Place to Grow

Raffi Boghossian

"Hrashq" means "miracle" in Armenian. It's not just a word to describe the organization and its athletes, but also a way to describe the hope and inspiration the special needs community brings to our world.



Homenetmen Hrashq is a Division of Homenetmen Armenia established in 2008 during the 100th anniversary of Homenetmen for special needs athletes. It is a non-profit organization.

1

My name is Raffi, and I am a coach at Homenetmen Hrashq, an organization that creates a safe space for our Armenian special needs community to practice and develop social and physical skills. I was inspired to write this book because I have learned that we are often our own biggest barriers, and a little help from a caring community can make all the difference. My hope with this book is that people of all ages will feel empowered to pursue their own goals and help those around them along the way, no matter our backgrounds or abilities.

«HRASHQ HEROES. A Special Place to Grow»



ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ

Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 106-ԱՄԵԱԿԻ ՇՔԵՂ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ՝ ՀԱԼԷՊԻ ՄԷՉ

Թղթակից ՀԱԼԷՊ

Հովանավորությամբ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Մակար Արք. Ազգարեանի, նախագահությամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Խաչերեանի, կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան, Կիրակի, 3 Նոյեմբեր 2024-ի երեկոյեան ժամը 7-ին, «Գ. Եսայեան» սրահին մէջ տեղի ունեցաւ Հայ Մարմ-

նակրթական Ընդհանուր Միութեան հիմնադրութեան 106-ամեակին նուիրուած տօնակատարութիւն:

ՆԵՐԿԱՆԵՐԸ

Տօնակատարութեան ներկայ էին Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Մակար Արք. Ազգարեան, Սուրբոյ Հայ Աւետարանական Համայնքի պետ Վերապատուելի դոկտ. Յարութիւն Սեւիմեան, Բերիոյ Թեմի Կաթողիկէ Հայոց Առաջնորդի ներկայացուցիչ Կոմիտաս Վրդ. Տատաղեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական

Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Խաչերեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան Սուրբոյ անդամ եղբ. Աւետիս Տէրվիչեան, պատկան մարմնի ներկայացուցիչը, Բերիոյ Հայոց Թեմի Ազգային Վարչութեան եւ Կրօնական Ժողովի անդամներ, ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ Սիրան Ամպարճեան, մշակութային, մարզական, բարեսիրական միութիւններու եւ կրթական հաստատութիւններու ներկայացուցիչներ եւ Հ.Մ.Ը.Մ.ական քոյրեր ու եղբայրներ:



ԲԱՅՈՒՄԸ

Տօնակատարութիւնը սկսաւ Սուրբ-իրոյ, Հայաստանի եւ Արցախի քայլերգներով, դաշնամուրի կատարողութեամբ Լիզէթ Սերայտարեան-Աւրնեանի:

Օրուան հանդիսավարներն էին Շըրշանային Վարչութեան ատենադպրուհի քոյր Անի Մինասեան եւ Շըջանային Սկաուտ- Խորհուրդի անդամ քոյր Վանենի Մինասեան-Պէպէճեան:

Հայերէն եւ արաբերէն լեզուներով բացման խօսք արտասանեց Շըջանային Վարչութեան անդամ եղբ. Աբիկ Խաչոյեան: Ան յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ.ը շնորհիւ իր հիմնադիրներու անձնագոհութեան, կամքին ու հաւատքին՝ անցնող տասնամեակներուն դաստիարակեց մարդկային ու ազգային վեհ գաղափարներով տոգորուած երիտասարդներ, որոնք կը շարունակեն իրենց վստահուած հայապահպանումի առաքելութիւնը:

Ապա ան նշեց, թէ միութիւնը այսօր կը դիմադրուէ բազմաթիւ մարտահրաւէրներ եւ կը պայքարի այլասերումի եւ օտարացումի վտանգներուն դէմ, սակայն շնորհիւ Հ.Մ.Ը.Մ.ականներու բարձր գիտակցութեան, հասակ կ'առնեն վեհ սկզբունքներով օժտուած նորահաս սերունդներ:


ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐԸ

Հանդիսականները հետեւեցան Հ.Մ.Ը.Մ.ի եւ Սուրբիրոյ հինգ մասնաճիւղերու հիմնադրութեան պատմութիւնը ներկայացնող տեսերիզի մը, որ պատրաստուած էր Սուրբիրոյ Շըջանային Վարչութեան անդամ քոյր Նայիրի Ազարիկեան-Առոյեանի կողմէ:



Գեղարուեստական յայտագիրով ներկայացուեցան փունջ մը ազգային երգեր, կատարողութեամբ Համազգայինի «Զուարթնոց» երգչախումբին, խմբավարութեամբ Գայիանէ Սիմոնեան-Տէրեանի:
Ապա, եղբ. Մկօ Ղազարեան (դաշնամուր) եւ քոյր Շողեր Տէր Յովհաննէսեան (Չուլթակ) ներկայացուցին Արա Գէորգեանի «Արցախ»ը: Ասմունքի պատրաստութեան հսկեց Արա Մուլթաֆեան:
Քոյրեր Արինա Պօշկէզէնեան, Աննա Պետրոսեան եւ եղբ. Համազասպ Շաքարեան ասմունքեցին Մուշեղ Իշխանի

մուր) եւ քոյր Շողեր Տէր Յովհաննէսեան (Չուլթակ) ներկայացուցին Արա Գէորգեանի «Արցախ»ը: Ասմունքի պատրաստութեան հսկեց Արա Մուլթաֆեան:
Քոյրեր Արինա Պօշկէզէնեան, Աննա Պետրոսեան եւ եղբ. Համազասպ Շաքարեան ասմունքեցին Մուշեղ Իշխանի





«Երգ շքերթի» եւ Ժագ Ս. Յակոբեանի «Յաղթերգութիւն» քերթուածները:

**ՕՐՈՒԱՆ
ԲԱՆԱԽՍՈՍՈՒԹԻՒՆԸ**

Տօնակատարութեան բանախօսն էր Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Խաչերեան, որ երախտագիտութեան իր գնահատանքը յայտնեց Սուրբիոյ արաբ ժողովուրդին եւ անոր ողջմիտ ղեկավարութեան, որոնց նախնիները եւ իրենց զաւակները գրկաբաց եւ սիրով, գորովագին ընդունեցին Հայոց Յեղասպանութենէն փրկուած անտուն, անօգնական, յուսաբեկ, որդեկորոյս, որբ, սովի ու ծարաւէ փրկուած մեր պապիկներն ու մամիկները, հայրերն ու մայրերը, որոնք այս երկրին մէջ, յատկապէս այս քաղաքին մէջ ապաստան ու պատսպարան գտան եւ տարիներու ընթացքին նախ շտկեցին իրենց ողնասիւնը, անգամ մը եւս բարձրացուցին իրենց ճակատը, վերակազմեցին իրենց տաքուկ բոյներն ու ընտանիք-

ները, կառուցեցին դպրոց, եկեղեցի, հաւաքավայր՝ պահելու համար Մեսրոպեան տառերով հայոց լեզուն, Գրիգոր Լուսաւորիչի շունչով աղօթքը, Հայկ Նահապետի եւ Արամ Մանուկեանի կորովով արձանագրուած հայոց պատմութիւնը:

Եղբ. Խաչերեան հաստատեց, որ 106 տարեկան Հ.Մ.Ը.Մ-ը, հակառակ բոլոր հալածանքներուն եւ խոչընդոտներուն, աննահանջ կերպով կը շարունակէ իր փառահեղ երթը, որուն իրագործման մէջ գլխաւոր դերակատարութիւն վերցուցած է Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբիոյ կառույցը, որ տասնամեակներ շարունակ իր կազմակերպական բծախնդրութեամբ, անսակարկ ծառայութեամբ, անշեղ սկզբբունքայնութեամբ ու գիտակից շարքերով մղիչ ոյժը հանդիսացած է միութեան երթին յաջող ընթացքին:

Կեդրոնական Վարչութեան ատենապետը Զարեհ Ա. Կաթողիկոսի Հ.Մ.Ը.Մ-ի մասին պատգամը մէջբերելով հաստատեց, որ Հ.Մ.Ը.Մ-ը հաւատարիմ

կը մնայ Վեհափառ Հայրապետին պատգամին, մասնաւորապէս՝ Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբիոյ շրջանը, որուն միջնաբերդը հիմնողներուն, պարիսպները քար առ քար բարձրացնողներուն եւ մինչեւ օրս զայն անառիկ պահողներուն անսակարկ ծառայութիւնը գնահատեց ան:

Եղբ. Խաչերեան յարգանքով յիշեց միութեան նահատակները, Սահակ Նալպանտեանէն մինչեւ Րաֆֆի Պշաքճեան, Շուշիի ինքնապաշտպանական մարտերուն նահատակուած հալէպահայ հերոսներ Յարութ Բանոյեանը, Յակոբ Ասթարճեանը եւ Մոսիկ Սեքլէմեանը, որոնց հոգիները կ'ապրին ապրողներու հոգիներուն մէջ, նշեց ան:

Հայրենիքի ներկայ իրավիճակին անդրադառնալով, եղբ. Խաչերեան յայտնեց, թէ իբրեւ ազգի ու հայրենիքի գերադաս արժէքները դաւանող Հ.Մ.Ը.Մ-ականներ, պիտի չհաշտուինք դաւաճանական պարտութեան հետ, կառչած պիտի մնանք մեր ազգային արմատներուն, պատուով պիտի շարունակենք մեր ազգանուէր եւ հայրենանուէր առաքելութիւնը, անհպելի պիտի պահենք մեր ազգային արժեհամակարգը՝ լեզուն, կրօնքը, մշակոյթը, ընտանիքը, պատմութիւնը եւ բարքերը, բուն կերպով պիտի պայքարինք կառույցներ կազմաքանդող համաշխարհայնացման ալիքներուն ու աղանդաւորական հոսանքներուն դէմ եւ պատրաստ պիտի ըլլանք երբ տայ զանգը, ահագանգը, շարժելու դէպի Արցախ, Տիգրանակերտ, Մուշ, Պայազիտ ու Վան, որպէսզի մեր հոգիին պարտքը տանք (խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 12):



ՍՈՒՐԻՈՅ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍԲԸ

Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբիոյ Շրջանային Վարչութեան խօսքը արտասանեց Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յարութ Օգճեան: Ան նախ անդրադարձաւ 106-ամեայ Հ.Մ.Ը.Մ-ի փառքին ու փայլուն յաղթանակներուն, ապա մատնանշեց մարմնամարզի կողքին միութեան ունեցած կարեւոր դերը՝ նոր սերունդին հայեցի դաստիարակութիւն ջամբելու աշխատանքին մէջ:

«ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ» ԵՔԱՆՇԱՆԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ

Այնուհետեւ, բեմ հրաւիրուեցան Առաջնորդ Սրբազանը, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Խաչերեանը, Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Աւետիս Տէրվիշեանն ու Սուրբիոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յարութ Օգճեանը՝ կատարելու «Ծառայութեան» շքանշանի տուչութիւն տարիներու ծա-



ռայութիւն ունեցող հետեւեալ Հ.Մ.Ը.Մ-ականներու.- Հայկազ Ասատուրեան, Պատրիկ Չրաքեան, Վիգէն Մարաշեան, Մարիա Սերայտարեան, Խոսրով Մանսուրեան, Սուրէն Մանսուրեան, Յարութ Ղազարեան, Զաքար Ղազարեան եւ Բաֆֆի Նազարեան (յետ մահու): Ապա, Շրջանային Վարչութեան անունով Առաջնորդ Սրբազան Հօր եւ Կեդրոնական Վարչութեան ատենապետին փոխանցուեցան յուշանուէրներ:

ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՍՐՏԻ ԽՕՍԲԸ

Հանդիսութեան աւարտին, իր սրտի խօսքը արտասանեց Առաջնորդ Սրբազան Հայրը: Ան դիտել տուաւ, որ ամեակները ուրախութեան առիթ ըլլալու կողքին նաեւ իսթան հանդիսացող ազդակներ են, որոնք կու գան իւրաքանչիւրը ինքնաքննութեան ենթարկելու, նախնիներու հանդէպ երախտագիտութիւն ցուցաբերելու եւ արժեւորելու այն աշխատանքը, զոր տարիներու ընթաց-

քին կատարուած է միութեան ջանքերով բռնած եւ զայն յաջորդող սերունդին փոխանցելու պատրաստակամութեամբ:

Սրբազան Հայրը նշեց, թէ Հ.Մ.Ը.Մ-ի «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանը, որ կ'արձագանգէ դարէ մը աւելի, կ'արտայայտէ անձնդիր ծառայութիւնը անոր անդամներուն՝ սրբազան առաքելութիւն ունենալով հայակերտումի, ազգակերտումի, սերունդներ պատրաստելու եւ զանոնք առաջնորդելու ազգին, ժողովուրդին եւ հայրենիքին հանդէպ հաւատարմութեամբ գործելու:

Սրբազան Հայրը գնահատեց Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութիւնը, հանդիսութիւնը կազմակերպողները, Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքը եւ Հ.Մ.Ը.Մ-ա կանգաւակները եւ մաղթեց, որ շարունակեն միութեան երթը՝ պայծառացնելով հայ ժողովուրդին կեանքը:

Հանդիսութիւնը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:





Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԻՄՆԱԳԻՐՈՒԹԵԱՆ 106-ԱՄԵԱԿԻՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՕՆ ԵՒ ԾԱՂԿԵՄԱՏՈՅՑ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ՆԵՁԵՑԵԱԼՆԵՐՈՒ ԵՒ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Հովանաւորութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Մակար Արք. Աշգարեանի, կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան, Հ.Մ.Ը.Մ.ի 106-ամեակին առիթով, միութեան հին ու նոր ննջեցեալներու եւ նահատակներու յիշատակին հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ Կիրակի, 3 Նոյեմբեր 2024-ի առաւօտուն, Հարլայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ:

Արարողութեան ներկայ գտնուեցան

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Խաչերեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան Սուրբոյ անդամ եղբ. Աւետիա Տէրվիշեան, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յարութ Օգճեան եւ Շրջանային Վարչութեան անդամներ, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային Սկաուտ. Խորհուրդն ու Խմբապետութիւնը, Հ.Մ.Ը.Մ.ականներ եւ տարագաւոր սկաուտներ:

Սուրբ եւ Անմահ Պատարագը մատուցեց Արմէն Աբղ. Գալաճեան: Առաջ-

նորդ Սրբազան Հայրը օրուան պատգամը ուղղեց ժողովուրդին: Ան յիշեց Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքի շարքերէն ներս ծառայած եւ զոհողութեամբ գործած ննջեցեալները եւ սուրբահայ նահատակները, որոնք աստուածային լոյսը ունենալով իրենց մէջ, իրենց հանգիստէն հեռու՝ ուրիշին հանգիստը փնտռեցին, հայրենիքի նուիրագործուած հողի պաշտպանութիւնը իրենց կեանքէն աւել-





լի գերադասեցին եւ սիրալից կերպով իրենց կեանքը զոհեցին մեր հայրենիքին եւ ժողովուրդին բարիքին համար:

Առաջնորդ Սրբազանը հայցեց, որ Ամենակալը իր անսահման ողորմութեան եւ հայրական գիրկին մէջ ընդունի բոլոր ննջեցեալները եւ նահատակները, լոյս խորաններու մէջ հանգչեցնէ անոնց հոգիները եւ մեզի քաջութիւն տայ, որպէսզի ընթանանք իրենց ճանապարհէն:

Պատարագէն ետք, Սրբազան Հօր նախագահութեամբ հոգեհանգստան պաշտօն կատարուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի հին ու նոր ննջեցեալներուն եւ Հ.Մ.Ը.Մ-ական նահատակներու հոգիներու խաղաղութեան համար:

Հոգեհանգստեան պաշտօնէն ետք, Հ.Մ.Ը.Մ-ի Հալէպի մասնաճիւղի շեփո-

րախումբին եւ տարագաւոր սկաուտներու առաջնորդութեամբ, ներկաները ուղղուեցան Ազգ. գերեզմանատուն, ուր հալէպահայ նահատակներու յուշակոթողին, ապա նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի դամբարանին դիմաց համախմբուելով ծաղկեմատոյց եւ մոմավառութիւն կատարեցին եւ աղօթք բարձրացուցին առ Աստուած: Շրջանային Վարչութեան խօսքը արտասանեց եղբ. Յովիկ Սիւլահեան, ապա Հալէպի մասնաճիւղի շեփորախումբը նուագեց Հ.Մ.Ը.Մ-ի «Յառաջ նահատակ» քայլերգը:

Յաւերժ փառք Հ.Մ.Ը.Մ-ի նահատակներուն եւ բիւր յարգանք անոնց վաստակին:





ԱՐՀԵՍՏԱՎԱՐԺՈՒԹԻՒՆԸ ԳԱԳՐԵՑՆԵԼՈՒ Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱԼԷՊԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Ստորել կը ներկայացնենք արհեստավարժութեան դրուսթիւնը դադրեցնելու Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի (տեղական անունով «Եարմուք» մարզական ակումբի) վարչութեան նամակը երկրի մարզական բարձրագոյն հեղինակութեան՝ մարզական ընդհանուր ֆետերասիոնին, 2024-2025 տարեշրջանին արհեստավարժութեան դադրեցման որոշումով:

10.10.2024

Նախագահ մարզական ընդհանուր ֆետերասիոններու,
Գործադիր մարմին Հալէպի մարզական ընդհանուր ֆետերասիոնի,

Յարգելիներ,
Հալէպի «Եարմուք» մարզական ակումբի վարչութիւնը իր կատարեալ յանձնառութիւնը կը յայտնէ Սուրիոյ մարզական կեանքին յառաջդիմութեան եւ անոր մէջ արհեստավարժութեան ունեցած դերակատարութեան: Նաեւ իր ամբողջական զօրակցութիւնը կը յայտնէ պասքէթպոլի զարգացման գծով Սուրիոյ մարզական ընդհանուր ֆետերասիոնի նախագահի մտածումին եւ ծրագրումին: Բայց եւ այնպէս, եւ ցաւ ի սիրտ, նկատի ունենալով այն դժուար պայմանները, զորս կը դիմագրաւենք, իբրեւ հաստատութիւններ եւ անձեր, յատկապէս տնտեսական իմաստով, կը պարտաւորուինք վերատեսութեան ենթարկել մարզական մեր ուղղութիւնները եւ արժեւորել մեր ապրած ծանր վիճակը, որովհետեւ մեր ազգային պատասխանատուութիւնը կը պահանջէ պահպանել մեր աղբիւրները, օգտագործել զանոնք լաւագոյն ձեւով եւ օժանդակել ակումբի անդամներուն:

Արդ, նկատել կու տանք, որ յարմար չէ եւ օգտակար չէ այս տարեշրջանին մեծ գումարներ ծախսել արհեստավարժ

օտար մարզիկներու համար, նկատի ունենալով նաեւ անոնց հետ համաձայնութիւններ կնքելու դժուարութիւնները՝ տրուած ըլլալով որ նիւթական եւ բարոյական մեծ արգելքներ կան այդ բոլորը կատարելու համար: Հետեւաբար, կը խնդրենք ձեզմէ ջնջել օտար արհեստավարժ մարզիկներու մասնակցութիւնը պասքէթպոլի տղոց եւ աղջկանց 2024-2024 տարեշրջանի ախոյեսնութիւններուն եւ ապաւինել միայն տեղացի մարզիկներու:

Նաեւ կը խնդրենք ձեզմէ, որ դիմէք արհեստավարժութեան կեդրոնական յանձնախումբին՝ բարեփոխելու համար արհեստավարժ մարզիկներու վերաբերող որոշումը՝ ակումբներու միջեւ հաւասար առիթներ ստեղծելու համար:

Շնորհակալութեամբ՝
«Եարմուք» Մարզական Ակումբի
Նախագահ
Տոքթ. Արամ Աւետիսեան

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ՝ ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Շաբաթ, 2
Նոյեմբեր
2024-ին,
Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Խաչերեան, Հալէպ կատարած իր այցելութեան ծիրէն ներս, այցելեց Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդարան, ուր ջերմօրէն ընդունուեցաւ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Մակար Արք. Աշգարեանի կողմէ:



Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետին ընկերակցեցան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան Սուրիոյ անդամ եղբ. Աւետիս Տէրվիչեան, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յարութ Օգճեան, Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամներ եւ Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Արամ Աւետիսեան:



Այցելութեան ընթացքին անդրադարձ կատարուեցաւ գաղութին մէջ Հ.Մ.Ը.Մ.ի աշխոյժ գործունէութեան եւ դիմագրաւած մարտահրաւէրներուն: Հ.Մ.Ը.Մ.ի 106-ամեակին առիթով Առաջնորդը շնորհաւորեց ներկայները եւ նորանոր վերելքներ մաղթեց պանծալի միութեան:



ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՀԵՍՏԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ ԴԱԴՐԵՑՄԱՆ

Յետ-պատերազմեան լիբանանեան մարզական կեանքը ապրեցաւ շատ մը նորութիւններ. արհեստավարժութեան դրուժեան որդեգրումը, մեծաթիւ օտար մարզիկներով ծախսալից խումբերու կազմութիւնը լիբանանեան ակումբներն ու միութիւնները դրին նոր իրականութիւններու դէմ յանդիման:

Իբրեւ լիբանանեան մարզական կեանքի ստեղծման ու զարգացման մասնակից միութիւն, Հ.Մ.Ը.Մ. եւս 1990-ա-

կան տարիներու կէսերէն քայլ պահեց իրեն պարտադրուած կացութեան հետ եւ, հակառակ միութեան յաջորդական Պատգամաւորական Ընդհանուր Ժողովներու որոշումներուն, տեղական պայմաններու ընդառաջ, շարունակեց արհեստավարժ դրուժեան որդեգրումը՝ յաճախ ի հաշիւ միութեան սկզբունքներուն եւ ի վնաս՝ կամաւոր աշխատանքի անոր գործելակերպին:

Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական 13-րդ Ընդհանուր Ժողովը (Հայաստան,

2023) դարձեալ անդրադարձաւ այս հարցին եւ ժողովէն ընտրուած Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը իր առաջին լիազուգումարին որոշեց անպայման վերջ տալ արհեստավարժութեան կիրարկման եւ վերադառնալ սիրողական մարզախաղերու դրուժեան, միաժամանակ զարկ տալով մարզական դպրոցներու (աքադեմիաներու) գործունէութեան:

Առ այդ, անսալով Կեդրոնական Վարչութեան որոշումին ու պահանջին, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Ծրջանային Վարչութիւնը պաշտօնապէս կը յայտարարէ, որ մարզական 2024-2025 տարեշրջանը պիտի ըլլայ արհեստավարժ դրուժեամբ աշխատանքի իր վերջին տարեշրջանը: Այս նպատակով, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը յառաջացուցած է արհեստավարժութեան դադրեցման յանձնախումբ մը, որ պիտի տնօրինէ Լիբանանի մէջ արհեստավարժութիւն կիրարկող Հ.Մ.Ը.Մ.ական խումբերու մարզական վերջին տարեշրջանի նիւթական, քարոզչական, յարաբերական եւ կազմակերպչական բոլոր որոշումները: Յանձնախումբին անդամներու շարքին են Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Ծրջանային Վարչութեան, Հ.Մ.Ը.Մ.ի Անթիլիասի եւ Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի վարչութիւններու ատենապետները:

Գիտենք, որ որոշումին գործադրութիւնը կրնայ բախիլ որոշ դժուարութիւններու, սակայն հակառակ ընթացքին շարունակութիւնը, իր կարգին, Հ.Մ.Ը.Մ.ի համար կը ստեղծէ նիւթական, վարչական եւ կազմակերպչական այնպիսի հարցեր ղեկավարութիւններ, որոնց վերջնական լուծումը բոլորէս կը պահանջէ արմատական ու ոչ-ժողովրդային քայլեր:

Հ.Մ.Ը.Մ. մարզական իր կեանքը պիտի շարունակէ մասնաճիւղային խումբերով, կրտսերներու տարիքային կազմերով, ԼԵՎԱՄ-ի եւ մարզական իր դըպ-



Հ.Մ.Ը.Մ.Ի 106-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԵՌՕՐԵԱՅ ՅՈՒՑԱՀԱՆԴԵՍ ՀԱԼԷՊԻ ՄԷՉ

Հովանաւորութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Մակար Արք. Աշգարեանի, նախագահութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Խաչերեանի, Շաբաթ, 2 Նոյեմբեր 2024-ի երեկոյեան ժամը 7-ին, Հ.Մ.Ը.Մ.ի պարտէզի սրահին մէջ պաշտօնական բացումը կատարուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Ծրջանային Վարչութեան եւ Սուրբոյ Ծրջանային Սկաուտ-Խորհուրդին կազմակերպած ցուցահանդէսին՝ ձեռամբ Առաջնորդ Սրբազան Հօր եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետին:

Ցուցահանդէսը շարունակուեցաւ երեք օրուան տեւողութեամբ եւ երկարեցաւ մինչեւ Երեքշաբթի, 5 Նոյեմբեր 2024:





րոցներու գործունէութեամբ, ուր նորահաս սերունդը հասակ պիտի առնէ միութենական իրաւ արժէքներով եւ ազգային-գաղափարական հայեցի դաստիարակութեամբ:

Հ.Մ.Ը.Մ. թափ պիտի տայ միջ-մասնաճիւղային իր մրցաշարքներուն եւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու

մասնակցութեան, այն խոր համոզումով, որ Հ.Մ.Ը.Մ.ի նման միութիւններու համար մարզախաղերը միջոց են եւ ոչ՝ նպատակ: Այսօր, աւելի քան երբեք, գոյութիւն ունի առաջնահերթութիւններու հարց եւ հարկ է ճիշդ տեղին ու ժամանակին կողմնորոշուիլ՝ ի նպաստ մեր միութեան ապագային եւ ի սպաս

մեր նորահաս սերունդին, մնալուն ուղեցոյց ունենալով միութեան 106-ամեայ նշանաբանը՝ «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր»:

14 Օգոստոս 2024

Հ.Մ.Ը.Մ.ի ԼԻՐԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻՐԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՄԲԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԻՋ-ՄԱՍՆԱՃԻԻՂԱՅԻՆ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐԸ

Թղթակից ՊԵՅՐՈՒԹ

Կ իրակի, 24 Նոյեմբեր 2024-ին, «Աղբալեան-Հ.Մ.Ը.Մ.» մարզամշակութային համալիրին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Խմբապետութեան միջ-մասնաճիւղային խմբապետական սեմինարը:

Սեմինարը մեկնարկն էր 2024-2025 տարեշրջանին, որ միջ-մասնաճիւղային ռալիի տարի յայտարարուեցաւ:

Յատկանշական էր, որ հակառակ Լիբանանի պատերազմական պայմաններուն, 80-է աւելի խմբապետներ ներկայ գտնուեցան սեմինարին եւ իրենց ամբողջական պատրաստակամութիւնը յայտնեցին նախապատրաստելու, աւելիով կազմաւորուելու, Հ.Մ.Ը.Մ.ական սկաուտին ազգային եւ սկաուտական դիմագիծը վառ պահելու նպատակով:

Խմբապետները սեմինարին սորվեցան ինչպէս դեկավարել ճգնաժամային պայմաններու ժամանակ, ինչպէս տազնայներ յաղթահարել, միասնական աշխատանք կատարել, ռալի բանակումին կարեւորութիւնը գիտնալ, ինչպէս նա-



խապատրաստուիլ ռալի տարեշրջանի մը, ինչ ձեւերով պատրաստել սկաուտական ձեռագիրն աշխատանքները եւ ինչպէս կազմակերպել սկաուտական խարուկահանդէս մը:

Սեմինարին աւարտին խմբապետներուն մօտ արթնցաւ պատրաստակամութեան, խանդավառութեան եւ առողջ մրցակցութեան ոգին՝ յաջողութեամբ բոլորելու սկաուտական նոր սկսող, իւրապատուկ տարեշրջանը:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ՝ ՄԱՀԱՅԱԾ ԵՒ ՆԱՀԱՏԱԿՈՒԱԾ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան նախաձեռնութեամբ, միութեան նախապետներուն եւ ներքեցալներուն հոգիներուն համար հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ Կիրակի, 8 Դեկտեմբեր 2024-ին, Նորաշէնի Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ մէջ: Հոգեհանգստին նախագահեց Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Շահէ Արք. Փանոսեան:

Հոգեհանգստին ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան դիւանի անդամները, Շրջանային Վարչութիւնը, Շրջանային Սկաուտ. Խորհուրդը, Շրջանային խմբապետական կազմը, մասնաճիւղերու վարչութիւնները, մասնաճիւղերու Սկաուտական Խորհուրդները եւ մեծաթիւ Հ.Մ.Ը.Մ.ականներ:

Հոգեհանգստեան պաշտօնին յաջորդեց հոգեսուրճ՝ Ազգային Առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան-Եռագոյն» սրահին մէջ: Այս առիթով Հ.Մ.Ը.Մ.ի դերն ու առաքելութիւնը դրուատող խօսքով մը հանդէս եկաւ Առաջնորդ Շահէ Արք. Փանոսեան:

«ՄԱՐԶԻԿ»ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՄԿ-ի հիմնադրութեան 35-ամեակին առիթով
- Եղբ. Իշխան եւ քոյր Փաուլա Եղիայեաններ 200 \$



Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-Ը ՀԻՒՐԸՆԿԱԼԵՑ Հ.Ս. ՇԱՐԺՈՒՄԻ ԵՒՐՈՊԱՅԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԿՈՄԻՏԵԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

11 -13 հոկտեմբեր 2024-ին, Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի գործունեության աելի լաւ ծանօթանալու համար, Երեւան այցելեցին Համաշխարհային Սկաուտական Շարժումի Եւրոպայի տարածաշրջանի կոմիտէի անդամներ եւ խորհրդատուներ Պորիս Վոյնովիչ, Քրիս Մետուրըզ, Էրիք Ուլթանկ Պըրըլանտ, Ռատու Սթինկ եւ Մերի Էլիզապէթ Նիւկենթ: Այցելութեան ընթացքին անոնք իրականացուցին բազմաթիւ ծրագիրներ:

Եւրոպայի տարածաշրջանի կոմիտէի ներկայացուցիչները հիւրընկալուեցան Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի կեդրոնական գրասենեակը, հանդիպեցան Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի Կեդրոնական Վարչութեան անդամներուն եւ կատարեցին երկօրեայ սեմինար՝ ռազմավարական ծրագրաւորման եւ արդիւնաւէտ կառավարման միջոցով:

Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի սկաուտական խումբերու գործունեության ծանօթանալու նպատակով՝ Եւրոպայի տարածաշրջանի փոխ տնօրէն Ռատու Սթինկ այցելեց Արմաւիրի «Վարդան Բախշեան» մասնաճիւղի «Մաղաքեան» սկաուտական կեդրոն եւ ներկայ գտնուեցաւ Արմաւիրի սկաուտներու գործունեության:

Հ.Ս.Շարժումի Եւրոպայի տարածաշրջանի կոմիտէի անդամներուն այցելութիւնը զուգահիւսեցաւ Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի համաերեւանեան ծրագիրին, որ կատարուեցաւ 13 հոկտեմբերին, «Թունօ» այգիին մէջ, մասնակցութեամբ Երեւանի բոլոր մասնաճիւղերու գայլիկներուն եւ սկաուտներուն: Բացօթեայ այս գործունեության եւս ներկայ գտնուեցաւ Եւրոպայի տարածաշրջանի փոխ տնօրէն Ռատու Սթինկ:



ԳԱՅԼԻԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԻ ՄԻՕՐԵԱՅ ՍԵՄԻՆԱՐ

Թղթակից ԵՐԵՒԱՆ

12 Հոկտեմբեր 2024-ին, Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի Երեւանի կենտրոնական գրասենեակում տեղի ունեցաւ մեր կազմակերպութեան կրտսեր անդամների պատասխանատուների՝ գայլիկ պատասխանատուների միօրեայ սեմինարը:

Սեմինարի սկզբնական հատուածում մեր պատասխանատուները քննարկեցին, թէ ո՞վ է լաւ առաջնորդը եւ թէ ի՞նչ յատկանիշներ պէտք է ունենայ: Նրանք ստացան իրավիճակներ, որոնց համար պէտք է գտնէին լուծումներ՝ հիմնուելով իրենց փորձի վրայ:

- Սեմինարի առանցքային թեմաներից էին.-
- Գայլիկական գիտելիքները՝ վոհմակի օրէնք, 5 յօդուածներ, գայլիկական բարեւներ:
- Գայլիկական տարազը եւ պէճերը:
- Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի խմբապետական կառուցուածքը:
- Գայլիկական արարողութիւնները՝ խոստում, փոխադրում, Մեծ կանչ:



ԱՐՄԱԽԻՐԻ «ՄԱՂԱՔԵԱՆ» ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ՝ ԱՅՍՈՒՀԵՏ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԱԾ ԲԱԿՈՎ

Թղթակից ԱՐՄԱԽԻՐ

Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի Արմավիրի «Մաղաքեան» սկաուտական կենտրոնը 2021 թուականից իր հիւրընկալ դռներն է բացել արմավիրցի տասնեակ պատանիների առջև՝ շնորհիւ բարերար, մասնաճիւղի բարեկամ եղբայր Մաղաքեանի:

Եղբ. Էմիլի հովանաւորութեամբ աւարտին մօտեցան նաեւ «Մաղաքեան» սկաուտական կենտրոնի բակի բարեկարգման աշխատանքները՝ հրաշալի հնարաւորութիւն ընձեռելով իւրացրած գիտելիքը հենց կենտրոնի տարածքում գործնականում ամրապնդելու համար:

Հերթական ձեռքբերումը համատեղ տօնելու համար, կենտրոնում հիւրընկալուել էին Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի կենտրոնական Վարչութեան, Հ.Մ.Ը.Մ-ի Արցախի եւ Երեւանի վարչութեան անդամները, կենտրոնի բարերար Էմիլ Մաղաքեանն՝ իր ընտանիքով, ինչպէս նաեւ քոյր եւ եղբայր սկաուտներ՝ Երեւանի եւ Աբովեանի մասնաճիւղերից: Օրն իր ներկայու-

թեամբ պատուեց եղբայր Վարդան Բախշեանի մայրը՝ քոյր Այտան:

Կենտրոնի ամբողջական շահագործումն ազդարարուեց դրօշի պաշտօնական արարողութեամբ եւ հանդիսաւոր ընդունելութեամբ:





Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐՑԱԽԻ ԳԱՅԼԻԿՆԵՐՆ ՈՒ ՍԿԱՌՈՒՏՆԵՐԸ ԿԸ ԾԱՆՕԹԱՆԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՍԱՐԺԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՆ

Կիրակի, 13 Հոկտեմբեր 2024-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Արցախի սկաուտները այցելեցին 'Դիլիջան' Հայաստանի չքնաղ բնութեան ծանօթանալու եւ պատմական վայրեր բացայայտելու համար: Անոնք ծանօթացան Դիլիջանի պատմութեան, սորվեցան խառնուրդի տեսակներ պատրաստել, փորձեցին բնութեան օգնութեամբ շրջանին մէջ ճիշդ կողմնորոշուիլ:

Սկաուտները այցելեցին Հաղարծինի վանքը, ուր օրհնութիւն ստացան քահանայ հօրմէ:

Այցելութեան միացան սկաուտներու ծնողները: Անոնք եւս ծանօթացան սկաուտութեան պատմութեան եւ արշալի տեսակներու:



ԳԱՅԼԻԿՆԵՐՈՒ ԱՐՇԱԻԸ ԵՐԿՐԱԸ ՀԱՐԲ ԵՏՔ, ԿԻՐԱԿԻ, 27 ՀՈԿ-ՏԵՄԵՐԵՐ 2024-ԻՆ, ԳԱՅԼԻԿՆԵՐԸ ԻՐԵՆՅ

Կարգին այցելեցին Գառնիի հեթանոսական տաճար, Գեղարդի վանք եւ Չարենցի կամար: Այցելութեան նպատակն էր գայլիկներուն ծանօթացնել մեր պատմական վայրերուն ծագումնաբանութիւնը, նշանակութիւնը եւ ի հարկէ... պարզեւել խանդավառ օր:

Գեղարդի մէջ, գայլիկները մասնակցեցան Պատարագի եւ ստացան քահանային օրհնութիւնը:

Այցելութեան մասնակցեցան նաեւ գայլիկ-արծուիկներու ծնողները: Անոնք անգամ մը եւս համոզուեցան, որ իրենց երեխաները ապահով ձեռքերու մէջ են:



ԹԻՖԼԻՍԻ ՄԷՉ 17 ՆՈՐԱԳԻՐՆԵՐՈՒ ԽՈՍՏԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

21 Սեպտեմբեր 2024-ին, Թիֆլիսի Ս. Գեորգ Առաջնորդանիստ եկեղեցւոյ շրջափակին մէջ տեղի ունեցաւ 17 նորագիրներու խոստման արարողութիւն:

Հ.Մ.Ը.Մ.ի Թիֆլիսի մասնաճիւղը հարստացաւ Աստուծոյ, ազգին ու հայրենիքին ծառայելու պատրաստ՝ 17 նոր նորընծաներու փաղանգով:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՂՏԱՏԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ՀԻՄՆԱԳՐՈՒԹԵԱՆ 75-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ՝ ՇՐՋԱՆԱՅԻՆ 39-ՐԳ ՄԱՐՉԱՀԱՆԴԵՍԸ

Թղթակից ՊԱՂՏՍՍ

26 Սեպտեմբեր 2024-ին, Հ.Մ.Ը.Մ.Ի Պաղտատի մասնաճիւղը կազմակերպեց Շրջանային իր 39-րդ մարզահանդէսը, նուիրուած՝ մասնաճիւղի հիմնադրութեան 75-ամեակին:

Մարզահանդէսին իրենց մասնակցութիւնը բերին Իրաքի հայաբնակ բոլոր քաղաքներէն՝ Ջախտէյն, Էրպիլէյն, Աւզրուկէյն, Քերքուկէյն, Հաւրէզքէյն, Մուսուլէյն, Տհոքէյն եւ Պասարայէյն մօտ 95 մարզիկ-մարզիկուհիներ, առանց հաշուելու Պաղտատի մարզիկներն ու սկաուտները:

Մարզահանդէսի բացման հանդիսութեան ներկայ գտնուեցան պետական բարձրաստիճան անձնաւորութիւններ, քրիստոնեայ համայնքներու ատենապետ տոքթ. Ռամի Աղաճան, Իրաքի Ոլիմպիական Կոմիտէի ներկայացուցիչներ, Իրաքի Ազգային Կեդրոնական Վարչութեան անդամներ, քոյր միութիւններու ներկայացուցիչներ, մասնաճիւղի նախկին վարչութիւններու անդամներ, նախկին սկաուտ խմբապետներ եւ խմբապետուհիներ, ծնողներ, Հ.Մ.Ը.Մ.ականներ եւ հոծ թիւով ժողո-

վուրդ: Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչը վերջին պահուն չկարողացաւ ներկայ գտնուել՝ Լիբանանի այդ օրերու ծանօթ դէպքերուն պատճառով (Այս առիթով արտասանելիք իր խօսքը տեսնել էջ 18):

Մարզահանդէսին բացումը կատարուեցաւ Տէրունական աղօթքով՝ Գէորգ Ա. Քհնյ. Արչակեանի կողմէ: Ապա, ներկաները վայրկեան մը յոտնկայս լուծեամբ յարգեցին յիշատակը մեզմէ յաւատարմութեամբ Հ.Մ.Ը.Մ.ականներուն:

Բացման խօսքով հանդէս եկան մասնաճիւղի սկաուտական խմբապետուհի

քոյր Անիթա Իշխանեան-Թովմասեան արաբերէնով եւ վարչութեան փոխ ատենապետ եղբ. Յակոբ Սահակեան՝ հայերէնով: Յաջորդեց դրօշակի արարողութիւն: Իրաքի, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.Ի քայքայներուն հետ բարձրացան երեք դրօշները՝ յուզիչ պահ մը պարզեցրելով ներկաներուն:

Դրօշի կայմը կը ներկայացնէր Հ.Մ.Ը.Մ.Ի Պաղտատի հիմնադրութեան թրւականը՝ 1949, պատրաստուած ձեռագիրն աշխատանքով՝ փայտով եւ պարաննե-րով: Տեղի ունեցաւ հանդիսաւոր տողանցք. դաշտ մուտք գործեցին մարզա-





խաղերու մասնակից մարզիկներն ու մարզիկուհիները: Տողանցքը առաջնորդեց դրօշակակիրներու խումբը, որուն հետեւեցան Հ.Մ.Ը.Մ.ի Պաղտատի սկաուտական շարքերը եւ մարզական խումբերը՝ իրենց քաղաքներուն անունները կրող ցուցանակներով: Այստեղ մարզիկներ իրենց մարզական խոստումը կատարեցին երեք օրուան խաղերը մարզական բարձր ոգիով կատարելու համար:

Օրուան յայտագիրը եղաւ հարուստ: Մարզահանդէսին ջահը լուսաւորեց Հ.Մ.Ը.Մ.ի Պաղտատի եւ Իրաքի ազգային հաւաքականի թենիսի մարզիկ քոյր Շողեր Թովմասեան:

Այս տարի ջահավառութիւնը ունէր տարբեր բնոյթ: Ջահին լոյսը ստանալով Իրաքի ամէնէն հին ուխտատեղի Ս. Աստուածածին եկեղեցիէն, լոյսի օրհնութեան կարգ կատարուեցաւ Իրաքի Հայոց Թեմի Առաջնորդ Օշական Եպս-

կիւկիւլեանի կողմէ: Ապա, օրհնուած լոյսը փոխանցուեցաւ Պաղտատի մարզիկներուն եւ տարածուեցաւ՝ շրջելով մասնակից բոլոր շրջաններուն, այն նպատակով որ իրենց ստացած լոյսը անոնք կը վերադարձնեն՝ 75-ամեակի ջահը վառելու համար:

Յայտագիրին ընթացքին ցուցադրուեցան տեսանիւթեր՝ շնորհաւորական խօսքեր Հ.Մ.Ը.Մ.ի գանազան շրջաններու կողմէ, նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ. Պաղտատի մարզադաշտին նորոգութեան ընթացքը ներկայացնող: Հանդիսաւոր աստիճանատուութիւն տեղի ունեցաւ ութ խմբապետներու, որոնք նորոգեցին իրենց



խոստումը՝ ծառայելու Հ.Մ.Ը.Մ.ի Պաղտատի սկաուտական շարքերուն եւ պահպանելու ազգային իրենց նկարագիրը եւ հայկական օրհնեալ օճախը:

Յաջորդեց սկաուտական հոյակապ շքերթը՝ բաղկացած 15 սկաուտէ: Ի վերջոյ փակումը կատարուեցաւ մասնաճիւղի 75 տարիներու մարզիկներու եւ սկաուտներու պատմական նկարներու ցուցադրութեամբ: Նկարներուն ընկերակցեցաւ յատուկ երգ մը՝ նուիրուած մասնաճիւղի 75-ամեակին, գրուած եղբ. Սեւան Իշխանեանի կողմէ:

Յայտնենք, որ 75-ամեակի առիթով տեղի ունեցաւ նաեւ մասնաւոր եւ մտերմիկ ձեռնարկ մը՝ պարզեւատրելու համար Հ.Մ.Ը.Մ.ի Պաղտատի նախկին վարչութիւններու անդամներ, խմբապետներ եւ նուիրատուներ, մասնակցութեամբ պետական բարձրաստիճան հիւրերու, 75-ամեակի եւ տիկնանց յանձնախումբի անդամներու:





ՄԵՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՈՒՆԻ ՄԱՐԴԱԿԵՐՏՈՒՄԻ ԵՒ ՀԱՅԱԿԵՐՏՈՒՄԻ ՍՐԲԱԶԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ

(ԿԻՊՐՈՍԻ Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-Ի ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ՄԱՐԿԱՏ ՏԵՄԻՐՃԵԱՆԻ ԽՕՍՔԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ ՄԱՍՆԱՃԻՂԻ 90-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ)

Ստորև կը ներկայացնենք Կիպրոսի Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ի ատենապետ Եղբ. Սարիատ Տէմիրճեանի խօսքը, արտասանուած՝ մասնաճիւղի հիմնադրութեան 90-ամեակի հանդիսութեան, որ տեղի ունեցաւ Շաբաթ, 19 Յոկտեմբեր 2024-ին, Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ի մարզադաշտին վրայ, նախագահութեամբ Կիպրոսի թեմի Կաթողիկոսական Փոխանորդ Կոմիտաս Արք. Օհանեանի եւ հովանաւորութեամբ Կիպրոսի հայ համայնքի պետական ներկայացուցիչ՝ Երեսփոխան Վարդգէս Մահտեսեանի:

Հանդիսութեան ներկայ գտնուեցան Նիկոսիոյ համայնքապետը, Սթրովոլոսի քաղաքապետը, կիպրական կուսակցութիւններու պատասխանատուներ, երոխտրհրդարանականներ, ազգային, կուսակցական եւ թեմական մարմիններու ներկայացուցիչներ, քահանայ հայրեր, տնօրէններ եւ Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ի նախկին ու ներկայ վարչականներ եւ անդամներ:

Սփիւռքի իրականութեան մէջ գոյութիւն ունի մէկ բան, որ կրնայ ապահովել հայրենի ապրելու մեր գրաւակները: Այդ ալ մեր

կազմակերպուած կառոյցներու, կուսակցութիւններու, դպրոցներու, եկեղեցիներու, մշակութային եւ մարզական միութիւններու շարունակականութիւնն է:

Ամբողջ Կիպրոսի մէջ փոքրաթիւ են այն միութիւնները, որոնք անընդմէջ 90 տարիէ կը գործեն: Հպարտութեամբ կրնանք ըսել, որ անոնցմէ մէկը մեր միութիւնն է՝ Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ը (AYMA - Armenian Young Men's Association): Ժառանգած ենք հսկայ պատմութիւն, իսկ մեր միութեան հիմնադիրները իրենց ետին ձգած են յիշատակութեան արժանի գործեր:

Անժխտելի իրողութիւն է, որ Կիպրոսի մէջ հայ կեանքը բոլորովին տարբեր պիտի ըլլար առանց Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ին: Մեր նախնիները այս միութիւնը վերածեցին գաղութի բաբախող սիրտին եւ զայն դարձուցին հայապահպանման փարոս, աննախընթաց փառաւոր էջեր արձանագրելով գաղութի պատմութեան մէջ:

Իբրեւ Հ.Մ.Ը.Մ.-ի մեծ ընտանիքի ան-



բաժան մաս, մենք կը հաւատանք, որ շատ ընելիք ունինք մեր պատանիներն ու երիտասարդները համախմբելու, դաստիարակելու եւ ազգային նպատակներով առաջնորդելու համար:

Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ը կազմաւորուեցաւ եւ հասակ նետեց մեր գաղութէն ներս, վերածաղկեցաւ եւ իր առաջնահերթ պարտականութիւնը դարձուց ապագայ սերունդներ պատրաստելը: Նպատակ դրաւ սկստութեան եւ մարմնամարզի միջոցով համախմբել հայ պատանին եւ անոր տալ ազգային դիմագիծ, հայրենիքի հանդէպ սէր, պահանջատիրական ոգի, պատուախնդիր հայու նկա-



րագիր, մանաւանդ պատկանելիութիւն եւ մասնաւորաբար՝ արժանապատուութեան գիտակցութիւն:

Կիւրահայ գաղութը աշխարհի տարածքին գտնուող հայկական այն քիչ գաղութներէն է, ուր երիտասարդութիւնը իրարու հետ հայերէն կը խօսի, ժողովները հայերէն լեզուով կը կատարէ, իսկ ատենագրութիւնները հայերէն լեզուով կ'ընթերցէ:

Մեր միութիւնը ապրած է միջազգային եւ տեղական բազմաթիւ վերիվայրումներ՝ Հայոց Յեղասպանութենէն վերապրած սերունդ, երկրորդ համաշխարհային պատերազմ, Կիւրոսի ազատագրական պայքար, 1963-ի միջհամայնքային բախումներ, 1974-ի թրքական ներխուժում եւ զրաւում, սակայն հակառակ այս բոլորին, գոյատեւած ենք, աշխոյժ եւ լեցուն կեանքով ու եռանդով:

Այսօր երբ հաւաքուած ենք հոս, այս մարգարաշտին վրայ, մեր միութեան՝ Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ի 90-ամեակը տօնախմբելու, կրնանք հպարտօրէն յայտարարել, որ Յեղասպանութենէն վերապրած գաղթական երիտասարդներու կողմէ հիմնուած այս ծերունի, սակայն միշտ երիտասարդ միութիւնը, որ Կիւրոսի արեւելիկ վրայ տնտեսան մէջ 11 վայրեր փոխած է, մինչեւ իր սեփական շէնքը ունենալը,

- Հակառակ տագնապներու,
- Հակառակ գաղութատիրութեան դէմ ազատագրական պայքարի,
- Հակառակ նաեւ քաղաքացիական ընդհարումներու, 1974-ի թրքական ներխուժման եւ մեր կրկնակի գաղթականութեան,
- Դարձած է տունը Համազգայինի, ուր կիւրահայ երիտասարդ իրերայաջորդ սերունդներ տասնամեակներ շա-

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՈՂՉՈՅՆԻ ԽՕՍՔԸ՝ Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-Ի ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 90-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ քոյր Թալին Օրտողլեանի ստորեւ տրուած խօսքը, սկզբունքով, պիտի արտասանուէր Կիւրոսի Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ի հիմնադրութեան 90-ամեակին նուիրուած հանդիսութեան, 19 Հոկտեմբեր 2024-ին:

Օրին, Լիբանանի ծանօթ պայմաններուն բերումով, քոյր Օրտողլեան վերջին պահուն չկարողացաւ ներկայ գտնուիլ Նիկոսիա, սակայն խօսքը, իբրեւ վկայութիւն եւ մասնաճիւղին հանդէպ գնահատանքի արտայայտութիւն, կը փոխանցենք ամբողջութեամբ:

Ողջո՛յն Կիւրոսի Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ին, որուն հիմնադրութեան 90-ամեակն է այս տարի:

Ամեակներու նշումները ոգելորիչ են. անոնք ցուցանիչ են տոկոսունութեան, դիմադրականութեան եւ յարատեւութեան: Բոլորիս համար յստակ է, որ մասնաճիւղ մը կամ շրջան մը կարելի է դիւրութեամբ հիմնել, միեւնոյն ատեն սակայն բոլորս ալ լաւ գիտենք, որ այդ հիմնուածը պահելն ու պահպանելն է դժուարը եւ հետեւողական աշխատանք ու ծիգ պահանջողը:

90 տարիներ առաջ, Կիւրոսի մէջ Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ը հիմնելու որոշումը տրուած էր վստահաբար նպատակ ունենալով հայ մանուկն ու պատանին առողջ միջավայրի մէջ պահելը: Միջավայր մը, ուր հայ պատանին պիտի դաստիարակուէր «Առողջ միտք՝ առողջ մարմնի մէջ» սկզբունքին հիման վրայ, դառնալու համար գիտակից հայն ու կարգապահ քաղաքացին: 90 տարիներու ընթացքին, Կիւրոսի շրջանը հաստատ ու հաւատարիմ մնաց այդ կարգախօսին՝ պատրաստելով ազգային գիտակցութեամբ թրծուած աշխոյժ մարդիկներ եւ կարգապահ սկաուտներ:

Հ.Մ.Ը.Մ.ի որեւէ այլ շրջանի նման Կիւրոս եւս ունեցաւ բարգաւաճ տարիներ եւ երբեմն ալ դժուարութիւններ, որոնք սակայն իրերայաջորդ վարչութիւններու ծամբով հարթուեցան եւ շրջանը պահեցին կայուն ու հաստատ:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան համար հպարտալի առիթներ են կազմակերպութեան աշխարհասփիռ շրջաններուն եւ մասնաճիւղերուն հիմնադրութեան ամեակները նշելու հանդիսութիւնները: Կեդրոնական Վարչութիւնը կը շնորհաւորէ Կիւրոսի Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ի 90-ամեակը եւ կը մաղթէ, որ գալիք տարիները ըլլան բեղմնաւոր աշխատանքի եւ յաջողութեամբ զեղուն տարիներ՝ փայլուն ու պանծալի նոր էջեր արելոցնելով Հ.Մ.Ը.Մ.ի արելի քան 100 տարուան պատմութեան մատենանին մէջ:



րունակ դաստիարակուած են հայկական միջավայրի մէջ, մշակոյթով, պարով, երգով ու թատրոնով:

- Դարձած է տունը Հայ Օգնութեան Միութեան «Սօսէ» մասնաճիւղին, որ Արցախի ազատագրումէն ետք մարդասիրական եւ բարեսիրական իր անվերապահ աջակցութիւնը բերած է ու կը շարունակէ բերել գաղթականներու նոր ալիքին:

- Դարձած է տունը Հ.Յ.Դաշնակցութեան եւ իր կառույցին տակ գործող Հայ Դատի Յանձնախումբին եւ Հ.Յ.Դ. Կիպրոսի Երիտասարդական Միութեան, իր քաղաքական աշխատանքներու առաջնահերթութեան մէջ միշտ պահելով Արցախը, Հայաստանը եւ Հայ Դատի պայքարը:

- Մեր ակումբը դարձած է տունը սկստակական 77-րդ խումբին, մասնակցելով բանակումներու, թէ՛ տեղական, թէ՛ Կիպրոսէն դուրս եւ թէ՛ Հայաստան, եւ ուրախութեամբ կը հաստատենք, որ մեր շարժումը վերաշխուժացաւ 2014-ին, եւ այժմ կը վարէ բազմամակարդակ ծաւալուն գործունէութիւն:

- Դարձած է տունը մեր մարզական հին ու նոր պատմութեան, իբրեւ մարզական աշխոյժ ակումբ: Իր հիմնադրութեան առաջին օրերէն իսկ, մեր միութիւնը զարկ տուած է մարզական կեանքին՝ փինկ-փոնկի, ճատրակի, տարցի, հօքիի եւ պոլոնի մէջ արձանագրելով բազմաթիւ առաջնութիւններ: Յաջողութեամբ մասնակցած է Կիպրոսի Ֆուտբոլի Ֆետերասիոնի Ա. դասակարգի ախոյեանութեան, իր անհերքելի հետքը ձգելով իբրեւ առաջնակարգ մարզական ակումբ, մրցելով կղզիին հուշակալոր խումբերու դէմ,

ինչպիսին էին՝ ԱՖՕԷԼ-ը, Օմոնիան եւ ԱԷԼ-ը:

1974-ին, Թուրքիոյ Կիպրոս ներխուժումէն ետք, Ֆուտբոլի մեր խումբը մասնակցած է ամաթօր լիկի ախոյեանութեան: Պահելով իր աւանդութիւնը, վերջին երեք տարիներուն Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ կը մասնակցի Ֆուտբոլի ամաթօր լիկի խաղերուն, նոր խանդավառութիւն պարգեւելով հայ երիտասարդներուն եւ իրեն քաջալերողներուն:

Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ը այն տունն է, որուն յարկին տակ հասակ նետած են կիպրահայ համայնքի բազմաթիւ սերունդներ, որոնք այժմ ակնատեսը կը դառնան անդամակցութեանը իրենց զաւակներուն եւ թոռներուն, որոնք սկսած են յաճախել իրենց սիրելի ակումբը, զայն դարձնելով իրենց նախընտրած ժամադրավայրը: Հոս պարտք կը զգանք յիշելու եւ մեր երախտագիտութիւնը յայտնելու Կիպրոսի բարեխնամ կառավարութեան եւ Սթրովոլոսի հիւրընկալ քաղաքացիութեան, որոնք մեր միութեան նիւթական եւ բարոյական աջակցութիւն շնորհած են անցեալին, կը շնորհեն ներկայիս եւ կը խոստանան շնորհել մօտակայ եւ հեռակայ ապագային:

Ուրախութեամբ կը վկայենք, որ Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ը վերահաստատած է իր պատկանելիութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի համահայկական ընտանիքին, վերջին տարիներուն կազմակերպելով միջ-դիւանական խորհրդատուներ եւ երիտասարդական համագումար:

Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ը մասնակցած է համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումներու եւ մարզախաղերու: 2018-ին, հակառակ իր փոքրաթիւ պատուիրակութեան՝ միայն 3 մարզիկով նուաճելով 10 ոսկի մետալ:

Կը խոնարհինք մեր նախնիներու սուրբ աշխատանքին, անձնուէր բազմաթիւ կամաւոր վարչականներու եւ յանձնախումբերու մէջ աշխատող անդամներու եւ ինը տասնամեակի վրայ երկարող մեր միութեան գործունէութիւնը քաջալերող կիպրահայ քոյրերու եւ եղբայրներու առջեւ:

Սակայն այս բոլոր նուաճումները կրնան փոշիանալ, եթէ այսօրուան նոր սերունդը՝ երիտասարդութիւնը մեր գաղութի կարեւորագոյն երակներէն հեռու մնայ:



Այս ակումբէն պէտք է ծնունդ առնեն նոր Հ.Մ.Ը.Մ.ականներ, որոնք պիտի ըլլան այս գաղութին եւ հայ ազգին վաղուան դրօշակակիրները, որովհետեւ միասնական, հաւաքական եւ մանաւանդ շարունակական աշխատանքով կրնանք մեծ ծաւալի գործունէութիւն ծաւալել եւ հայկական կեանք ստեղծել ու պահպանել սփիւռքեան այս դաժան ու դժուար ժամանակներուն:

Պէտք է բոլորս, մանաւանդ երիտասարդութիւնը գիտակցի այս միութեան դերին եւ հայօրէն ապրելու կարեւորութեան, դառնալով ջահակիրները մեր գալիք նուաճումներուն:

Ներկայիս կը գտնուինք բազմաթիւ մարտահրաւէրներու դիմաց՝ նիւթական, մարդուժի, երիտասարդական, հայերէն լեզուի, կազմակերպական թէ՛ այլ: Այս բոլորը սակայն չեն կրնար խոչընդոտ հանդիսանալ մեր ապագայ ծրագիրներուն: Մարտահրաւէրներ միշտ պիտի ըլլան, բայց անոնք երբեք պատ պիտի չըլլան, պիտի չարգելակեն մեր միութեան յառաջընթացը:

Մեր պարտքն է պահպանել այս կեդրոնը, որ միայն ակումբ չէ, այլ՝ բառին բուն իմաստով հայկական տունն է, որ մեր նոր սերունդը կը պահպանէ ու կը պաշտպանէ յոռի եւ վնասակար երեւոյթներէ: Մեր միութիւնը ունի մարդակերտումի եւ հայակերտումի սրբազան առաքելութիւն եւ, իբրեւ այդպիսին, մեր բոլորին յոյսի ու լոյսի աղբիւրն է:

Մեր այսօրուան փափաքն է, աւելին՝ մեր պահանջն է, որ բոլորս, հոս հաւաքուած, վերանորոգենք մեր խոստումը մեր նախնիներուն դիմաց եւ միասնաբար ու աւելի հաստատ քայլերով յառաջանանք դէպի 100-ամեակ:



«Հ.Մ.Ը.Մ.Ի ՕՐ»ՈՒԱՆ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՍՏԱԿԱԻՈՐՆԵՐՈՒ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄ

Թղթակից ԼՈՍ ԱՆՃԵԼՍԸ

Ուրբաթ, 1 Նոյեմբեր 2024-ի երեկոյան ժամը 7.30-ին, Հ.Մ.Ը.Մ.Ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան կազմակերպած «Հ.Մ.Ը.Մ.Ի Օր»ուան 9-րդ տօնախմբութիւնը տեղի ունեցաւ «Phoenicia» ճաշարանին մէջ, շուրջ 230 հիւրերու մասնակցութեամբ:

ՆԵՐԿԱՆՆԵՐԸ

Զեւոնարկին ներկայ էին թեմի Առաջնորդ Գեղամ Արք. Խաչերեանի ներկայացուցիչ Մովսէս Քհնյ. Շաննազեան, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Վիգէն Աբէլեան եւ Մհեր Դաւիթեան, Հ.Մ.Ը.Մ.Ի Արեւմտեան

եան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան անդամներ, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Կեդրոնական Կոմիտէի անդամներ Լեւոն Պարոնեան, Տարօն Տէր Խաչատուրեան եւ Բաֆֆի Գուլումճեան, Ազգային Վարչութեան ներկայացուցիչ Ճորճ Զորպահեան, Ազգային Վարժարաններու Խնամակալ Մարմինի ներկայացուցիչներ, քոյր կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, Նաւասարդեան 47-րդ մարզախաղերու պատուոյ նախագահ դոկտ. եւ տիկ. Մայք եւ Եւելինա Սարեաններ, 2024-ի «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական» եղբ. Արամ Պէքարեան, Հ.Մ.Ը.Մ.Ի Նաւասարդեան մարզախաղերու անցեալի պատուոյ նախագահներ եւ «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ներ, մասնաճիւղերու վարչականներ, իմբապետ-իմբապե-



տուհիներ, հիւրեր եւ բազմաթիւ անդամներ:

ԲԱՅՈՒՄԸ

Տօնախմբութեան բացումը կատարեցաւ դրօշակակիրներու մուտքով, որուն յաջորդեցին Մ. Նահանգներու, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.Ի քայլերգներուն կատարումը՝ Կլեմտէյլի «Արարատ» մասնաճիւղէն քոյր Իվանա Գրիգորեանի կողմէ: Զեւոնարկին հանդիսավարութիւնը կատարեց Փասատինայի «Ազատամարտ» մասնաճիւղէն քոյր Մեղեղի Փոլատեան:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍԻԸ

Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Փիէր Մանուկեան փոխանցեց օրուան պատգամը՝ ողջունելով ներկա-





ները եւ շնորհաւորելով պարգեւատրուեալները: Ապա, ան յայտարարեց, որ Նաւասարդեան 47-րդ մարզախաղերու պատուոյ նախագահ դուիտ. եւ տիկ. Մայք եւ Եւելինա Սարեաններ, շարունակելով իրենց նիւթաբարոյական աջակցութիւնը, սիրալոյսով ստանձնած են ձեռնարկին հովանաւորութիւնը:

**Հ.Մ.Ը.Մ.Ի «ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ»
ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄՆԵՐ**

Յաջորդեց երեկոյին գլխաւոր բաժինը հանդիսացող Հ.Մ.Ը.Մ.Ի «Ծառայութեան» շքանշաններու յանձնումը, որ

նախապէս առաջարկուած էր մասնաճիւղերու վարչութիւններուն կողմէ: Շքանշանները եւ հաստատագիրները յանձնեցին Շրջանային վարչութեան համապատասխան մասնաճիւղերու կապը հանդիսացող

անդամները: Այսպէս, առ ի գնահատանք իրենց անսակարկ նուիրաբերումին, շրջանի Հ.Մ.Ը.Մ.Ի բարձրագոյն՝ «Ծառայութեան» շքանշանը ստացան 11 մասնաճիւղերու ծառայող հետեւեալ քոյր-եղբայրները:-

- Հ.Մ.Ը.Մ.Ի Լոս Անճելըսի մասնաճիւղէն եղբ. Ճերի Արմէն:
- Հ.Մ.Ը.Մ.Ի Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղէն քոյր Ժանէթ Տէմիրճեան-Լիսի:



- Հ.Մ.Ը.Մ-ի Ֆրեզնոյի «Սասուն» մասնաճիւղին եղբ. Եղբ. Արլէն Կորճեան:

- Հ.Մ.Ը.Մ-ի Փասատինայի «Ազատամարտ» մասնաճիւղին եղբ. Շահէ Գաբրիէլեան:

- Հ.Մ.Ը.Մ-ի Կլենտէյլի «Արարատ» մասնաճիւղին եղբ. Մոսիկ Գրիգորեան:

- Հ.Մ.Ը.Մ-ի Սան Ֆեռնանտո Հովիտի «Մասիս» մասնաճիւղին եղբ. Յարութ Խոտանեան:

- Հ.Մ.Ը.Մ-ի Ինլընտ Էմփայրի «Արազ» մասնաճիւղին քոյր Անգիլնէ Քէշիշեան:

- Հ.Մ.Ը.Մ-ի Սանթա Գլարա Հովիտի «Անի» մասնաճիւղին քոյր Քրիստին Արզուսեան-Սարգիսեան:

- Հ.Մ.Ը.Մ-ի Քրեսենթա Հովիտի «Շանթ» մասնաճիւղին եղբ. Արա Կարապետեան:

- Հ.Մ.Ը.Մ-ի Պըրպէնքի «Սիփան» մասնաճիւղին եղբ. Անդրանիկ Ղազարեան:

- Հ.Մ.Ը.Մ-ի Ուոլնաթ Քրիքի «Կարս» մասնաճիւղին քոյր Նիրվանա Պալեան:

ՏԵՍԵՐԻԶԻ ՅՈՒՅԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՅԼ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄՆԵՐ

Ընթրիքի դադարէն հաքցուցադրուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու 2024 տարեշրջանի իրագործումները ծանօթացնող տեսերիկ մը: Այնուհետեւ ներկայացուեցան անցնող տարեշրջանին մեզմէ յաւան քաժնուած Հ.Մ.Ը.Մ-ականներու նկարները՝ մեծ յուզում յառաջացնելով ներկաներուն մօտ:



ՃԱՆՉՆԱՆՔ

«ԱՐՏԱԿԱՐԳ» ԾՔԱՆՇԱՆԱԿԻՐ ԵՂԲ. ԱՐԻԿ ԳԷՈՐԳԵԱՆ



Հ.Մ.Ը.Մ-ի շարքերուն մէջ երկարամեայ վաստակ ունեցող եղբ. Արիկ Գէորգեան իր շրջապատին ծանօթ է իբրեւ նուիրեալ եւ համեստ անձնաւորութիւն, որ բազմաթիւ ծառայութիւններ մատուցած է ո՛չ միայն Հ.Մ.Ը.Մ-ին, այլեւ՝ Հ.Յ.Դ.ին, Հ.Ե.Դ.ին, ՀՕՄ-ին, Համագոյնին, Հայ Դատին, հայկական վարժարաններուն եւ քաղաքային իշխանութիւններուն: Ան երաժիշտ է եւ յօրինած է շարք մը երգեր, որոնցմէ յատկապէս յիշատակութեան արժանի է «Խարոյկի յուշեր» ալպոմը: Ան շարք մը երգչախումբերու խմբավար է եւ երաժշտութեան դասատու:

Եղբ. Արիկ Գէորգեանի ազգային գործունէութիւնը սկսած է Լոնտոնի մէջ, 1978-ին, երբ աշակերտական տարիներուն միացած է Հ.Մ.Ը.Մ-ին: 1982-ին ան տեղափոխուած է Մ. Նահանգներ, ուր ստանձնած է Փասատինայի «Ազատամարտ» մասնաճիւղին վերաշխուժացման պարտականութիւնը: Երկու տարի ետք ան անդամակցած է Կլենտէյլի «Արարատ» մասնաճիւղին, ուր եւս ստանձնած է պատասխանատու բազմաթիւ պաշտօններ՝ սկաուտական, երիտասարդական, մշակութային բաժանմունքներու եւ վարչական կազմերու մէջ, իբրեւ փոխ ատենապետ, հասարակութեան, հաղորդակցութեան եւ հանրային կապերու յանձնախումբի վարիչ, ռազմավարական ծրագրաւորումի յանձնախումբի անդամ եւ այլն: Եղբ. Արիկ մասնակցած է համա-Հ.Մ.Ը.Մ.ական Գ. բանակումին (1986), իբրեւ Շրջանային խմբապետ: Ան մասնակցած է նաեւ 1990-ի, 2014-ի եւ 2018-ի համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումներուն եւ յօրինած է քանի մը բանակումի քայլերգ: Ան եղած է Շրջանային Վարչութեան անդամ: Ծառայած է Նաւասարդեան մարզախաղերու կազմակերպման, դաստիարակչական եւ թանգարանի յանձնախումբերու մէջ:

Եղբ. Արիկ ազդեցիկ հրապարակախօս է, դաստիարակ, համայնքը աշխուժացնող, երիտասարդութեան ջատագով եւ կամաւոր ծառայող: Ան երկար տարիներ Հ.Ե.Դ-ի ճամբարներու ղեկավարն է: Այժմ երաժշտութիւն եւ երաժշտաբանութիւն կը դասաւանդէ Լոս Անճելըսի Հ.Բ.Ը.Մ-ի Մանուկեան-Տէմիրձեան վարժարանին մէջ: Միաժամանակ, աշակերտական գործունէութեան եւ արհեստավարժութեան բաժանմունքի վարիչն է:





Այնուհետև, Շրջանային Վարչութիւնը յատուկ յուշանուէրով պարգևատրեց Հ.Մ.Ը.Մ-ի վաստակաշատ պաշտօնեայ եղբ. Արամ Անանեանը, առ ի երախտագիտութիւն եւ բարձր գնահատանք՝ երկար տարիներու իր նուիրեալ ծառայութեան եւ օրինակելի աշխատանքին:

Շրջանային Վարչութիւնը նաեւ, առաջին անգամ ըլլալով, Հ.Մ.Ը.Մ-ի աջակցութեան յուշանուէրով պարգևատրեց միութեան հանդէպ լայն աջակցութիւն ցուցաբերած Ազգային Վարժարաններուն ինամակալ Մարմինը, որուն ատենապետ Սարգիս Ուրֆաբեան բեմ հրաւիրեցաւ ստանձնելու յուշանուէրը:

Ապա, Շրջանային Վարչութեան անդամ եւ «Հրաշք» բաժանմունքի ներկայացուցիչ քոյր Սալբի Փօլատեան ներկայացուց Հ.Մ.Ը.Մ-ի «Հրաշք» բաժանմունքի կամաւոր մարզիչ եղբ. Բաֆֆի Պօղոսեանի հեղինակած «Հ.Մ.Ը.Մ-ի հրաշք հերոսներ» գիրքը:

Հ.Մ.Ը.Մ-ի «ԱՐՏԱԿԱՐԳ» ԾՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄ «Հ.Մ.Ը.Մ-ի Օրը»ուան հանդիսաւոր պահուն, Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Վիգէն Աբէլեան եւ Մհեր Դաւիթեան, ընկերակցութեամբ

Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Փիէր Մանուկեանի, կատարեցին Հ.Մ.Ը.Մ-ի «Արտակարգ» պատուանշանի տուցութիւնը վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ-ական եղբ. Արիկ Գէորգեանին: Եղբայրը Հ.Մ.Ը.Մ-ի Կլենտէյլի «Արարատ» մասնաճիւղի նուիրեալ անդամներէն է եւ ստանձնած է պատասխանատու զանազան պաշտօններ՝ սկստակական, երիտասարդական, մշակութային, հանրային կապի ու վարչական մարզերէն ներս: Ան եղած է Շրջանային Վարչութեան անդամ եւ մաս կազմած է Շրջանային զանազան յանձնախումբերու: Ան բազմապիսի ծառայութիւններ մատուցած է զանազան միութիւններու, իր երաժշտական հմտութիւնը ի սպաս դրած է Հ.Մ.Ը.Մ-ին, յօրինած է երգեր, եղած է խմբավար, ուսուցիչ եւ արհեստավարժ մարզիչ:

Տօնախմբութեան ընթացքին, Լոս Անճելըսի Լա Քրեսենթա շրջանի խոր-



հուրդի անդամ եղբ. Հէրի Լիոն եղբ. Արիկ Գէորգեանին յանձնեց Լոս Անճելըսի շրջանի «Գնահատագիր»ը, իսկ քոյր Պալմա Թովմասեան՝ Քալիֆորնիոյ նահանգի Մերակոյտի հռչակագիրը, առ ի գնահատանք համայնքի գործերուն իր ունեցած ծառայութեան եւ քաղաքացիական բազմաթիւ ներդրումներուն համար:

Հ.Մ.Ը.Մ.ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՅՈՒՄԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿԱՐՅՈՒՄԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՅՈՒՄԻ
Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան խօսքը արտասանեց եղբ. Վիգէն Աբէլեան: Ան շնորհաւորանքի ու գնահատանքի խօսք ուղղեց մասնաճիւղերու պարգեւատրեալներուն եւ ձեռնարկի կազմակերպիչ Շրջանային Վարչութեան: Ան նաեւ իր գոհունակութիւնը

յայտնեց, որ կը գտնուի վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ականներու մէջ եւ յատուկ հպարտանքով արտայայտուեցաւ անոնց աշխատանքներուն մասին:
Ձեռնարկը վերջ գտաւ ուշ երեկոյեան՝ անգամ մը եւս Հ.Մ.Ը.Մ.ի անխախտ գոյութիւնը պահպանելու կամքը դրոշմելով մասնակիցներուն մօտ:

ՅՈՒՉԻՉ ԵՒ ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՓՈՐՉԱՌՈՒԹԻՒՆ ՄԸ Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԵՏ

Ստորեւ անգլերէնէ թարգմանաբար տրուած գրութիւնը (բնօրինակը տեսնել առանձին) կը պատկանի Լոս Անճելըսի Էսփերանգա հայ սքուլի աւարտական դասարանի աշակերտ, 18-ամեայ Բաֆֆի Աքմաքճեանին:
Երբ Բաֆֆին երբ երեք գրութիւն պահանջուած է համալսարան մուտքի ընդունման համար, ան ներկայացուցած է նաեւ այս մէկը, իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբին հետ իր ապրած հաճելի մէկ փորձառութիւն:
Գրութիւնը փորձառութենէ մը աւելին է սակայն, Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութիւնը ներկայացնելու փորձ մըն է ամերիկացիին, անգլիախօս երիտասարդի մը կողմէ:
Քաջալերանքի արժանի երեսոյթ:

հետաքրքրական ելոյթներէս մէկը:
Հ.Մ.Ը.Մ.ը իւրապատու դերակատարութիւն ունեցած է ընտանիքիս մէջ, որովհետեւ սերունդներու ընթացքին պայքարած ենք հայկական սովորութիւնները կենդանի պահելու համար: Մեր համայնքը իւրապատու մարտահրաւերի մը առջեւ կը գտնուի, որովհետեւ Հայաստանի մէջ կ'ապրին միայն երեք միլիոն հայեր, իսկ տասը միլիոն սփռուած է աշխարհի տարածքին: Հ.Մ.Ը.Մ.ի նման միութիւններ մեզի կ'օժան-

դակեն, որպէսզի պահպանենք ու նշենք մեր մշակոյթը եւ վառ պահենք մեր սովորութիւնները աւելի կրտսեր սերունդներուն համար: Իմ մասնակցութիւնս սկսաւ մանկութենէս՝ մարզանքով եւ սկաուտութեամբ: Մեծնալով, բարձրացաւ նաեւ դերակատարութիւնս միութեան մէջ, ստեղծելով աւելի ամուր կապ համայնքիս հետ: Հ.Մ.Ը.Մ.ի նշանախօսքը՝ «Բարձրացի՛ր-բարձրացուր»ը զիս կ'ոգեւորէ յաջողելու եւ ուրիշները բարձրացնելու համար:

Touchy and interesting experience with Homenetmen

I was completely soaked from bitterly cold rain that made my marching band uniform feel even heavier than usual. As a dedicated saxophonist in the volunteer band of Homenetmen, an Armenian-American cultural organization, I pushed on knowing how important this performance was to the community. I expected the streets to be dead considering the inclement conditions. To my surprise, people came out in droves with energy and excitement. As we played nostalgic Armenian songs, people cheered, danced and sang along. It turned out to be one of the most emotional and exciting performances as a high school musician. Homenetmen has played a pivotal role in my family as we have struggled to keep Armenian traditions alive over generations. Our community faces a unique challenge in that only three million Armenians in the diaspora reside in Armenia while ten million have immigrated globally. Organizations like Homenetmen support us in maintaining and celebrating our culture while keeping traditions alive in the younger generation. My involvement began in childhood with sports and scouting. As I have grown, so has my role within the organization resulting in a deeper connection with my community. Homenetmen's mission, "Rise and raise" motivates me to succeed and raise others.

RAFFI AKMAKJIAN



Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒԵԼԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ 34-ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Սկսո Խտորլարեան ՇԻՔԱԿՕ

ՀՄԸՄԻ Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջանային 34-րդ բանակումը տեղի ունեցաւ 7-11 Օգոստոս 2024-ին, հիւրընկալութեամբ ՀՄԸՄԻ Շիքակոյի մասնաճիւղին:

Արեւելեան շրջանի նահանգներէն վեց մասնաճիւղեր իրենց մասնակցութիւնը բերին 65 սկաուտներով:

Բանակումին յայտագիրը բաղկացած էր դաստիարակչական եւ մարզական այլազան ծրագիրներով:

Առաջին օրը սկաուտները կատարեցին ժայռի մագլցում (rock-climbing) եւ խմբային մարզախաղեր: Անոնք ներկայ գտնուեցան կարեւոր դասախօսութեան մը, որ կը ներկայացնէր ՀՅԴ-ի նախնական քրոյր կազմակերպութիւններու պատմութիւնը: Երեկոյեան, երէցներն ու պարմանուհիները հաճելի խարուկահանդէս մը կազմակերպած էին սկաուտներու համար:

Բանակումին երկրորդ օրը տրամադրուած էր աշտարակ շինելու: Բանակողները նախ վերլիչեցին հանգոյց

կապելու հիմնական ձեւերը, ապա աշտարակը ծրագրելու զանազան գաղափարները: Կէսօրէ ետք, ՀՅԴ-ի Արեւելեան Մ. Նահանգներու Կեդրոնական Կոմիտէի անդամ Մարալ Աբրահամեան դասախօսութիւն մը տուաւ ՀՅԴ-ի կազմակերպութեան մասին: Երկրորդ երեկոյեան խարուկահանդէս կազմակերպեցին արիները:

Երրորդ օրը սկաուտները ամբողջացուցին իրենց աշտարակը, որմէ ետք մասնակցեցան բանակավայրին շուրջ կազմակերպուած հետաքրքրական ռա-

լիի մը: Նախորդող երեկոներու նման օրը աւարտեցաւ խարուկահանդէսով, այս անգամ արեւոյշներու կողմէ կազմակերպուած:

Չորրորդ օրը սկսաւ ռալիի յաղթականներու յայտարարութեամբ, որմէ ետք ներկայացուցան հետաքրքրական կարգ մը դասախօսութիւններ: Կէսօրէ ետք, սկաուտները կազմեցին ապարանջաններ, իբրեւ յիշատակ այս բանակումին: Երեկոյեան տեղի ունեցաւ վերջին խարուկահանդէսը՝ մասնակցութեամբ բոլոր սկաուտներու, ներկայութեամբ





Շիրակոյի համայնքի անդամներու:

Շնորհակալութիւն Հ.Մ.Ը.Մ-ի Շիրակոյի մասնաճիւղին, որ կազմակերպեց 2024-ի Շրջանային բանակումը: Անհամբեր կը սպասենք 2026-ի Շրջանային բանակումը, որ տեղի պիտի ունենայ Պոսթընի մէջ:

ԲԱՆԱԿՈՂՆԵՐՈՒ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԵՂՐԻ ԱԿԻԼԵԱՆ (ՈՒԱՇԻՆԿԹԸՆ)

Իբրեւ Առաջնորդ, Շրջանային բանակումի փորձառութիւնը տարբեր էր Առաջնորդի տեսանկիւնէն: Ես շատ բան սորվեցայ իմ մասիս եւ թէ ի՞նչ կը նշա-



նակէ Առաջնորդ ըլլալ: Շատ հաճելի էր մօտէն ծանօթանալ քոյրերու եւ եղբայրներու, ժայռ մագլցիլ, երգեր երգել, կատակներ ընել, պարել, աշտարակ շինել եւ Հ.Յ.Դ-ի մասին դասախօսութիւններ լսել: Ամէնէն հաճելի պահերը անոնք էին, երբ արենոյճներուն հետ խարուկահանդէս պատրաստեցինք՝ հետաքրքրական կանչերով եւ զաւեշտներով: Մեր այս փորձառութիւնն ու բարեկամութիւնը պիտի մնայ առ յաւիտ եւ անհամբեր կը սպասենք մեր յաջորդ բանակումը:

ԳԱՐԻՆ ՄԱՐԳԱՐԵԱՆ (ՈՒԱՇԻՆԿԹԸՆ)

Այս իմ չորրորդ Շրջանային բանակումս էր ու երկրորդը՝ իբրեւ արենոյճ: Իսկապէս ուրախութիւն էր ինծի համար քոյր արենոյճներու հետ՝ կապերս զօրացը-

նելը: Քոյրերուս եւ եղբայրներուս հետ ռալիի մասնակցութեան փորձառութիւնս շատ հաճելի էր: Մեծ ուրախութիւն էր մասնակցիլ բոլոր ծրագիրներուն եւ յատկապէս առաջնութեան մրցանակին տիրանալ: Կանչերը, երգերն ու խարոյկին շուրջ հաւաքները անմոռանալի էին: Անհամբեր կը սպասեմ յաջորդ բանակումը:

ԹԻՖԸՆԻ ԱՐՈՒԵՍԵԱՆ (ՊՈՍԹԸՆ)

Բանակումին ամէնէն լաւ յիշատակս այն է, երբ արինները եւ արենոյճները երէցներուն հետ կանչեր կ'երգէին դրօշակի արարողութենէն առաջ: Շատ հաճելի էր այս տարուան բանակումը, որովհետեւ ուրախութեան եւ դժուարութիւններու ընթացքին բոլորս միասին էինք:





Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒԵԼԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԱԲՈՐԱԿԱՆ ԵՒ ԵՐԷՑ-ՊԱՐՄԱՆՈՒՀԻՆԵՐՈՒ ՍԵՄԻՆԱՐ

Յարութ Թաթարեան
ՊՈՍԹԸՆ

ՀՄԸՄ-ի Արեւելեան Մ. Նահանգներու շրջանի խմբապետներու եւ երէց-պարմանուհիներու 2024-ի սեմինարը տեղի ունեցաւ 6-8 Սեպտեմբերին, Պոսթընի մէջ, Մասաչուսեց: Այս կարեւոր սեմինարին մասնակցեցան 70-է աւելի խմբապետներ եւ Առաջնորդներ, որոնք առիթը ունեցան զարգացնելու առաջնորդութեան իրենց հմտութիւնները եւ խորացնելու ՀՄԸՄ-ի սկզբունքներուն ըմբռնումը: Սեմինարին օրակարգը ընդգրկեց դաստիարակչական դասախօսութիւններ, խմբային հետաքրքրական խաղեր եւ զրոյցներ՝ ՀՄԸՄ-ի ներկայ եւ անցեալի խմբապետներու հետ:

Սեմինարին ամէնէն ազդեցիկ բաժինը դաստիարակչական դասախօսութիւններն էին, որոնք նախատեսուած էին առաջնորդութեան հմտութիւնը զարգացնելու համար: Ներկայացումները ուսումնասիրեցին արդիւնաւէտ դեկավարման անհրաժեշտ միջոցները, սկսելով ծրագրումէն մինչեւ խումբի մը կառավարում: Ներկաները ստացան գործնական պատկերացումներ հաճելի եւ հետաքրքրական նիւթեր ներկայացնելու, որպէսզի կարենան գրաւել սկաուտներու ուշադրութիւնը: Անոնք կեդրոնացան յայտագիր պատրաստելու եւ իրենց դժուարութիւնները յաղթահարելու կարեւորութեան վրայ: Մանկավարժութեան մասին դասախօսութիւնները անոնց տուին գործնական գիտելիքներ զանազան տարիքի սկաուտներու հետ աշխատելու համար: Սեմինարին գլխաւոր նիւթերէն էր ինքզինք առաջնորդելու, ինքնզինքը քաջալերելու կարեւորութիւնը: Այս դասախօսութիւնները միայն տեսութիւններ չէին, այլ՝ առիթը ընծայեցին խմբապետներուն, որպէսզի գաղափարներ փոխանակելով իրարու հետ գրուցեն եւ իրարմէ սորվին:

Դասախօսութիւններու հետ միասին, սեմինարին ընթացքին տեղի ունեցան խմբային դաստիարակչական հաճելի աշխատանքներ՝ աշտարակ շինելու դասընթացքէն ետք սկաուտները շինութեան քննութիւն անցուցին: Անոնք բաժնուեցան խումբերու եւ պարսատիկ շինեցին: Այս միջոցին, խումբերու Առաջնորդները տեղափոխուեցան զանազան խումբեր: Աշխատանքը սկաուտներուն ցոյց տուաւ նոր միջավայրի մէջ ընտելանալու գործնական դժուարութիւնները:

Յաջորդ աշխատանքը աչքերը փակելով պարանի խաղն էր, երբ խումբի Առաջնորդները կ'առաջնորդէին իրենց խմբակիցները ուրուագիծ ստեղծելու: Իսկ հռչակաւոր «Mafia» խաղը կը ստուգէր մասնակցողներուն կարողութիւնը իրարու հետ կատարելապէս գրուցելու եւ իրարու վստահելու:



Այս տարուան սեմինարը կեդրոնացաւ սկաուտական արարողութիւններու վրայ: Շաբաթ մը առաջ, եղբ. Շանթ Մեհրանեան եւ քոյր Տաթեւիկ Խաչատրեան մասնակցած էին համա-ՀՄԸՄ-ական խմբապետական Թ. համագումարին, որ տեղի ունեցած էր Գահիրէի մէջ, Եգիպտոս: Անոնք վերադարձան սկաուտական աշխատանքներու գործադրութեան մասին արժէքաւոր նոր փորձառութիւններով, զորս փոխանցեցին Արեւելեան շրջանի Առաջնորդներուն: Այդ գիտելիքներուն կարեւոր նիւթերէն էին շարք կազմել, շարքի մէջ մտնել կամ ելլել, ինչպէս նաեւ Մեծ Կանչ կատարել գայլիկներուն եւ արծիկներուն համար: Վերջին օրուան ծրագիրը ընդգրկեց դասախօսութիւն եւ այցելութիւն Ս. Ստեփանոս եկեղեցի:

Սեմինարը աւարտեցաւ մեծ յաջողութեամբ: Ներկայ Առաջնորդները, նոր գիտելիքներ սորվելու կողքին, բազմապատկեցին իրենց եռանդը ՀՄԸՄ-ի առաքելութեան հանդէպ: Հետաքրքրական աշխատանքները զօրացուցին զանազան մասնաճիւղերէ եկած Առաջնորդներուն կապերը իրարու հետ եւ միասնական աշխատելու փափաքը: Անոնք վստահ են, որ իրենց ստացած գիտելիքները իրենց մասնաճիւղերուն փոխանցելով ՀՄԸՄ-ը պիտի զարգանայ տարուէ տարի:

Շնորհակալութեան խօսք քոյրեր Անի Պարսումեանին, Այտա Արսլանեանին, Լուի Պիլայեան-Վարդանեանին, եղբայրներ Արամ Գոյսերեանին, Սամուէլ Արմէնին եւ Ժիրօ Իսկէնտէրեանին՝ սեմինարին յաջողութեան իրենց ունեցած կարեւոր ներդրումին համար: Գնահատանքի խօսք ՀՄԸՄ-ի Պոսթընի մասնաճիւղին՝ սեմինարը հիւրընկալելու, իսկ Շրջանային Սկաուտ Խորհուրդին եւ Շրջանային Վարչութեան՝ սեմինարը կազմակերպելու համար:



HOMENETMEN FRANCE



FIRST ARMENIAN CULTURAL AND SPORTS CENTER IN EUROPE

COMING IN 2025 TO ISSY-LES-MOULINEUX



comite@centrehomenetmen.fr

www.centrehomenetmen.fr






MULTIPURPOSE SPORTS HALL

- Basketball
- Indoor Football
- Volleyball
- Handball
- Badminton
- Table-tennis

Events: Flexible multipurpose sports venue with capacity to cater for events upto 720 persons.

European Headquarters

At Issy-les-Moulineaux



The Armenian Association of Homenetmen France, founded in 1977 will see the coming to fruition in 2025, its project to create the first European Armenian Cultural and Sports Center. The Association has spent the last 40 years fundraising in pursuit of its dream with planning starting in the 90's.

Thanks to a partnership with the city of Issy-Les-Moulineux and the relentless dedication of the Mayor, Mr André Santini, this construction, which is exemplary in terms of its ecological and environmental planning, will host a large number of cultural and community activities for the Armenian youth in the region and beyond.

HOMENETMEN

Building our future



- Restoration
- Offices
- Meeting Rooms
- Classrooms

- Multipurpose Hall

Events
Concerts
Shows
Dance Hall
Conferences
Exhibitions



DONATIONS & SUPPORT



TAX REDUCTION SCHEME



Individual

- 66%



Company

- 60%



The creation of this unique centre in Europe represents a major step forward for the Armenian Community of France.

The challenge we need to overcome together in realisation of this dream is to secure the long term financing for the necessary equipment and the maintenance of our facilities.

- Donations by cheques: Payable to ASC Homenetmen France
- Regular direct debit contributions are also welcome

SUPPORTER MEMBER	DONER MEMBER	BENEFACTOR MEMBER	HONORARY MEMBER
50 €	150 €	500 €	1 000 €

- Details of conditions can be found on our website

FOR OUR YOUTH !



BASKETBALL



SCOUTING



FOOTBALL





Հ.Ա.Ը.Մ.Ի ՕԹԱՈՒԱՅԻ ՄԻԱՒՈՐԻ ՀԻՄՆԱԴԻՐՈՒԹԻՒՆ

Հ.Ա.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան նախաձեռնութեամբ, Կիրակի, 22 Սեպտեմբեր 2024-ին տեղի ունեցաւ Հ.Ա.Ը.Մ.ի Օթաւայի միաւորի հիմնադրութիւնը, ներկայութեամբ Հ.Ա.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ քոյր Լիոնի Սարմազեանի, Գանատայի Շրջանային Վարչութեան եւ յանձնախումբերու, շրջանի մասնաճիւղերու վարչութեան ներկայացուցիչներու:

Ներկայ էին նաեւ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Բարգէն Արք. Չարեան, Գանատայի Հայոց Թեմի Ազգային Վարչութեան ատենապետ Ծովիկ Թերզեան, Դաւիթ Քինյ. Մարգարեան, Հ.Յ.Դ Գանատայի Կեդրոնական Կոմիտէի, «Սարգիս Զէյթեան» եւ «Վահան Յովհաննէսեան» կոմիտէներու, ՀՕՄ-ի եւ Համազգայինի Շրջանային Վարչութիւններու ներկայացուցիչներ եւ Օթաւայի Հ.Ա.Ը.Մ.ականներ:



Հ.Ա.Ը.Մ.ի Գանատայի շրջանէն ներս: Միաւորին հիմնադրութեան նպատակն է շարունակել սերունդներուն փոխանցել հայեցի աւանդութիւններն ու արժէքները, միեւնոյն ժամանակ համախմբել երիտասարդները՝ մարմնակրթական եւ ըսկա ու տակաւն ծրագիրներու միջոցով, միասնաբար կառուցելու համար ուժեղ եւ կազմակերպ համայնք:

Յառաջ դէպի նոր յաղթանակներ:



Յառաջ դէպի նոր յաղթանակներ:



Հ.Մ.Ը.Մ. ԳԱՆԱՏԱՆ ԱԻԵԼԻ ՔԱՆ 400 ԱՆՎԱՄՆԵՐՈՎ ԿԱՏԱՐԵՑ ՏԱՐԵԿԱՆ ԻՐ ԲԱՆԱԿՈՒՄՆԵՐԸ

Հուրիհնա Պերպերեան
ՄՈՆԹՐԵԱԼ

Սկառուտական կեանքին մէջ իւրապատուկ տեղ կը գրաւեն բանակումները: Հաւաքական աշխատանքի լաւագոյն վայրերն են Հ.Մ.Ը.Մ-ի բանակումները: Անհամբեր սպասուած բանակումները նոր թափ ու եռանդ կու տան սկառուտական առօրեային:

Անցնող տարեշրջանին Հ.Մ.Ը.Մ. Գանատան աւելի քան 400 անդամներով կատարեց իր տարեկան բանակումները, ուր իւրաքանչիւր մասնաճիւղ բծախնդրօրէն կատարեց իր ծրագրած յայտագիրները:

ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԱՄՆԱՃԻՒՂ

Թորոնթոյի մասնաճիւղը տարեկան իր բանակումը կատարեց 28 Յունիսէն 6 Յուլիս 2024, Սէնթ Գաթրինգի Camp Wetaskiwin բանակավայրին մէջ:

Խմբակային դրուժեամբ մասնակիցները բաժնուեցան խումբերու, իսկ երէց եւ աւագ երէց եղբայրներու փաղանգը կազմեց կայմը:

Բանակող քոյրերն ու եղբայրները սորվեցան երգեր եւ կանչեր, հմուտ եւ փորձառու դասախօսներու կողմէ ստա-



ցան ազգային եւ սկառուտական դասախօսութիւններ ու գիտելիքներ:

Բանակումին արշաւները եւ պտոյտները մեծ խանդավառութիւն ստեղծեցին բանակողներու մօտ, որոնք երգերով ու կանչերով հետեւեցան արշաւներու յայտագիրին:

Գիշերային գործունէութիւնը, պահակութիւնը եւ բանակավայրի պաշտպանութիւնը ինքնավստահութեան զգացում ստեղծեցին բանակողներուն մօտ: Անոնք միասին ճաշեցին, արշաւեցին, ունկնդրեցին, սորվեցան, երգեցին եւ աւարտին միասնաբար պատրաստե-

ցին ու ներկայացուցին խարուկահանդէս:

ՄՈՆԹՐԷԱԼԻ ՄԱՄՆԱՃԻՒՂ

Հ.Մ.Ը.Մ-ի Մոնթրէալի մասնաճիւղին տարեկան բանակումը տեղի ունեցաւ 20-27 Յունիս 2024-ին, Awacamenj Mino բանակավայրին մէջ:

Մեծ թիւով մասնակից քոյրերն ու եղբայրները պատասխանատուներու հրահրութեամբ առաջին օրէն իսկ աշխուժօրէն կատարեցին իրենց վստահուած աշխատանքները:

Բանակողները բաժնուեցան խումբերու: Տարագաւորները մասնակցեցան առաւօտեան եւ երեկոյեան դրօշակի արարողութեան:

Բանակումին իւրաքանչիւր խումբ ունէր թեմա մը, որ բանակողին օգնեց աւելի զարգացնելու սկառուտական իր գիտելիքները: Ինչպէս հետախուզական նշաններ օգտագործել, կրակարաններ պատրաստել, ճաշ եփել եւ շրջապատող բնութեան մասին տեղեկութիւններ հաւաքել, օգտագործել սկառուտական կապեր եւ ժայռ մագլցիլ կամ նետ շինել, փայտեր հաւաքել եւ դրօշակի ձողեր շինել, նաեւ մտերմիկ կապեր ստեղծել զանազան տարիքի բանակողներու միջեւ:





Արշաւներու եւ պտոյտներու ընթացքին նաւապտոյտը եզակի էր իր տեսակին մէջ. սկաուտներ սորվեցան նաւարկելու օրէնքները եւ առիթը ունեցան վաւելելու ծովուն գեղեցկութիւնը:

Բանակումի աւարտին, ծնողներու ներկայութեամբ տեղի ունեցաւ խարուկահանդէս, ուր ներկաներու ծափերով ու գնահատական խօսքերով վերջ գտաւ յայտագիրը: Բանակողները բարձր տրամադրութեամբ, նորանոր գիտելիքներով եւ անմոռանալի յուշերով վերադարձան իրենց տունները:

ԼԱԻԱԼԻ ՄԱՍՆԱԾԻՂ

Հ.Մ.Ը.Մ-ի Լաւալի մասնաճիւղին տարեկան բանակումը տեղի ունեցաւ 17-19 Օգոստոս 2024-ին, kingora բանակավայրին մէջ:

Բանակումը կոչուեցաւ «Խնանսոր», իսկ խումբերը՝ արշաւանքի առաջնորդներուն անուններով:

Բանակումին ընթացքին քոյրերն ու եղբայրները ստացան ազգային եւ սկաուտական դասախօսութիւններ, կատարեցին նաեւ հետաքրքրական եւ այժմէական զրոյցներ:

Բանակողները մասնակցեցան արշաւներու, պտոյտներու, ունեցան հարցապատասխանի մրցումներ, ինչպէս նաեւ ջրախաղեր, իսկ երեկոյեան անոնք սորվեցան ազգային-յեղափոխական երգեր:

Շրջանային Ընդհանուր Խմբապետի, Շրջանային Խմբապետ-Խմբապետուհի, Շրջանային Սկաուտ-Խորհուրդի անդամներու եւ Լաւալի վարչութեան այցելութիւնը խորախուսեցին պատասխանատու քոյրերն ու եղբայրները:

Բանակումը հասած էր աւարտին: Խարուկահանդէսին յայտագիրը ամբողջութեամբ պատրաստ էր: Քոյրերն ու եղբայրները բարձր տրամադրութեամբ ներկայացուցին սկաուտական մարզանքներ, բուրգ, պար եւ ասմունք:

Տեղի ունեցաւ կարգերու եւ աստիճաններու տուչութիւն:

Բանակումը վերջ գտաւ յուզումնախառն զգացումներով եւ անմոռանալի յուշերով, ուր իւրաքանչիւր մասնակից ստացաւ Արցախի «Մամիկ-պապիկ»ը կրող յատկանշական նուէր մը:

ՀԱՐԱԻԱՅԻՆ ՕՆԹԱՐԻՈՑ՝ ՀԱՄԻԼԹԸՆԻ, ՍԷՆԹ ԳԱԹՐԻՆՉԻ, ԳԷՄՊՐԻՃԻ ՄԱՍՆԱԾԻՂԵՐ

Հարաւային Օնթարիոյ տարեկան եռօրեայ բանակումը տեղի ունեցաւ 13-16 Սեպտեմբեր 2024-ին, Camp Manitou Scout Camp բանակավայրին մէջ:

Բանակումին ընթացքին սկաուտներ կապերով կազմեցին կայմը եւ կատարեցին դերօճակի արարողութիւն:

Սկաուտները ունեցան նաեւ հետախուզական նշաններով արշաւ մը, ստացան դաստիարակչական գիտելիքներ եւ դասախօսութիւններ, ինչպէս նաեւ մասնակցեցան ինքնազարգացման հարցում-պատասխան մրցումի եւ խաղերու:

Ձեռային աշխատանքներն ու երիզի գործածութիւնը աշխուժութիւն ստեղծեցին բանակողներուն մօտ:

Բանակումի աւարտին, բանակող քոյրերն ու եղբայրները բարձր տրամադրութեամբ եւ ծնողներու ներկայութեամբ մասնակցեցան խարուկահանդէսի եւ ցտեսութիւն մաղթելով աւարտեցին բանակումին յայտագիրը:





ՄԿԻՉԲ՝ ՆՈՐ ՏԱՐԵՇՐՉԱՆԻ...

Հուրինա Պերպերեան ՄՈՆԹՐԵԱԼ

Ամառնային երկար արձակուրդէ ետք, Հ.Մ.Ը.Մ-ի Մոնթրէյալի մասնաճիւղը կարծէք անհամբեր կը սպասէր սկաուտական կեանքի վերամուտը:

Արդարեւ, 27 Սեպտեմբեր 2024-ին, Ս. Յակոբ Ազգային վարժարանի «Հաճէթեան» մարզասրահը կը խալտար Հ.Մ.Ը.Մ-ականներու, պատասխանատուներու եւ համակիրներու ներկայութեամբ:

Վերամուտի արարողութիւնը սկիզբ առաւ շեփորախումբի նուազակցութեամբ՝ եղբ. Գօգօ Թաթոյեանի ղեկավարութեամբ: Հպարտ եւ խրոխտ քայլերով տողանցող մոկլի, գայլիկ-արծուիկ, արի-արեւնոյշ, երէց-պարմանուհի եւ աւագ



երէց-պարմանուհի խումբերը բարձր տրամադրութիւն ստեղծեցին ներկաներուն մօտ:

Արարողութեան սկիզբը, բացման խօսքով հանդէս եկաւ Սկաուտ. Խորհուրդի ատենապետ եղբ. Հայկ Նշանեան: Ան բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ շեշտեց այս արարողութեան կարեւորութիւնը, ուր ամէն տարի աւանդութիւն դարձած բացման հանդիսութեամբ մեծ թիւով սկաուտներ կը

փոխանցուին գանազան խումբեր եւ կը ստանան աստիճաններ ու պաշտօններ: Ապա, եղբ. Նշանեան հրաւիրեց մասնաճիւղի խմբապետուհիներ քոյրեր Ալիսիա Աղազարեանը եւ Ճէսիքա Մարկոբեանը, որպէսզի կատարեն աստիճանատուութիւնը եւ փոխանցման արարողութիւնը:

Մասնաճիւղի խմբապետուհիները գնահատական նուէրով մը շնորհակալութիւն յայտնեցին մասնաճիւղի նախկին գործօն խմբապետներուն՝ եղբ. Ալեքսանտր Ճաքեանին եւ քոյր Տիանա Սիւֆիին՝ իրենց կատարած ազգանուէր աշխատանքին համար:

Աւարտին, մասնաճիւղի վարչութեան անդամներէն քոյր Շողիկ Ազարիկեան շնորհակարտեց փոխանցըող եւ աստիճան ստացող քոյրերն ու եղբայրները: Ան ըսաւ, որ աստիճան եւ պաշտօն ստանալը ծանր պարտաւորութիւն է, ինչ որ սկաուտին կը պարտաւորեցնէ բժախնդրօրէն աշխատելու եւ միութեան անսակարկ ծառայելու:

Արարողութիւնը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:





Հ.Մ.Ը.Մ.Ի ԱԼՄԵԼՈՅԻ ՄԱՍՆԱԾԻՂԻ ԱՆՂԱՄԱԿԱՆ 27-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Հ.Մ.Ը.Մ.Ի Ալմելոյի Մասնաճիւղի Վարչութիւն ԱԼՄԵԼՈ

Հ.Մ.Ը.Մ.Ի Ալմելոյի մասնաճիւղի անդամական 27-րդ ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ Շաբաթ, 7 Դեկտեմբեր 2024-ին, միութեան կենդրոնի «Վրէժ Զաթալեան» սրահին մէջ: Ժողովին մասնակցեցան 45 իրաւասու ձայնով քույրեր եւ եղբայրներ եւ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Ֆէտի-Խաթակ Գազանճեան: Ներկայ էր նաեւ Հ.Յ.Դ. «Արամ Մանուկեան» կոմիտէի ներկայացուցիչ եղբ. Սեւան Կորգիսեան:

Անդամական 27-րդ ընդհանուր ժողովը սկսաւ վայրկեան մը յոտնկայ լուծեամբ, ի յարգանս Հ.Մ.Ը.Մ.Ի մահացած անդամներու, հայ ազգի նահատակներու եւ Սպիտակի երկրաշարժի զոհերուն: Ապա, մասնաճիւղի ատենապետ եղբ. Մասիս Վահանեան բարի գալուստ մաղթեց



ներկաներուն եւ անցաւ ժողովի օրակարգին: Ժողովի աւարտին, ժողովականները յառաջիկայ երկամեակի վարչութիւնը ընտրեցին հետեւեալ քույր-եղբայրներէն.- Մասիս Վահանեան, Պարգեւ Նազարեան, Օհաննէս Օհաննէսեան, Գէորգ Օհանեան, Բաֆֆի Օզճեան, Ռուբէն Յակոբեան, Փաթիլ Տատուրեան, Արման Խաչիկեան եւ Յակոբ Գասպարեան:

Փակման խօսքով հանդէս եկաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Ֆէտի-Խաթակ Գազանճեան:

Եղբայրը բարձր գնահատեց ժողովի դիւանը եւ խօսքը ընթացաւարտ վարչութեան ուղղելով մատնանշեց այն հիմնական յաջողութիւնները, զորս մարմինը իրագործած է անցնող դժուար տարիներուն, մանաւանդ մեծ ներգրտում ունենալով նորակառոյց կեդրոնի շինարարական աշխատանքներուն մէջ: Այնուհետեւ, խօսքը նորընտիր վարչութեան եւ ներկաներուն ուղղելով, եղբ. Գազանճեան շեշտեց Հ.Մ.Ը.Մ.Ի դերակատարութեան կարեւորութիւնը հայապահպանման գործին մէջ, յատկապէս արեւմտեան երկիրներու մէջ, ուր յաւելեալ դժուարութիւններ կան հայ լեզուն պահելու:



Նորընտիր վարչութիւնը Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչին եւ ընդհանուր ժողովի դիւանին ներկայութեան իր դիւանը ընտրեց հետեւեալ կազմով.-

- Եղբ. Մասիս Վահանեան- ատենապետ
- Եղբ. Պարգեւ Նազարեան- ատենադպիր
- Եղբ. Օհաննէս Օհաննէսեան- գանձապահ

ԵՂԲԱՅՐ ԳՐԻԳՈՐԸ ՊԷՏՔ ՉԷ ՄԵՌՆԻ...

Գեորգ Յակոբձեան
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

«Այն, ինչ մէկ անգամ խորապէս վայելած ենք, երբեք չենք կրնար կորսնցնել: Ամէն ինչ, որ խորապէս սիրած ենք, մեր էութեան մէկ մասը կը դառնայ»:
ՅԵՆՆԻ ՔԵԼԼԵՐ

Խոր վիշտով ու նաեւ իր ապրած կեանքին համար անսասման երախտագիտութեամբ կը սգամ անգուգական միութենական եղբոր ու առաքինի ընկերոջ, ընտանեկան բարեկամի, մտաւորականի, հասարակական գործիչի, երկարամեայ ուսուցիչի եւ դաստիարակի՝ եղբ. Գրիգոր Հալլաճեանի մահը, որ պատահեցաւ Վիեննայի մէջ, 22 Սեպտեմբեր 2024-ին:

Անոր Ֆրիդրիխական մեկնումին հետեւանքով թափուր մնացած տեղը դժուար (եթէ ոչ անկարելի) պիտի ըլլայ լեցընել:

Եղբ. Գրիգորը ո՛չ միայն եկաւ ու անցաւ կեանքէն, այլեւ՝ գրկաբաց ընդունեց զայն, սիրեց կեանքը ու կեանքով ապրեցաւ, պայքարեցաւ կեանքին համար եւ անձնուրաբար ծառայեց իրեն շրջապատողներուն: Իր ապրած 79 դարուններէն 60 տարիները, ընտանեկանի կողքին, միութենական ու հանրային-ազգային գործի նուիրեց: Հակառակ իր դիմագրաւած բազմաթիւ ու վտանգաւոր հիւանդութիւններուն, ան երբեք չյանձնուեցաւ՝ պայքարեցաւ, յաղթեց, ու բազմաթիւ անգամներ նորէն հիւանդացաւ ու կրկին պայքարեցաւ յայպիսի ոգիով մը, որ կը ներշնչէր ու կը համակէր բոլոր անոնց, որոնք բախտաւորութիւնը ունեցան զինք ճանչնալու:

Պոլիս ծնաւ եղբ. Գրիգոր: Կանուխ տարիքին զրկուեցաւ իր մօրմէն: Ծարտար պատմող էր ան: Ֆիլմի պէս կը պատկերացընէ իր բոլոր պատմութիւնները ու յատկապէս մօրը մահուան կապուած անցուդարձերը, Պոլսոյ յիշատակները, իրենց ապրած շէնքը, եղբայրը, հայրը, դրացիները...: Մօրը կորուստը ծանր էր. շատերուն հոգիին պիտի ճնշէր, բայց ոչ՝ իրեն: Ան կարողացաւ կերտել իր անձը՝ տեղափոխուեցաւ Պէյրութ, ու մօրեղբոր եւ անոր տիկնոջ (որոնց միշտ երախտապարտ էր) խնամքին տակ հասակ առաւ: Ապա, երիտասարդ հասակին, 1960-ականներուն, կեանքին նոր հանգրուանը Վիեննայի մէջ բացաւ, աշակերտելով տեղւոյն Միխիթարեան միաբանութեան: Այստեղ, գիտութեան նկատմամբ իր ունեցած սէրը ծաղկեցաւ, եւ ան մինչեւ իր վերջին շունչը վերածուեցաւ քաղոք գրադարանի, մարդկային հանրագիտարանի...: Միխիթարեան միաբանութենէն նետուեցաւ գործի ասպարէզ, ամուսնացաւ, ըն-

տանիք կազմեց, իր գաւակներուն՝ Նարեկին ու Լեւոնին թոռները գրկեց, անդադար աշխատեցաւ, ու վերջին 30 տարիներուն, իբրեւ պարտաճանաչ ու գիտակից հաշուապահ, ասպարէզ կերտեց:

Ան ո՛չ միայն կարգացած էր, այլեւ՝ գիտուն էր, զարգացած էր, ժամանակակից էր, արհեստագիտութեան մօտ, խոհեմ էր ու փորձառու: Միշտ կը ձգտէր ընդլայնել իր գիտելիքները, թարմացնել եւ զանոնք փոխանցել իր շուրջիներուն: Ամէն գրոյց, ամէն հանդիպում եղբայր Գրիգորին հետ, կը դառնար ներգործիչ ու տպաւորիչ փորձառութիւն. յիշողութիւն մը, որ կը դրոշմուի մտքիդ ու հոգիիդ մէջ:

Եղբ. Գրիգորին բնակարանը մտաւորականութեան եւ մշակոյթի թանգարան մըն է: Անոր ամենաթանկագին գանձերը՝ իր հսկայական գրադարանը, մամուլի հաւաքածոներն ու հրատարակութիւնները, գրութիւնները, արուեստի կտորներն ու արխիւները, ձեռագործները, կիթառները, արխիւային եւ ընտանեկան-միութենական նկարներն են, զորս ան կը պահպանէր սրբութեամբ: Ի՛նչ պիտի ըլլան այդ գանձերը: Այս առարկաները անոր համար նուիրական էին, իւրաքանչիւր գրքոյկ կամ գրութիւն իր առանձնայատուկ պատմութիւնը եւ կեանքի յիշատակը ունէր: Օ՛հ, ինչ խնամքով կը գուրգուրուր իր բոյսերուն, զորս անձամբ կը ցանէր ու կ'աճեցնէր: Անկարելի էր, եղբ. Գրիգորենց այցելել եւ թանգարանային նոր արժէք մը չյայտնաբերել ու միխիթարիսթ խմիչքի ընկերակցութեամբ չնետուիլ գեղարուեստի ու բարձրորակ գրոյցներու ովկիանոսը:

Անոնք, որոնք իրեն մօտ էին, գիտէին, որ իր կեանքի մեծագոյն աջակիցը եւ անսասման սիրոյ աղբիւրը իր նրբագեղ ու ազնուափայլ տիկինը՝ Մարգարիտն էր: Մարգարիտ, իրական գոհար մը, բառացիօրէն շատ բաներ զոհեց եղբ. Գրիգորին համար ու դարձաւ օրինակելի կողակից մը, սիրոյ ու նուիրումի խոր գագացումով: Ան իր քաղցր ժպիտով ու քնքոյշ ձայնով միշտ եղբ. Գրիգորին կողքին էր, անոր հաւատարիմ ուղղեկիցը՝ սիրալիր ու քաջալերող ամէն փորձութեան մէջ: Եւ երբ տառապանք կամ մենութիւն ըլլար, եղբ. Գրիգորը միշտ կը նշէր, թէ ինչքա՛ն ուրախ է, ինչքա՛ն հպարտ՝ իր կողքին ունենալով Մարգարիտը, որ իր կեանքը լիարժէք ու յատկանշական կը դարձնէր:

Թէեւ ան տարիքով մեզմէ շատ աւելի մեծ էր, սակայն երբեք չզգացինք տարիքի տարբերութիւնը: Իր ոգին, միտքը եւ տրամադրութիւնը միշտ երիտասարդ էին՝ նոյնիսկ մեզմէ



աւելի երիտասարդ: Ան խրախուսող էր, հիանալի սուր հիւմորի զգացումով օժտուած, կատակասէր, կարեկցող, հասկցող, բայց միաժամանակ՝ խստապահանջ ու կարգապահ, օրինակելի եղբայր: Ո՛չ մէկ ժամանակ իր տարիքի մեծութիւնը չարաշահեց տեսակէտը պարտադրելու համար: Ան յաճախ կը տպաւորէր մեզ իր լայնախոս մտածելակերպով, որոշումներով, պատասխանատուութեամբ գիտակցութեամբ ու մանաւանդ՝ դիմացկոտութեամբ: Տարիքի տարբերութիւնը չէինք զգար, որովհետեւ ան իր ոգիին մէջ նորաստեղծ էր եւ կենարար...:



Կեանքի ու բնութեան հանդէպ եղբ. Գրիգորին ունեցած սէրը վարակիչ էր: Ան բացառիկ հմտութիւնը ունէր ամէնէն մանր ու պարզ հաճոյքները տեսնելու, բնութիւնը զգալու, յատկութիւն մը՝ սովորական պահերը արտասովորի վերածելու: Թէ՛ լուռ սուրճի պահ մը, Թէ՛ Աւստրիոյ գեղատեսիլ բնութեան գիրկը, այգիներուն, լճափներուն կամ հոյրիկեններուն (գինետներուն) մէջ, եւ թէ՛ աւելի մեծ հաւաքներու ընթացքին, ան միշտ ջերմութիւն կը ճառագայթէր, բնութիւնը կը գովերգէր, մեծն ու փոքրը կը յարգէր եւ իր հարուստ գիտելիքով, խորթափանջ քննարկումներու դուռ կը բանար կամ ուրախութիւն կը ստեղծէր:

Վիեննայի հայ համայնքին ծառայելը եղբ. Գրիգորին համար ո՛չ միայն պարտականութիւն էր, այլեւ՝ կոչում եւ առաքելութիւն: Ան հիմնադիրներէն էր Վիեննայի շաբաթօրեայ Յովհաննէս Ծիրագ դպրոցին, որուն առաջին տնօրէնը եղած էր: Խումբ մը տղոց հետ ան հիմնած եւ արթուն պահակը դարձած է Հ.Մ.Ը.Մ.ի Վիեննայի մասնաճիւղին: Նոյնիսկ երբ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը չըլտան մը կաղացած է, ան եղունգներով կառչած մնացած է ակումբը բաց պահելու որոշումին...«Երեք-չորս հոգիով տասը տարի ակումբը բաց պահեցինք, մինչեւ որ ետ վերաշխուժացաւ ու աւելի քան հարիւր անդամի հասանք», կը վկայէր ան: Հինգ տասնամեակ շարունակ ան անձնուիրաբար ծառայեց, անցաւ Խորհրդային Հայաստան-Սփիւռք տագնապալի տարիներու եւ Եւրոպայի մէջ ընթացող Հայ Դատի պայքարի փոթորիկներէն, կառուցեց յարաբերութիւններ, ստեղծեց կամուրջներ, կերտեց սերունդներ:

Աւելի պարզ հայերէն եւ հայոց պատմութիւն դասաւանդեց, բազմաթիւ նիւթերու շուրջ դասախօսութիւններ ներկայացուց, դասընթացներ, կուսակցական հետեւողական ու կազմակերպ կեանք վարեց, Հայ Դատի խորհրդաժողովներ ու սեմինարներ իրագործեց, բանակումներ, պարախումբեր, պտոյտներ ու դաշտագնացութիւններ կազմակերպեց: Աւելին, Արցախեան առաջին պատերազմի տարիներուն, գերմանախօս մամուլի բոլոր հրատարակութիւնները հաւաքագրեց, երկրաշարժի եւ իրերայաջորդ պատերազմներու եւ տագնապներու ժամանակ համայնքը զօրաշարժի ենթարկեց, աւստրիական հասարակութեան մօտ հայութեան եւ Հայաստանի շուրջ իրագեկութեան մակարդակը բարձրացուց, հայրենիքի օժանդակութեան հասաւ եւ այս բոլորը առաջնորդելու եւ ղեկավարելու նպաստեց:

Վերջին տասնամեակին եղբ. Գրիգոր մեծ ջանք ու ճիգ թափեց Միջին Արեւելքէն ու յատկապէս սուրիական տագնապէն Վիեննա ապաստանած հայորդիներուն համար: Բարեացակամ ու ազնիւ վերաբերում ցուցաբերեց նոր տեղափոխուածներուն հանդէպ, անոնց համարկման, աւստրիական կեանքին ընտելանալու համար ծրագիրներ իրագործեց, օգնեց բոլորին, յաճախ իր կարողութիւններէն աւելի:

Ան արդարօրէն արժանացաւ Վիեննայի հայ համայնքի սիրոյն եւ գնահատանքին, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ.ի «Ծառայութեան» շքանշանին: Իր մահուան առիթով, Աւստրա-Հայկական Մշակութային Ընկերութեան նախագահ դոկտ. Յարթունեանը հետեւալը գրեց. «Հանգուցեալը համայնքիս սիրուած եւ յարգուած հայրենակիցներէն մէկն էր. ազնիւ հայրենակից, մտաւորական, գիտակից հայրենասէր, ազգային արժէքներու աւանդապահ, պարտաճանաչ, օգնելու միշտ պատրաստակամ, լաւատեղեակ հայ գրականութեան ու հայ ժողովուրդի պատմութեան: Իր մահով Աւստրիոյ հայութիւնը կորսնցուց համայնքի վերջին կէս դարու պատմութեան լաւատեղեակ անդամներէն մէկը»: Հակառակ այս իրաւացի վկայութեան, դժբախտաբար, եղբ. Գրիգորին վաստակը համահայկական կամ համասփիւռքեան արժանի ուշադրութեան եւ գնահատանքին չարժանացաւ...: Արցախեան վերջին ողբերգութիւնները շատ ծանր ազդեցին վրան, չէր ուզեր խօսիլ, կը հեկեկար, երբ մեր վերջին օրերու ողբալի վիճակին մասին հեռաձայնով կը խօսէինք...: Վիեննայի հայ համայնքին հօգուտ անսասան սիւնն էր, մոհիկանը, յոյսի նշոյլը: Մէկ խօսքով՝ անոր ժառանգութիւնը անգին է, իսկ իրագործածը՝ սերունդներուն կտակ:

«Եղբ. Գրիգորին նմանները պէտք չէ մեռնին», կ'ըսէինք ես ու տիկինս՝ Անին, ամէն անգամ որ լիցքաւորուած ու բարձր տրամադրութեամբ կը բաժնուէինք իրմէ: Գիտէինք, որ հիւանդութիւնը անողոք է, բայց կը հաւատայինք իր դիմացկոտութեան: Անոր կորուստը ցաւալի է, սակայն միտքարութիւն կը գտնենք այն հարուստ յիշատակներուն մէջ, որոնք միասին ապրեցանք ու վայելեցինք անցնող տասնամեակին. անկեղծ ու անշահախնդիր յարաբերութիւն մշակեցինք հետը, զիրար լսեցինք եւ իրարու գօտեպնդեցինք, անթիւ դասեր, խորհուրդներ ու կեանքի պատգամներ քաղեցինք, պատգամներ, զորս միշտ պիտի յիշենք:

Հանգի՛ր խաղաղութեամբ, սիրելի եղբ. Գրիգոր: Հետեւելով նախաբանի խօսքին, որովհետեւ ես ու իմ ընտանիքս բազմիցս վայելած ու սիրած ենք քեզ, դուն մեր էութեան մէկ մասը կը դառնաս: Հետեւաբար, մինչ քու անցաւ մարմինդ այսօր բնութեան հետ կ'ընդելուզուի, մեր միասին անցած ճանապարհն ու փորձառութիւնը՝ մեր էութեան:

ՀՄԿԱՆ ԽՈՆԱՐՀԵՑԱԽ (ԵՂԲ. ՊՕՂՈՍ ՂՈՒԿԱՍԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ)

Սերոք Սահակեան ԵՐՈՒՍԱՂԵՍ

Բ ոլորիս կողմէ՝ ճանչցուած Եաֆայի Պօղոսն ալ (1936-2024) կեանքէն բաժնուեցաւ ու գնաց:

Գնաց, ու ա՛լ չունինք Եաֆայի Պօղոսը, որուն կարելի էր վստահիլ ամէն ինչ, իբրեւ իր շրջանի անկոտորում գրաստ:

Գնաց, ու ա՛լ չունինք այն երիտասարդ ալեհերը, որ աւելի քան յիսուն տարի թէ՛ Հ.Մ.Ը.Մ.ի Եաֆայի, թէ՛ Եաֆայի հայ համայնքի եւ թէ՛ մինչեւ իսկ Եաֆայի քրիստոնեայ փոքրամասնութիւններուն ամէնէն կեդրոնական դէմքն էր ու ալ չկայ:

Եւ իրօք, կարծես Եաֆան կը ճանչցուէր եղբայր Պօղոսով: Որեւէ բնիկ Եաֆացիի եթէ Եաֆան յիշեցնէիր, ան անպայման Եաֆան պիտի յիշէր իր առաջնակարգ ֆուլթպոլիստ Պօղոսով:

Վերջապէս, եղբայր Պօղոսը մեզի համար ամբողջ հայ Եաֆան էր ու օտարներու համար ընդհանրապէս Պէյրութը յիշեցնող, հին ծովափնեայ անոյշ յոգնած՝ նաւահանգիստին փարոսը:

Եղբայր Պօղոսին մօտէն ճանչցայ 1985-ին, թէեւ իր անունին ծանօթ էի իսրայէլեան պատկերասփիւռի մարզական յայտագիրներէն, ուր անպայման ամէն շաբաթ եղբայր Պօղոսը կը յիշուէր իբրեւ «Մաքապի» Եաֆայի առաջնակարգ ֆուլթպոլիստ ու կարծեմ մինչեւ իսկ մարզիչ:



Զինք ճանչցայ ճիշդ այն օրերուն, երբ կարգ մը եղբայրներու հետ ձեռնարկեցինք Եաֆայի Հ.Մ.Ը.Մ.ի Հայկաչէն մասնաճիւղի հիմնադրութեան աշխատանքին:

Ճանչցայ մարդ մը, որ մինչեւ մահ մնաց Եաֆայի մասնաճիւղին ամէնէն երէց, բայց եւ ամէնէն երիտասարդ ու գործօն անդամը:

Եւ, իրօք, չկար Եաֆայի շրջանին վերաբերող որեւէ աշխատանք, ըլլար միութենական, ազգային, մինչեւ իսկ եկեղեցական, ու սխալած պիտի չըլլամ եթէ ըսեմ, մինչեւ իսկ կուսակցական, ուր եղբայր Պօղոսը գործի գլուխ չգտնէիր:

Չկար հայկական որեւէ իրադարձութիւն, ուր եղբայր Պօղոսը իր ամբողջ ընտանիքով՝ մինչեւ թոռ-թոռանով ներկայութիւն չըլլար:

Չկար որեւէ ուրախութիւն թէ նուազ ուրախութիւն, ուր եղբայր Պօղոսը սրահին դռները բացողը, ապա բոլորին ճամբելէ ետք, լոյսերը շիջեցնողն ու դռները փակողը չըլլար:

Իրապէս, տեսակ մը առասպել էր: Ինծի համար հազար իմաստով ընկեր Պօղոս Ղուկասեան: Համակ նուիրումի, համակ աշխատանքի բացառիկ տիպար:

Հայուն ամէնէն համեստ ուրախութեամբ երջանկացող ու հայուն ցաւով տառապող հագուազիւտ կրակէ մարդ մը:

Հայուն անկատար երազներով տանջուող, բայց անոր ճամբէն երբեք չհրաժարող, անվեհեր զինուոր մը:

Վերջերս էր, Հ.Մ.Ը.Մ.ի Երուսաղէմի վարչութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան մէկ անդամին ձեռամբ պարգեւատրեց ալեհեր հսկան:

Ի՛նչ պարգեւատրում, ի՛նչ բան:

Եղբայր Պօղոսը ինք պարգեւն էր իր համայնքին, իր ընտանիքին, ազգին ու մարդկութեան:

Յաւակցութիւններս բոլոր սգակիրներուն եւ ընտանեկան պարագաներուն:

Հողը թեթեւ գայ վրադ եղբայր Պօղոս:


Յտեսութիւն:

3 Սեպտեմբեր 2021.
Եղբ. Պօղոս Ղուկասեան
պարգեւատրման օրը շրջապատուած
Շ.Ս.Ը.Մ.ական եղբայրներով:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՒ ՄԵԿՈՒՄԻ ՇՐՋԱՆՆԵՐՈՒ ԱՏԵՆԱՊԵՏՆԵՐՈՒ ԱՌՅԱՆՑ ԵՐՐՈՐԴ ԺՈՂՈՎԸ

Շաբաթ, 26 Յոկտեմբեր 2024-ի երեկոյեան տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Շրջանային եւ Մեկուսի շրջաններու ատենապետներու առցանց երրորդ ժողովը, կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան եւ մասնակցութեամբ 16 շրջաններու ատենապետներու:



Ժողովին երկրորդ մասով, ներկայ ատենապետները նախապէս յղուած փառուրդ փոյնք հարցարաններու ծամբով ներկայացուցին իրենց շրջաններու ընդհանուր իրավիճակը՝ Պատգամաւորական վերջին ընդհանուր ժողովէն (Յոկտեմբեր 2023) մինչեւ օրս երկարած ժամանակաշրջանին: Անոնք

Առցանց ժողովին բացումը կատարեց Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Խաչերեան: Եղբայրը նախ հակիրճ բացատրութիւն մը տուաւ Լիբանանի մէջ տիրող կացութեան մասին, ապա հրաւիրեց Կեդրոնական Վարչութեան անդամներ՝ եղբայրներ Վիգէն Աւագեանը, Միւր Դաւիթեանը, Վիգէն Աբէլեանը եւ քոյր Սանտրա Վարդանեանը՝ ամփոփ գեկուցումներ տալու քարոզչական առցանց Բ. համագումարին, Հ.Մ.Ը.Մ.Ի նաւապտոյտին (13-20 Յուլիս 2026), նուիրահաւաքի աշխատանքներուն եւ Արցախի երեխաներուն համար Հ.Մ.Ը.Մ.Ի կատարած բակային ծամբարներուն մասին:

յատուկ կերպով անդրադարձան իրենց շրջաններու իրագործումներուն, Արցախի ի նպաստ նախաձեռնութիւններուն, սկաուտական, մարզական, քարոզչական եւ երիտասարդական մարզերու աշխատանքներուն եւ դիմագրաւած գլխաւոր դժուարութիւններուն:

Չորս ժամուան բաւական երկար ու սպառիչ ժողով մը ետք, ներկաները իրարմէ բաժնուեցան 15-17 Նոյեմբերին, միջ-դիւանական ԺԱ. խորհրդաժողովին, Երեւանի մէջ տեսնուելու խոստումով եւ ժողովին ներկայացուած հարցերը այնտեղ խոր կերպով քննարկելու որոշումով:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՍԹՈՔՀՈՒՄԻ ՆՈՐ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Շաբաթ, 9 Նոյեմբեր 2024-ին, Հ.Մ.Ը.Մ.Ի Սթոքհոլմի Մեկուսի շրջանը գումարեց անդամական իր 9-րդ Ընդհանուր Ժողովը եւ ընտրեց ինը հոգիներ իր նոր վարչութիւնը՝ բաղկացած հետեւեալներէն.-

Եղբ. Արիս Սեյիմ (ատենապետ), քոյր Մարալ Մարգիսեան (ատենադպիր), քոյր Սալբի Պետրոսեան (գանձապահ), եղբ. Յովիկ Մանճիկեան, քոյր Արշօ Պէքմէզճեան, եղբ. Յովիկ Մղըշեան, քոյր Նուշիկ Միրզոյեան, եղբ. Եղիա Տիշոյեան եւ քոյր Տաթև Մալխասեան:



Խմբագիր: Վիգէն Աւագեան (vicken.avakian@homenetmen.org)
Խմբագրական կազմ: Սեւան Նազարեան, Սիլվիա Օհանեան, Ծանթ ժամկոչեան, Բաֆֆի Սիլահեան, Հուրինա Պէրպէրեան, Վարդուկ Ֆրոնզլեան եւ Սիլվա Սարգսեան:
Վարչական կազմ: Աքօ Մոսիկեան, Սիլվա Սաղըրեան, Հրայր Սեթոյեան, Կարօ Ապաճեան, Տիրան Ծախիկեան, Հէրի Զաքարեան, Յոյիկէ Քէշիշեան:
Էջադրում եւ ընդհանուր ձեւաւորում: Գօգօ Հաւանճեան, **Կողքի պատրաստութիւն:** Flow / Hrant Unicess, **Տպագրութեան պատրաստութիւն:** Photogravure Paklayan, **Տպագրութիւն:** Համազգայինի «Վահէ Սէթեան» տպարան, Պէրթոթ, Լիբանան:
Բաժանորդագրութիւն: «Մարզիկ» կը հասնի աշխարհի 25 երկիրներու բաժանորդներու: Տարեկան բաժանորդագրութեան սակ ձեռնարկէ՝ Լիբանան 200,000 լ.ն. Միջին Արեւելեան եւ Եւրոպական երկիրներ 65 \$, Մ. Նահանգներ եւ Աւստրալիա 75 \$: Լիբանանի մէջ թերթին հատաւթածառի սակն է 50,000 լ.ն.: **Ցրում:** «Մարզիկ»ի ցրումը Լիբանանի մէջ կը կատարուի յատուկ ցրուիչով: Թերթը կարելի է ստանալ նաեւ «Համազգային»ի գրախանութէն: Լիբանանէն դուրս թերթը կը ստացուի «Liban post»-ի միջոցով:



HOMENETMEN RIVER CRUISE 2026



7 NIGHT EUROPEAN RIVER CRUISE July 13 - 20, 2026

EARLY BIRD SPECIAL

You have until January 15, 2025 to cancel and receive a full refund

Our website is LIVE NOW!

SPACE IS LIMITED
BOOK TODAY AND SHARE THE LINK
WITH YOUR FRIENDS AND FAMILY!

cruise.homenetmen.org



BY  AMAWATERWAYS®